Չալլէի գիտուրն արդէն մեզանից հեռանալով, իր օրական հինգ միլիոն կիլոմետր ահռելի արագութիւնը 32—34 տարի յետոյ մինչև 80000 կիլոմետրի պիտի իջնի, և այդ ժամանակ թափառաշրջիկ աստղը արևից հինգ միլիարդ կիլոմետր հեռու պիտի գտնուի։ Այս անհերևակայելի հեռաւորութիւնը թող ձեզ չսարսափեցնէ, ընթերցող, միշտ մտածեցէք, թէ մեր արեգակնային դրութեան՝ այն է, մեր տան սահմանները

մէջ ենք։ Եւ եթէ կամենայինք գնալ մինչև ամենամօտիկ աստղը, այն ժամանակ կարիք պիտի լինէր հեռանալ արևից 230,000 անգամ. արևի լոյսը 10 վայրկեանից չուտ է հասնում մեզ, այն ինչ ամենամօտիկ աստղի լոյսը 3 տ և կէս տարուայ ընթացքում հազիւ է մեզ հասնում։

Ահա Այծը, որի լոյսը 70 տարի ճանապարհորդում է, որ մեզ է հասնում։ Եւ մտածէլ, թէ սրանք մօտաւորապէս աստղեր են, մարդու երևակայութիւնը սառչում է։

Փոքրիկ ու չնչին մարդ և անհուն, հրաշալի տեղերը. բայց և այնպէս մարդը կարողանում է նրան ըմբռնել։

Ահա ինչու միշտ ուելի գիտակցօրէն և հայցմունքով պիտի դոչել.

«Երկինք պատմեն փառս Աստուծոյ»։

Մ. Նալբանդեան

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՌՈՒՍԱԿԱՆ ՉԱՓ ԵՒ ԿՇԻՌ

Մակերեսոյթի

Քառակուսի մղոն	ունի	49	քառ. վերստ
» վերստը	»	250,000	» սաժէն
» սաժէնը	»	9	» արշին
» արշինը	»	256	» վերշոկ
» սաժէնը	»	49	» ֆունտ
» ֆունտը	»	144	» դիւյմ
Դեսեատինը ունի 40. 60		2400	» սաժէն

Բովանդակութեան չափեր

Խորանարդ մղոն	ունի	343	խոր. վերստ
» վերստն	»	125	» սաժէն
» սաժէնն	»	27	» արշ.
» սաժէնն	»	343	» ֆունտ
» արշինն	»	4096	» վերշ.
» ֆունտը	»	1728	» դիւյմ
» արշինն	»	21925	» դիւյմ
» սաժէնն	»	110592	» վ.=592704

խոր. դիւյմ. 1 միլիոն խոր. հարիւրերորդ սաժէնին (1 сот.)

Ընդերկնեերի չափեր

Լաստը ունի	. . . .	12 չեավերտ
Չեավերտը	. . . .	8 չեավերիկ
Չեավերիկը	. . . .	8 զարնեց

Հեղուկնեերի չափեր

Տակառն ունի	. . .	40 վեդրօ
Վեդրօն »	. . .	10 շաոֆ
Վեդրօն »	. . .	80 դեվ. ֆրին
Շաոֆը կամ կրուժկէն ունի	.	2 շիշ. (бут.)

Դեղատան չափեր

Դրվանքան ունի 84 մխալ	. .	12 ունցիա
Ունցիան »	. . . .	8 դրախմ
Դրախման »	. . . .	3 սկրուպ
Սկրուպուլը »	. . . .	20 գրան

Ծանրութեան չափեր

Բերկովեցն ունի	. . .	10 փութ
Փութն	. . . .	40 գրվան.
Դրվանքան	. . . .	96 մխալ
Լաստը	. . . .	3 մխալ
Մխալը	. . . .	96 գոլիա

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՉԱՓԵՐ

Դրամների արժէքը

Դրամների արժէքը	Ռուս.		Ֆրանս.		Գերմ.	
	Ր.	Կ.	Ֆր	Սն.	Մկ	Պֆ.
Ռուսական բուբլին	1	—	2	66	2	16
Անգլ. ֆունտ. ստեռլ.	9	46	25	22	20	43
Ֆրանս ֆրանկը	—	37	1	—	—	81
Գերման. մարկը	—	47	1	25	1	—
Աւստ.-Ունգ. կրոնը	—	39	1	5	—	85
Թուրք. պիաստրը*)	—	9	—	23	—	18
Պարսկական 1 թումանը 10 նոր դրան — 100 սհնար — 1000 փա—10,000 դին	3	32	8	83	7	17
Պարս. 1 նոր դրանը	—	33	—	88	—	71
Պարս. 1 սհնարը	—	3	—	7	—	7
Ամերիկ. դօլլարը	1	94	5	18	4	19
Եւրոպական իչնը	—	97	2	48	2	9

*) Պիաստրը հաւասար է 1 դուրուչի։

ԾԱՆՐԱԹԱԿԱՆ ՉԱՓԵՐ

Վերածած ռուսական չափերի

	Փութ	Ծրան.	Ղարա	Ասկով
Անգլիական				
Տօննան ,30 ցենտ.՝ ունի	62	1	10	64
Ցենտները ,4 կվարտ.՝ »	3	4	6	32
Կվարտերը ,28 գրվ՝ »		31	1	32
Գրվանքան ,16 ունց.՝ »		1	10	32
Ունցիան ,16 դրախմ՝ »			6	62
Լաստը ,2 տօնն՝ »	124	2	21	32
Ֆրանսիական				
Կիլոգրամը ,10 հեկ.՝ ունի		2	42	41 2/3
Հեկտոգրամ ,10 դեկ՝ »			23	42 1/3
Դեկագրամ. ,10 գրամ.՝ »			2	33 1/3
Գրամը ,10 դեցիգր.՝ »				22 1/2
Ցենտները ,100 կիլ.՝ »	6	3	17	64
Պրուսական				
Գրվանքան ,30 լոտ՝ ունի		1	12	9
Ցենտները ,10 գրվ՝ »	3	4	93	84
Տանկական				
Պանթմարը ,44 օք.՝ ունի	3	17	60	64 1/2
Օքքան ,400 դրահմ.՝ »		3	3	27 1/2

Ե Ր Կ Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն Շ Ա Փ Յ Ր
Վերածած ստուգական չափերի

Չափ	Ստանդ.	Թամ.	Ընդհ.	Դիհր.	Փութ	Ֆունտ
Հշխատավարձական մուծք ունեք	7			1		
Վերատ »		500				
Մաժկեր »			3			
Ալրեր »					7	
Ընշեր »				16		
Փութը »						28
»						12
Մրտնը (1760 մարդ) ունի						
Եարդը (3 Ֆունտ և 6 դիւյմ)	1	256	1	8		
Փութը (12 դիւյմ)				6_{48}		
Վկաթաչքերը (4 նեղ)						9
Շ ն ո ւ						2_{25}

Չափ	Ստանդ.	Թամ.	Ընդհ.	Դիհր.	Փութ	Ֆունտ	Դրամ
Ֆրանսիական Միլիոնատը (10 միլիոնատ) ունի	9	198	2				
Միլիոնատը (10 հեկտար) »		468	2	1_8			
Հեկտարատը (10 դեկտար.) »		46	2	9_6			
Դեկտարատը (10 արար) »		4	2_{60}				
Արար (10 դեցիարար) »			1	6_5			
Դեցիարար (10 սանտիար.) »				2_{25}			
Սանտիարատը (10 միլիար) »				0_{225}			
Ցամքային Գիծը ունի			15_5				
Ջնտանին ունի				14_{688}			
Գրամատիկան Մրտնը, 200 բառ ունի	6	448					
Լսվատը »				15			
Բառատը »					12		
Փութատը »					2		
Կանդուն »						12	
						5_5	

ՀԱՐԿԵՐ ԵՒ ՏՈՒՐՔԵՐ

Բնակարանի հարկ

Բոլոր քաղաքները և գիւղաքաղաքները քա ժանուած են 5 կարգի:

II կարգ.—Թիֆլիս, Բագու, Բաթում:

III կարգ.—Մնացած բոլոր քաղաքները, որտեղ քաղաքային ինքնավարութիւն է մտցրած:

IV կարգ.—Ալէքսանդրապօլ, Ախալցխա, Ամասիա, Գրօզնի, Դերբենտ, Եյսկ, Մայկոպ, Զուգի, Պետրովօրսկ, Թէմիր Խան-Զուրայ:

V կարգ.—Ախալցխա, Ախալքալակ, Դօբրի, Լէնքօրան, Ղզլար, Ղուբա, Մօզդօկ, Նախիչևան, Նուխի, Ջամախի, Թելաւ, Ծղնախ:

Բնակարանների հարկը վերցւում է նրանց քրեհի համեմատ:

Բնակարանների հարկը որոշելու համար ամեն մի քաղաքում կազմւում է առանձին կամիսիա, որին նախագահում է հարկային տեսուչը (податной инспекторъ), անդամները ընտրւում են քաղաքի ինքնաէրներից:

Տարին մի անգամ, ամեն մի անտէրը պարտաւոր է մինչև յունւարի 7 ը տեղեկութիւն տալ այդ կամիսիային իր տան, բնակարանների և ստացած քրեհի մասին: Եթէ այս տեղեկութիւնները նա իր ժամանակին չտայ, կամ ձէ կեղծէ, նա կենթարկւի տուգանքի՝ ուշացնելու դէպքում

50 րուբլի, կեղծելիս՝ մինչև 300 րուբլի:

Վերոյիշեալ կամիսիան մինչև մարտի 7 բոլոր բնակարանատէրերին յայտարարութիւններ է ուղարկում հարկերի քանակութեան մասին: Դրժողները մի ամսւայ ընթացքում կարող են բողոքել «նահանգական վարչութեան»:

Բնակարանները հարկի չեն ենթարկւում.—1) Այն բոլոր տները, որտեղ մարդիկ չեն ապրում, ինչպէս նաև բոլոր պղծոցական, պետական, հասարակական հիւանդանոցները, վճռանոցների համար յատկացրած շինութիւնները: 2) Վանքերը, տաճարները, թատրոնները, տպարանները, գրադարանները, ընթերցարանները, դիւանատունները (բացի օֆիցերների բնակարաններից), բանւորների բնակարանները գործարանին կից, բարեգործական նպատակների ծառայող տները:

Դատաստանական արիւստաւնեի վարձատրութեան չափը

1) Ճանուցագրեր (повѣстка) և կամ այլ թղթեր ըստ պատկանելոյն յանձնելու համար 200 րուբլիանոց պահանջատարից—25 կոպ., մինչև 5000 ր. 50 կոպէկ, 5000 ր. աւելին 1 րուբլի,

երբ գումարը չ՚անցնի չէ—50 կոպէկ։

2) Ջարժական կալքերը ցուցակագրելու և գնահատելու համար 25 ր. գումարից 25 կոպ.։ 50 ր. գումարից՝ 50 կոպէկ. 100 ր.—1 ր., 200-ից—2 ր., 300 ից—3 ր.,-400 ից—4 ր, 500-ից 5 ր., իսկ 500 ր. մինչև 5000 ր.—5 ր. մնացած գումարին իւրաքանչիւր 100 ր.—50 կ։

3) Ցուցակագրած առարկաները կնքելու և տարադրելու համար մինչև 50 կտորը իւրաքանչիւր կտորից 5 կոպէկ, մինչև 100 կտ.—4 կ. 100-ից աւելին 3-ական կոպ.։

4) Ընչաքաղց կալքերը ցուցակագրելու մինչև 500 ր.—2 ր. 50 կոպ, 500—1000 ր.—5 րուբ, 1000 ր. 2000—6 ր., 2—3000 ր.—7 ր., 3—4000 ր.—8 ր., 4—5000 ր.—9 ր., 5000-ից աւելին 9 ր և էլի 50 կոպ. իւրաքանչիւր 1000 ր. համար, բացի առաջին 5000-ից։

Սղահատ հատատարմատարների վարձատրութեան չափը

1) Քաղաքացիական գործերը երկու ինստանցիաներում վարելու համար 500—2000 ր. գումարի համար 10%, 2000—5000 ր. գումարին առաջին 2000-ից 200 ր, 8% մնացածից։ 5000—25,000 ր. գումարից 400 ր. առաջին 5000-ից, և 4% մնացածից։ 25,000—75,000 ր. գումարից 1740 ր. առաջին 50,000 ից 1% և մնացածից 75,000-ից աւելին՝ 1990 րուբլի և մնացած գումարից էլ ½% իւրաքանչիւր րուբլուց.

Առաջին ինստանցիայում գործը վարելու համար հատատարմատարը ստանում է վերոյիշեալ վարձատրութեան ⅔ը, իսկ երկրորդ ինստանցիայի համար ⅓ը։

Երբ վարած գործի գումարը որոշ չէ, դատարանն ինքն է որոշում վարձատրութեան չափը 50—1200 րուբլի։

Երբ գործը հեշտութեամբ է վերջանում կամ թէ առանց օրինական պատճառի հետաձգում է հատատարմատարը, նա իրաւունք ունի գործով իր հատանելիքը պահանջելու։

Եթէ գործը պատրում է, նա իրաւունք ունի ստանալու միայն վարձատրութեան ¼-ը, բայց այդ ¼ առաջին ինստանցիայի համար չի կարող 200 ր. աւելի լինել, իսկ երկրորդին 100-ից։

Նօտարների վարձատրութիւնը

1) Նօտարական արձանագրութիւններ (актъ) կազմելու համար պէտք է վճարել մինչև 500 ր.

գումարը 2 ր., 501—1000 ր. 3 րուբ., իսկ 1000-ից աւելին 4 րուբլի և բացի այդ՝ 10 կ. իւրաքանչիւր 100 րուբլուն։

2) Մուրհակները վաւերացնելու և նրանց մասին բոլոր գրելու համար մինչև 500 ր.—50 կ., 500-ից աւելին՝ 1 րուբլի և 10 կոպ. իւրաքանչիւր 100 րուբլուց։

3) Պայմանագրեր վաւերացնելու համար մինչև 500 ր. 1 ր., մինչև 1000 ր. 1 ր. 50 կ., 1000 ր. աւելի գումարին 2 ր. և 10 կ. պայմանագրի գումարի իւրաքանչիւր 100 րուբլուց։

4) Պատճէնը վաւերացնելու համար առաջին թերթից 25 կ. միւս թերթերից իւրաքանչիւր 25 տողից 10 կոպէկ։

5) Մատրագրութիւնը վաւերացնելու համար 10 կոպէկ։

6) Փաստաթղթերի ներկայացման ժամանակը վաւերացնելու — 55 կոպէկ։

7) Ըրձանագրութիւններ և պայմանագրեր կազմելու համար, եթէ նրանց արժէքը որոշած չէ, պէտք է վճարել, որքան վճարում են 1000 ր. արժող արձանագրութիւն կազմելու համար։

8) Հաւատարմաթղթեր (довѣренность) և հաշուութեան թղթեր (мировая запись) և միջնորդական թղթեր (третейская запись) կազմելու կամ վաւերացնելու համար—1 թերթից 1 ր. իսկ հետևեալներից 30 տական կոպէկ։

9) Ուրիշ վաւերացումների 1-ին թերթից 50 կոպէկ, հետևեալներից՝ 20 տական կոպէկ։

10) Զանազան թղթեր նօտարական գրքերի մէջ անցկացնելու համար ամեն մի տողին 2 կ.։

11) Մէկ կողմից միւսին գրաւոր յայտարարութիւն տալու և այդ մասին առաջինին վաւերաթուղթ տալու համար պէտք է վճարել 50 կ.։

12) Նօտարին պահ տուած փաստաթղթերի (բացի դրամական) իւրաքանչիւրի համար պէտք է վճարել ամսական 25 կ, իսկ կնքուած ծրարների համար ամսական 50 կոպէկ։

13) Ըրձանագրութիւն կազմելու կամ վաւերացնելու ժամանակն իմանալու կամ այդ մասին թուղթ տանելու համար պէտք է վճարել 50 կ.։

14) Երկրորդ, երրորդ և այլ անգամ քաղուածներ (выпись) գրելու համար իւրաքանչիւր տողին 1 կոպէկ։

15) Ըրբունի գանձարանից կենսաթոշակ տացող անձնատուրութեան կենդանի լինելը վկայելու համար պէտք է վճարել տարեկան մինչև 30 ր. կենսաթոշակ տացողին 3 կ, 30—300 ր. 10 կ, 300 ից աւելին 20 կոպ.։ Մնացած այլ դէպքերում, բացի կենսաթոշակից 50 կոպէկ։

16) Նօտարիուսին իր պաշտօնասենեակից (контора) դուրս կատարած գործի համար պէտք է վարձատրել բացի գործի համար որոշուած գնից, նաև մայրաքաղաքներում—3 րուբլի, նահանգական քաղաքներում—2 ր., գաւառական քաղաքներում—1 րուբլի։

17) Նօտարիուսին քաղաքի սահմանից դուրս տանելու համար ճանապարհածախս գնալու և գալու համար պէտք է վճարել ամեն վերստին 10 կ. իսկ երկաթուղով գնալիս, պէտք է վճարել թէ գնալու և թէ գալու համար—11 կարդի տոմսակի գին։ Բացի սրանից ճանապարհին կորցրած ժամանակի համար պէտք է վճարել մայրաքաղաքներից 5 ր., նահանգական քաղաքներից 3 րուբ., մնացած այլ տեղերից 2 ր, եթէ միայն գնալ գալը մի ամբողջ օրւանից (сутка) աւելի չէ տեւել, հակառակ դէպքում ամեն օրւայ համար (ոչ ամբողջ օրն էլ օր է հաշււում) վերոյիշեալ գնի համեմատ պէտք է վարձատրել։

18) Նօտարիուսը կարող է հէնց սկզբից իրեն հասանելիք վարձը պահանջել, երբ նրան հրաւիրում են պաշտօնասենեակից դուրս գործեր կատարելու։

ԴՐՈՇՄԱՏՈՒՐ

(Гербовый сборъ)

Դրոշմատուրքը լինում է երկու տեսակ—հատարակ և համեմատական։ Հատարակ դրոշմատուրքի համար գործածւում են 5, 10, 15, 40, 60 կոպէկանոց և 1 րուբլիանոց մարկաներ, իսկ դրոշմաթղթեր (гербовыя бумаги) 60 կ. և 1 ր. արժողութեամբ։

Համեմատական դրոշմատուրքը լինում է մուրհակային և վաւերագրի կամ կապակցութեան։ Վերջինս նայած երկու տեսակ է.—բարձր արժէքի և հատարակ։ Մուրհակի թղթի համար իրաքանչիւր 100 ր. պահանջւում է 15 կոպ, իսկ բարձր կապակցութեան թղթերի համար՝ 100–1000 ր. թղթի համար 50 կ., 1000—10000 և աւելի գումարին 5 ր., պակաս հարիւրներն ու հազարները լրիւ են հաշւի առնւում. սոսր տեսակից իրաքանչիւր 100—1000 րուբլի գումարին առնւում է 5 կոպէկ, 1000–10000 ր. գումարին 50 կ., գարձեալ պակաս հարիւրներն ու հազարները լրիւ են հաշւում։

Բարձր տեսակի կապակցութեան տուրքի ենթարկւում են ա) կալւածական այն կապակցութիւնները, որոնք վերաբերում են անշարժ կալւածք-

ներ գնելու, ուրելու, գրաւ դնելու, քրեհելու և այլն. բ) Այն պայմանագրերը, որոնք վերաբերում են ընկերութիւններ կազմակերպելու, գործեր կապալով վերցնելու, պանագան իրեր մատակարարելու և այլն. գ) Օբլիկացիաները, պայերը, ակցիաները, գրաւթղթերը դ) Ապահովութեան պոլիսներ և անգործադրները, որոնց ապահովութեան գումարն 300 ր բարձր է։

Usorից տեսակի համարւում են ա) այն կապակցութիւնները, որոնք վերաբերում են վաճառականական գործողութիւնների, ինչպէս տոքրանք գնելու, ծախելու, առևտրական նամակներ, հաշիւներ, հետադրներ և այլն. բ) Իրեք վաճառելու սկզբնական պայմաններ (запродажа). գ) Պայմանաթղթի վրայ արած մակագրութիւնը, որով յանձնւում է ուրիշին։

Դրոշմանիշ թղթի փոխարէն կարելի է հասարակ թուղթ գործածել, սակայն գումարի արժէքի համաձայն վրան մարկա կպցնել։ Եթէ պայմանը կռում է նօտարը, այդ դէպքում նա անպայման պահանջւում է դրոշմանիշ թուղթ։ 20 րուբլի գումարի բնականական բնոյթ կրող պայմանները ազատ են դրոշմաուրքից։

Դրոշմաուրից ազատ են—Չինովնական վերաբերեալ թղթերը, Դատաստանական

քրէական բաժնի և բոլոր այն գործերը, որոնք վերջանում են քաղաքական հաշտարար դատաւորների, գեմսկի նահապետների, նահանգական դատարանի գաւառական անդամների ձեռքով։ Խնամակալական (опека) որոշումները, Զեմստվոյական կրթութեան վերաբերեալ Յղթերի մեծ մասը, Գիւղական աշխատանքի վարձելու պայմանագրերը, բանւորական գրքերը և այլն, Հեկերը։ Այն բոլոր հաշիւներն ու վաւերաթղթերը, որոնց գումարը 5 ր. տակ չէ։ Բարեգործական հաստատութիւններին վերաբերեալ թղթերը։

1 ր. 25 կ. դրոշմաուրի ենթարկւում են այն խնդիրները, յայտարարութիւնները, որոնք արւում են ընկերութիւններ հիմնելու և նրանց կանոնադրութիւնը փոխելու, ֆարթիկաներ և գործարաններ բաց անելու։ Այդպիսի խնդիրների պատասխանի համար պահանջւում է նաև 1 ր. մարկա։ Ամեն տեսակ արհեստ և պարապմունք ունենալու թոյլտուութիւն տանելու համար։ Տարին ինստանցիաներից Դատաստանական պալատն ու Սենատը ուղարկած գանգատներից։ Ամեն տեսակ հաւատարմաթղթերը (доверенность) Գատկները։ Այդպիսի պայմանները կամ առևտրական ձեռնարկութիւնները, որոնց գումարը սկզբում ճշտութեամբ որոշել դժւար է։ 50 ր.

գումարից աւելի տուգանքների պայմանագրերը։ Այն անդորրագրերը և վկայականները, որոնք վարկային ընկերութիւնները տալիս են պահպանութեան համար վերցրած 1000—2500 ր. գումարի կամ արժէքաւոր իրերի համար (բացի բնթացիկ հաշիւներից) 300 ր. ոչ աւելի գումարի արժանաւորութիւն ունեցող կալւածքի գնման թղթերը։ Պրակից ապահովագրող ընկերութեան տւած պօլիսներն ու անդորրագրերը, որոնց ապահովութեան սրէմման 10—300 րուբլի է։

75 կոպ. դրոշմատուրֆ պահանջւում է.—Պղմինիստրացիական հիմնարկութիւններից և պաշտօնեաներից ներկայացրած խնդիրներից, գանգատներից և այլն, նոյնպէս սրանց կցած պատճէններից։ Այն խնդիրներից, բողոքներից, բացատրութիւններից, առարկութիւններից, (բացի պատճէնից), որոնք ներկայացւում են դատաստանական տեղերը և առևտրական դատարաններ։ Այդպիսի խնդիրների, յայտարարութիւնների պատասխաններից, պաշտօնական տեղեկութիւններից, վկայականներից և ամեն տեսակ փաստաթղթերից։ Ապահովութեան անդորրագրերից, որոնց արժէքը 300—1000 ր. է հասնում։

20 կոպ. դրոշմատուրֆ պահանջւում է պատճէնների իւրաքանչիւր թերթից, որոնք ըստ օ-

րէնքի ներկայացւում են խնդիրների հետ ընդհանուր դատաստանական տեղերը և առևտրական դատարաններ։ Տոմսակներից, հաշիւներից, անդորրագրերից, արտնմանուի բնաւորութիւն ունեցող գրքոյկներից (թատրոնական, երկաթուղային և այլն), երբ նրանք արւում են տարին 50 ր. գումարից աւելի։ Վարկային ընկերութիւնների ստացականներից, որով դրամ են ընդունում ընթացիկ հաշւով և ամեն մի գումարից, որ մտնում է գլքոյկի մէջ և որի գումարը 300 րուբ. աւելի է։

15 կոպ. դրոշմատուրֆ առնւում է ռաճիկ, կննսաթոշակ և այլն. 50 ր. աւելի գումար ստանալու համար արւած հաւաստարմաթղթերից։ Խանութներից տպրանք առնելու գրքոյկներից (забор. лавочн. книжки) իւրաքանչիւր 80 երեսից։ Գինի, սպիրտ և ծխախոտ տեղափոխելու վկայականները և այլն Ապահովութեան ստացագրերից (сохранныя росписки), որով պահպանութեան տւած իրերի արժէքը 300 ր. աւելի չէ։ Գաւառական և չինային (волости.) կառավարութեան գործերից քաղւածքներից, որոնց գումարը 200 ր աւելի է։

10 կոպ. դրոշմատուրֆի ենթարկւում են.—Ապահովութեան պօլիսներն ու անդորրագրերը,

որոնց ապահովութեան պրէմիան 3-9 րուբլի է։ Ակտերը, փաստաթղթերը, որոնց գումարը 50 ր. աւելի չէ։ Գաւառական և շէնային հաստատութիւնների գործերից քաղուածքները 100—200 ր գումարին։

5 կոպ. դրոշմատուրֆ է առնւում հաշիւներից, առաջականներից և այլ նման թղթերից, որոնց գումարը 5 րուր. աւելի է և հասնում է մինչև 50 րուբլին։ Տոմսակները, ապրանքների բնաւորութիւն կրող գրքոյկները, երբ նրանք արւում են ամբողջ տարին 50 րուբ գումարի։

Գրաւատուր թղթերի արժէքը հետևեալ սպիսակում։

Բարձր սահման. կէս.	Ստոր սահման. կէս.	Թերթի գինը
մինչև	մինչև	ր. կ.
100	1000	— 50
200	2000	1 —
300	3000	1 50
400	4000	2 —
500	5000	2 50
600	6000	3 —
700	7000	3 50
800	8000	4 —
900	9000	4 50
1000	10000	5 —
2000	20000	10 —
3000	30000	15 —
4000	40000	20 —
5000	50000	25 —
6000	60000	30 —
7000	70000	35 —
8000	80000	40 —
9000	90000	45 —
10000	100000	50 —
20000	200000	100 —
30000	300000	150 —
40000	400000	200 —
50000	500000	250 —
100000	1000000	500 —

ՄՈՒՐՀԱԿ

Մուրհակ տալ չէն կարող 1) քաղաքացիական իրաւունքներից զրկուածները 2) հոգևորականները. 3) այն պետական պաշտօնեաները, որոնք անշարժ կալք ու առևտրի վկայական չունին. 4) բոլոր ստորին աստիճանաւորները (нижный чинъ), նրանք միայն հաստատ ծառայութեան մէջ են. 5) կինը առանց իր ամուսնու թոյլտուութեան, իսկ աղջիկը առանց իր ծնողների, եթէ նրանք իրենց անւամբ վաճառականական գործ չեն կատարում. 6) վաճառականների որդիքը, որոնք անրաժան են իրենց ծնողներից

Մուրհակը պիտի գրել օրէնքով տպած թղթի վրայ, հակառակ դէպքում տուգանք է առնւում օրինական թղթի արժէքից 10 անգամ աւելի։

Եթէ մուրհակը վճարելու տեղը չէ գրած, այդ դէպքում, վճարման տեղը համարւում է մուրհակը գրած տեղը։ Մուրհակի մէջ եթէ նշանակւում է տոկոս կամ տուգանք, դրանց քանակութիւնը ոչ մի նշանակութիւն չի կարող ունենալ։ Մուրհակի փոխանցումը մակագրութեամբ կատարւում է միւս երեսի վրայ։ Փոխանցումը լինում է երկու տեսակ՝ բլանկովայա (бланковая надпись) երբ մակագրւում է փոխանցողի ազ-

դանուներ, և անանական (именной) իրր մակագրում է մուրհակի նոր տիրոջ ազգանունը (օր. իմ փոխարէն վճարել Սհակ Հիլինկարեանին)։ Եթէ փոխառնողը կամենում է իրենից պատասխանատուութիւնը հեռացնել և բոլորովին ապատ համարի պատասխանատուութիւնից, մակագրում է «առանց ինձ վերադառնալու» (безъ оборота на меня)։

Մուրհակները կարող են լինել նասարակ եւ փոխանակագիր. հասարակ մուրհակով ինքը մուրհակ առնող է պարտաւորւում վճարել, իսկ փոխանակած մուրհակով վճարը յանձնւում է ուրիշին։

Մուրհակ արւում է որոշ ժամանակով (срочный) և pus առաջին պահանջման (по предъявленію). առաջին դէպքում պահանջւում է որոշած ժամանակը լրանալիս, իսկ երկրորդ դէպքում իրր պահանջեն։ Ժամանակը որոշած մուրհակները եթէ իր ժամանակին չեն վճարւում, նրանք արւում են նոտարին պրօտեստի։

Մուրհակի ժամանակը լրացած միջոցին մուրհակի տէրը պարտաւոր է ընդունել նոյն իսկ գումարի մի մասը և մուրհակը պրօտեստ անել միայն մնացած գումարի հաշւին։ Պրօտեստի նպատակն է պահպանել մուրհակի ոյժը։ Պրօտեստ պիտի անել հէնց մուրհակի վճարման օրը։

ՄՈՒՐՀ. ԳՈՒՄԱՐ	ԹՂԹԻ ԳՆԴ.	
50	—	10
100	—	15
200	—	30
300	—	45
400	—	60
500	—	75
600	—	90
700	1	05
800	1	20
900	1	35
1000	1	50
1500	2	25
2000	3	—
3000	4	50
4000	6	—
5000	7	50
6000	9	—
7000	10	50
8000	12	—
9000	13	50
10000	15	—
20000	30	—
30000	45	—
40000	60	—
50000	75	—

Մուրհակի ժամանակը լրանալուց յետոյ 5 տարւայ ընթացքում մուրհակի տէրը իրաւունք ունի դատ տալ մուրհակ տւողի վերայ, հաշւած ժամանակը լրանալու օրից, իսկ մակագրողների և երաշխաւորների վրայ մի տարւայ ընթացքում հաշւած մուրհակը պրօտեստ անելու օրից։ Եթէ մակագրողներից մէկը մուրհակը թափել է, նա կարող է պահանջ ներկայացնել իրենից առաջ մակագրողներին թափելու օրից մինչև 6 ամիս։ Վճարի ժամանակը լրանալուց 3 տարի անց այլևս ոչ մի պահանջ չի կարող գոյութիւն ունենալ մակագրողների և երաշխաւորների մէջ։

Ըստ առաջին պահանջման մուրհակը կորցնում է իր ոյժը, եթէ 12 ամսւայ ընթացքում չի արւում պրօտեստի, իսկ ժամանակը որոշածը՝ 2 տ. ընթացքում; եթէ չէ ներկայացրած վճարի հաշւած պրօտեստի օրից։

ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ՁԵՂՔԸ ՀԱՇՎԵԼՈՒ ՀԵՇՏ ՄԻՋՈՑԸ

%	Բաժա նարար
1	36000
2	18000
3	12000
4	9000
4½	8000
5	7200
5½	6545
6	6000
6½	5538
7	5143
8	4500
8½	4235
9	4000
10	3600
11	3273
12	3000

Որևէ դրամագլխի կամ տոկոսը կամ վեղջը հաշվելու համար կարելի է հետևեալ հեշտ միջոցը գործ դնել։ Պէտք է դրամագլուխը բազմապատկել օրերի թիւ վերայ և ստացած արտադրեալը բաժանել այս ազիւսեակում ցոյց տուած համապատասխան թիւ վրայ։

ՕՐԻՆԱԿՆԵՐ

1) 8000 *բուրլի գումարի 12 օրւայ վեղջը 6%-ով=8000 . 12 =96000 : 6000=16 ր. 2) 1500 ր. 3% ով 25 օրում կրնէ 1500 . 25 =37500 : 12000=3,0½ ր։*

Այսպէս կարելի է գտնել մինչև 12%-ը։

Մատեանի օրինակներ

Թիֆլիս, 4 մարտի 1913 թ.

Մուրհակ 2000 բուրլու։

Հաղար ինն հարիւր տասնեակք թուի յուլիսի եօթին այս իմ մուրհակով պարտաւոր եմ վճարել Ազէքսանդրապօլում Թիֆլիսի վաճառական Սահակ Սարիբէկեանին երկու հազար բուրլի։

Սրմենակ Սարգսեան

Ազէքսանդրապօլ, 1 յունիսի 1913 թ.

Մուրհակ 3000 բուրլու։

Այս օրից երեք ամիս յետոյ, առյն մուրհակով պարտաւոր եմ վճարել Օդեսայի վաճառական Մնացականի Մարզարեանցին երեք հազար բուրլի։

Մկրտիչ Նասիբեան

Փոխառնակագիր

Ջուլֆի, 9 մայիսի 1913 թ.

Մուրհակ 500 բուրլու։

Ըստ առաջին պահանջման (կամ վերադարձել թէից քսան օր յետոյ) վճարեցէք այս իմ մուր-

հակի համաձայն նոխու վաճառական Պրոշէս Իսրայէլեանցին նոխի քաղաքում հինգ հարիւր րուբլի։

Վ. արդան Մարկիզեան

Александрополь, 3-го Мая 1913 г.

Вексель на 3000 рублей.

Седьмого сентября тысяча девятсотъ тринадцатаго года по сему моему векселю повиненъ заплатить тифлисскому купцу Сенекериму Артемевичу Сукіясянцу три тысячи рублей.

Мартиросъ Хачатурянъ

Карсъ, 9 Апрѣля 1913 г.

Вексель на 1000 рублей.

Отъ сего числа черезъ три мѣсяца по сему векселю повиненъ я заплатить карскому купцу Симеону Георгіевичу Малатянцу тысячу рублей.

Тифлисскій житель Вардань Мануковичъ Срапянцъ.

ՊՈՍՏ

ՊՈՍՏԱՏՆԵՐԸ ՓԱԿ ԵՆ ԼԻՆՈՒՄ

Յունուարի 1-ին
Զատկի տօնին
Մարտի 25-ին
Դեկտեմբերի 6-ին
և Դեկտեմբերի 25-ին։

Բաց են լինում միայն առաւօտեան ժամը 8—10

Յունուարի 6 ին
Փետրուարի 2-ին
Ռուսաց Ս. Երրորդութեան տօնին
Ապրիլի 23
Մայիսի 6, 9, 14, 25
Յունիսի 29
Յուլիսի 22, 30
Օգոստոսի 6, 15, 29
Սեպտեմբերի 8, 14, 26
Հոկտեմբերի 1, 5, 21, 22
Նոյեմբերի 14, 21
Դեկտեմբերի 26, 27
Մեծ բարեկենդանի չարաթ օրը
Ըւագ ուրբաթ և չարաթ օրերը
Զատկի երկրորդ օրը
Համբարձման օրը
Հոգեգալստին և բոլոր կիրակի օրերը։

Հասարակ փակ նամակների քաշը պէտք է լինի՝ տեղականը 1 ֆունտից ոչ աւելի, օտար քաղաքներինը 5 ֆունտից։ Այն նամակները, որոնք փոստային վարչութիւնը պէտք է յանձնէ միմիայն պահանջողին, վերան պէտք է գրւած լինի (до востребования) (պահանջ), այսպիսի նամակները փոստը պահում է մինչև 6 ամիս։

Երբ հասցէի փոխարէն թոյլ է տււում նշանակել պայմանական գրեր կամ նշաններ։ Հասարակ նամակներ օտար քաղաքներ ուղարկելու համար պէտք է կպցնել 7 կ.-նամակագրշմ. տեղականը—3 կ, մայրաքաղաքներում—5 կոպ.։ Այն նամակներն ու ծրարները, երբ ուղարկւում են ոչ պաշտօնական անձանց, կարելի է պակաս կամ առանց նամակագրշմի ուղարկել, այդ դէպքում ստացողը պէտք է կրկնակին՝ օրինակ 7 կ. փոխարէն 14 կոպ. վճարէ ու առանայ, կարող է և հրաժարւել առանալուց։ Այսպիսի ծրարների վերայ փոստ. վարչութիւնը գրում է «доплатное»։ Փակ նամակներով կարելի է զանազան փաստաթղթեր, պատկերներ և այլն ուղարկել, բացի փողից։

Փակ նամակները ապահովւած ուղարկելու համար պէտք է վրան գրել «заказное», և աւելի պէտք է վճարել 7 կոպ., արտառոյմանին—

10 կ. այդպիսի նամակների կորած դէպքում փոստային վարչութիւնը վճարում է 10 րուբլի, միայն պէտք է ներկայացնել անդորրագրերը։

Թէ հասարակ և թէ փակ նամակների մէջ արգելւում է փող դնել, նկատելու դէպքում փոստային վարչութիւնը իրաւունք ունի փողի $^1/_4$ մասը վերցնել իրեն տուգանք։

Բաց նամակները լինում են երկու տեսակ. առանց պատառխանի 3 կ. և պատասխանով—6 կոպ, արտառոյմանինը—4 կոպ., պատասխանով—6 կոպ.։ Բաց նամակները ապահովելու համար պէտք է աւելի աւլ 7 կոպ., իսկ արտառոյմանինը—10 կոպէկ։

Բաց նամակների հասցէի կողմը ոչինչ չպէտք է գրել, հակառակ դէպքում կրկնավճար է առնւում (доплатное) 8 կոպէկ։

Փաթեթներ (бандерольныя отправленія) Փաթեթներով կամ բաց ծրարներով կարելի է ուղարկել զանազան տպագրական գործեր՝ գիրք, բլանկ, գործի թղթեր, փաստաթղթեր, արձանագրութիւններ և այլն, ձեռագիր հեղինակութիւններ, տպրանքների նմուշներ, որոնք դին չունին, հաշւեցուցակներ և առհասարակ այնպիսի թղթեր, որոնք ընթացիկ նամակների կամ գրագրութիւնների բնաւորութիւն չունին։ Օտար քա-

ղաքներ ուղարկելու համար պիտի ամեն 1 լսթին վճարել 2 կ. տեղականը՝ ապագրական գործերին 1 կ. 1 լսթին, իսկ 1 լ. աւելին 2 կ ամեն 8 լսթին: Փաթեթի քաշը կարող է լինել ոչ աւելի քան 4 ֆ. իսկ ապրանքների նմուշներ 28 լսթ:

Փաթեթները ապահովելու համար պէտք է վճարել ևս 7 կոպէկ:

Посылки (посылка) լինում են գնահատած (цѣнная) և առանց գնահատութեան (безъ цѣнн): Ծանրոցները պէտք է լինին կամ արկղներով և կամ քաթանով կամ այլ պատատով աւուր փաթաթած ու կարած: Վերան կապած պէտք է լինի խաչաձև թոկով, որանց ծայրերը կնքւում են փոստատան կնիքով: Արդիլւում է ծանրոցների մէջ փակ նամակներ կամ փող դնել. նամակների համար ամեն 1 լսթից 1 բուր. աւագանք է առնւում, իսկ փողից 1% մասը: Հասցէն չի կարելի գրել թղթի վրայ: Գնահատած ծանրոցների համար փոստը ոչինչ չի վճարում, գնահատած ծանրոցները 45,000 բուր, քարշը 3 փութից աւելի չի կարելի:

Ծանրոցները ուղարկելու համար ամբողջ կայսրութիւնը բաժանած է 3 գօտիի (часть), 1) Եւրոպական Ռուսաստան՝ Անգրիովկաի հետ միասին, 2) Կովկասեան Սիբիրը, Թուրքեստանը և

Կասպեան երկիրը, 3) Արևելեան Սիբիրը:

Ծանրոցները ըստ քաշի բաժանւում են ա. մինչև 2 ֆ, բ. 2—7 ֆ., գ. 7—12 ֆ, դ 12 փունտից աւելի:

Ծանրոցների համար պէտք է վճարել հետևեալ չափով:

Ծանրոցների քաշը	I գօտի		II գօտի		III գօտի		Վէրջ գիծ	
	Р.	կ.	Р.	կ.	Р.	կ.		
ա. 2 ֆ.	25	35	—	45	—	65		
բ. 2—7 ֆ.	45	65	—	85	1	25		
գ. 7—12 ֆ	65	85	1	25	1	85		
դ. 12-ից աւելի իւրաքանչիւր ֆունտի համար	5	10	—	15	—	20		

Գնահատած ծանրոցների վերայ պէտք է գրել արժէքը «цѣнная посылка на (столько руб.)» և մանրամասն հասցէն: Իւրաքանչիւր ծանրոցի հետ պիտի ներկայացնել նրա համար

յատկացրած առանցին բլանկը, որը сопроводительный листъ է կոչւում, վերան մանրամասն հասցէն գրած։ Այս բլանկների վրայ է կպցւում ծանրոցների համար որոշած առուրքի մարկաները։

Ըստասահման ուղարկւող ծանրոցները 5 կիլոգրամ (12 ֆ. $6^1/_2$ լոտից) աւելի քաշ չպէտք է ունենան. ծանրոցի մեծութիւնը բոլոր կողմերից $12^1/_2$ վերշոկից երկար չպէտք է լինի, իսկ գնահատութիւնը 187 ր. 50 կոպ. ոչ աւելի (500 ֆրանկ)։ Վերոյիշեալ չափի համեմատ ծանրոցների համար ուղարկելու վճար վերցնում են մինչև Գերմանիա և Աւստրիա 70 կոպ., բացի այդ և ապահովութեան առուրք, մինչև Ֆրանսիա—90 կ. նոյնպէս ապահովութեան առուրք։

Պահեստի տուրք.— Ծանրոցների համար առաջին անգամ ծանուցագիր տալուց 8 օր յետոյ եթէ չի առացւում, յանձնւում է երկրորդ անգամ ծանուցագիր շրջարկականով, որի համար և վերցւում է առաջարկութիւն։ Այս երկրորդ ծանուցագրից զատ եթէ 8 օր յետոյ եթէ չի առացւում ծանրոցը, ամենայն օր պահեստի համար (на храненіе) առնւում է 5 կոպէկ։

Դրամական ծարաւճերի վրայ պէտք է գրել «денежный» և փողի քանակութիւնը։ Այդպիսի ծրարները պէտք է յանձնել աստիճանաւոր-

րին, որպէսզի նա առուրքի գումարը։ Կարելի է ուղարկել թղթադրամ, տոկոսաթուղթեր, կրօններ և այլն։ Ծրարի քաշը 20 ֆ. ոչ աւելի։

Դրամական ծրարները ուղարկելու համար պէտք է վճարել 7 կոպ. ամեն մի լոտին, պատւէր և անդորրագրի համար—7 կոպ. և ապահովութեան առուրք։

Ապահովութեան տուրք վճարւում է մինչև 600 ր. գումարին, ամեն բուրլուց $^1/_4$ կոպէկ, 600—1600 բուրլուն $^1/_4$ կոպ. և 1 բուրլի 50 կոպ. միանւագ 1600 ր. գումարից աւելին $^1/_8$ կոպ. և էլի 3 ր. 50 կ. միանւագ։

Ապրիքատ ծարաճերի (цѣнные пак.) վրայ պէտք է գրել «цѣнный»։ Այսպիսի ծրարներով կարելի է ուղարկել արժէքաւոր թղթեր՝ արժեթղթեր, մուրհակներ իրեղէններ, փող, միայն ոչ աւել 1000 բուրլուց։

Բայց արժէքաւոր ծրարները 15000 ր. աւելի գնահատել չի կարելի, իսկ փակ արժէքաւոր ծրարները 500 ր. ոչ աւելի։

Արժէքաւոր ծրարները և ծանրոցները կորցնելու դէպքում փոխադարձ պատասխանատուութիւն է։ Այդ դէպքում պէտք է յայտարարութիւն տալ (заявленіе) 2 տարւայ ընթացքում, իսկ պրատասխանի համար 1 տար.։ Յայտարարութեան հետ

պիտի ներկայացնել անդորրագրերը (квитанція)։

Վերադիր վճարով կարելի է ուղարկել ծանրոցներ, ապահովուած նամակներ և փաթեթներ։ Վերան պիտի գրել «съ наложеннымъ платежомъ» և փողի դումարը. ստացողը նախ պէտք է փողը վճարէ, ապա առնայ։ Վերադիր վճարը պէտք է անել 200 ր. ոչ աւել։ Վերադրի համար պէտք է վճարել իւրաքանչիւր բուրլուն 2 կոպէկ, սակայն 10 կոպ. ոչ պակաս։

ԿՈՐՑՐԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

վարձատրութիւն պահանջելու համար պէտք է փոստի վարչութեան անունով տալ հետեւեալ ձեի յայտարարութիւն.

Г-ну Начальнику такой-то Почтово-Телеграфной Конторы (или такого-то Почтоваго Отдѣленія).

Такого то, жител . тамъ то

Заявленіе

Изъ прилагаемыхъ при семъ увѣдомленія за № 00 и почтовой росписки отъ 7 го марта сего года за № 00 видно, что заказной пакетъ, высланный мною тогда-то, утраченъ въ пути и не полученъ адресатомъ, въ

виду чего прошу о вылачѣ мнѣ за утреченную кореспонденцію установленнаго возна граждения. Годъ, мѣсяцъ, число.

Подпись

Ետ չհասցրած ծանրոցների (посылка) և փաթեթների бандероль), *թուում է այս ձևով յայտարարութիւն փոստի վարչութեանը.*

(Վերնագիրը մնում է նոյնը)

Заявленіе

Такого-то числа, подъ почтовую расписку за № 00 сдана мною во ввѣрную Вамъ контору (или Отдѣленіе) посылка (бандероль, заказной письмо), адресованое туда-то, на имя токо-то. Посылка эта, какъ видно изъ полученнаго мною письма, до настоящаго времени не передана адресату. По этому, прилагая при семъ упомянутую расписку въ подлинникѣ (или засвидѣтельствованной копіи), прошу Васъ, Мылостивый Государь, произвѣсти справку о причинѣ такой неисправности и о результатѣ справки сообщить мнѣ, по мѣсту моего жительства въ—

Годъ, мѣсяцъ, число.

Подпись

Թուղթեր փոստով փոխադրելու (переводъ по почтѣ) համար մինչև 25 ր. 15 կոպ. մինչև 100 ր —25 կ., 100—125 ր. 40 կ., 125—200 ր. 50 կ., 200—225 ր. 65 կ., 225—300 ր. 75 կ, 300—325 ր. 90 կ., 325—400 ր. 1 ր., 400—425 րուր. 15 կ, 425—500 րուր. 1 րուր. 25 կ., իսկ 500 ր. ուելի փոստով չի կարելի փոխադրել։

Հեռագրով փոխադրելիս (переводъ по телеграфу), պէտք է բացի վերոյիշեալ տուրքից տալ հեռագրի 20 խօսքի վճար քսան տարիմի։

Փոյի փոխադրութիւնները կատարւում են առանձին ըլանկներով, որի վրայ կպցւում է փոխադրութեան արժէքի համեմատ մարկաներ, իսկ հեռագրով փոխադրելու դէպքում վճարում են կանխիկ փող։

Ընտանեաց փոխադրութիւն կատարւում է միմիայն փոստով։ Մէյտլալ նոհանգները ընդունում են մինչև 200 ր. (100 դօլար), Աւստրօ Ունդարիա—254 կռօն (100 ր.), Գերմանիա—216 մարկ (100 ր.), Բելգիա—266 ֆրանկ, Շվէյցարիա—266 ֆր., Ֆինլանդիա—100 ր., Ֆրանսիա—266 ֆրանկ։

Լրագրերի առաքման վճարը. - Տարին վեց անգամ հրատարակւող թերթից փոստը վերցնում է թերթի բաժնեդնի 8%-ը, ամսաթերթից—10%, երկշաբաթաթերթերից—12% շաբաթաթերթերից—14%, շաբաթը երկու անգամ հրատարակւողից—16% և օրաթերթից—18%։

Ամենապակաս գինը ամբողջ տարւայ համար 40 կոպէկ, շաբաթաթերթերից - 80 կ., շաբաթը երկու անգամ հրատարակւողից 1 ր և օրաթերթից—1 ր. 20 կոպէկ։

ՀԱՅԱՏԻՊ

Իւրաքանչիւր հեռագրի համար պէտք է վճարել 15 կ. բացի այս, ամեն բառին 5 կոպէկ Եւրոպական և Ասիական Թուրքաստանի սահմաններում, առաջինի մէջ մտնում է Կովկասը, երկրորդի մէջ՝ Անդրկասպեան երկիրը։ Առաջին մասից երկրորդ մասը բառի վճարն է 10 կոպէկ։ Քաղաքային հեռագրի բառին 1 կոպ. Հեռագրի մէջ ամենաերկար խօսքը 15 տառից ուել չպէտք է լինի։ Ընդհանրում մի բառ է հաշւում, տիրէ, չակերտ, կէտ, փակագիծ չի հաշւում, թուանշաններից 5 թուանշանը մի խօսք է հաշւում, թուանշանի կարգով իւրաքանչիւր կէտ հաշւում է մի թուանշան։

Երբ ուզում են, որ հեռագիրը անմիջապէս

ուղարկել, առանց յետաձգելու, վերան գրում են «срочная», այսպիսի հեռագրին սովորական գր նից երեք անգամ աւելի պէտք է վճարել:

Պատասխանեալ հեռագիր ուղարկելու համար պէտք է գրել «ответъ уплаченъ», սրա համար հեռագրատունը կառնան 10 խօսքի վճար: Ձանկացողը կարող է աւել կամ պակաս վճարել, դրա համար պիտի գրել «ответъ 18 словъ» կամ «6 словъ»: Մեկնոյն հեռագիրը մի քանի հասցէներով ուղարկելու համար պէտք է վճարել իւրաքանչիւր հեռագրին 10 և խօսքին 15 կոպ:

Միջազգային հեռագրները կարելի է գրել լատիներէն տառերով և բոլոր եւրոպական և մի քանի ասիական լեզուներով Վճարը իւրաքանչիւր երկրի համար առանձին է:

Աւստ. Ունգ.	11 կ.	Նօրվեգիա	16 կ.
Անգլիա	22 »	Նիդերլանդ	14 »
Բելգիա	17 »	Շվէյցիա	14 »
Բուխարա	10 »	Շվէյցարիա	17 »
Բուլղարիա	9 »	Էլլինոզօրիա	17 »
Գերմանիա	11 »	Պօրտուգալիա	23 »
Դանիա	15 »	Պարսկ. (Հիւս.)	24 »

Եապոնիա 1 ր.	95 կ	Պարս. (Հար.)	34 կ.
Եսպանիա	21 »	Սերբիա	15 »
Իտալիա	18 »	Տանկաստ.	16 »
Հոլանդիա	14 »	Րումանիա	8 «
Ցունաստան	23 »	Ֆրանսիա	15 »

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴԱՆԶԱՐԱՆՆԵՐ

Խնայողական դանձարաններէ նպատակն է տղքատ և չունևոր մարդկանց միջոց տալ հատուցելու մի փոքրիկ գումար, իրենց աշխատանքից յետ գցած փողով:

Բանուորները, արհեստաւորները իրենց շաբաթական աշխատանքի որոշ մասը յետ գցելով կարող են յանձնել դանձարանին (եթէ իրանց մօտ մնար դուշ ծախսէին) և ապագայում կունենան մի բաւականին մեծ գումար, Այսպէս կարող են անել և ծնողները իրանց անչափահաս որդոց համար:

Խնայողական դանձարան կարելի է յանձնել 25 կոպէկից սկսած մինչև 1000 րուբլի: Ընկերութիւնների և հիմնարկութիւնների համար

3000 րուբլի, իսկ եկեղեցիների համար ոչքան կամենան։

Խնայողական դանձարանը իր վերցրած փոխերի համար վճարում է հետևեալ չափով տոկոս

1) Մինչև 1000 ր. տարեկան $3^{6}/_{10}\%$։

2) Հիմնարկութիւնների և ընկերութիւնների 1000 ր. գումարների համար $3^{1}/_{10}\%$։

Տոկոսը հաշւում է ամսի 1 ից միայն ամբողջ ամիսների համար։ Մի րուբլուց պակաս գումարին տոկոս չի տրւում։

Փոխը ում անունով որ կանձնւում է դանձարանը, գտնում է նրա սեփականութիւնը։ Մեկն մարդ իրաւունք ունի ուրիշի անունով փոխ պնել դանձարանը և փոխի տէր կը դառնայ, որի անունով գրւած է։

Խնայողական դանձարանը իր ստացած փոխերը գրում է տոմարի մէջ և տալիս փոխի տիրոջը։ Եթէ մեռնում է այն մարդը, որի անունով գրւած է փոխը, այդ դէպքում խնայողական դանձարանի փոխը կարող են ստանալ միայն նրա ժառանգները, երբ նրանք օրինական կարգով կհաստատուեն Փոխ կանձնողը ամեն ժամանակ կարող է յետ պահանջել իր փոխերը, իսկ դանձարանը պարտաւոր է կատարել նրա պահանջը։

Խնայողական դանձարանները բացւած են պատահականների հիմնարկութիւններին և պետական դանձարաններին կից։

ԱՆԱՑՈՂԱԿԱՆ ՄԱՐԿԱՆԵՐ

Խնայողական մարկանները սահմանւած են նրա համար, որ աւելի դիւրութիւն տրւի մարգկանց սմենափոքր գումարներ նոյն իսկ խնայել։

Խնայողական մարկանները լինում են 5 և 10 կոպէկանոց և վաճառւում են խնայողական դանձարաններում և փոստատներում։

Ցայս մարկանները պէտք է կպցնել առանձին կարտերի վրայ, որոնք տրւում են ձրի։ Երբ այս ձեով մի րուբլին լրանայ, կարտերը կարելի է նեկայացնել խնայողական դանձարանը և տեղի մէջ գրել տալ։

Ցայսպիսի հեշտ ձեով կարելի կլինի ձեռք բերած 5—10 կոպէկներով ժամանակի ընթացքում նեղ օրի համար մի գումար անտեսել։

ԿՏԱԿԻ ՕՐԻՆԱԿ

Ծանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

Հաւատ ինն հարիւր տասնհինգ թուի Հոկտեմբերի 25-ին Ելէքսանդրապոլ։

Ես ի ներքոյ ստորագրող Ելէքսանդրապոլ քաղաքի բնակիչ Մկրտիչ Յարութիւնեան Կարապետեանցս լինելով առողջ և ուշիմ մտօք, կատկում եմ իմ ունեցած չարժական և անշարժ կայքերը իմ մահուանից յետոյ հետեւեալ կերպով։

1) Իմ սեփական անշարժ կալւածները, որոնք գտնւում են Ելէքսանդրապոլ քաղաքում, իր բոլոր հողերով ու շինութիւններով. կատկում եմ իմ մահուանից յետոյ լիովին սեփականութիւն իմ եղբօր որդի վաճառական Արշաւիր Սեդրաքեան Կարապետեանին այն պայմանով, որ Կարապետեանը տայ մի հազար րուբլի (1000 ր.) տեղիս Ազգատանիում ընկերութեան և այս Արշաւիր Կարապետեանը պարտաւոր է կատարել իմ մահուանից յետոյ, մէկ ու կէս տարւայ ընթացքում։

2) Իմ սեփական երկյարկ տունը իր շրջապատի տան ու մէկ կրպակներով, որ գտնւում է Ախալքալաքի առաջին քաղաքամասում № 30—50 իրենց բոլոր հողերով ու շինութիւններով կատկում եմ տեղիս Բարեգործական ընկ. ձիւղին այն

պայմանով, որ Բարեգործական ընկերութիւնը յիշեալ եկամուտից մի սան պահէ մշտական հայոց միջնակարգ դպրոցներում։

3) Իմ օրինաւոր կնոջի՝ Վարդանոյշ Կարապետեանին կատկում եմ իմ մահուանից յետոյ օգտուել իմ բոլոր փողի տոկոսով, որը գտնւում է Թիֆլիսի Պետական գանձարանում

4) Իմ բոլոր տաճեռն փողերը, որոնք չեն յիշատակւած կտակիս մէջ, լինելու է սեփականութիւն իմ հաւատարիմ ծառայ Մարտիրոս Այդինեանցին։

5) Խնդրում եմ իմ ընտրած կտակակատար Արշաւիր Սեդրաքեան Կարապետեանին կատարել իմ վերջին կամքը կտակիս համաձայն։ Այս կտակը, որ գրել եմ ես իմ ձեռքով, ստորագրում եմ Մկրտիչ Յարութիւնեան Կարապետեանց։

Վկայ եմ, որ այս կտակը գրել և ստորագրել է Մկրտիչ Յարութիւնեան Կարապետեանցը, որ ունէր առողջ դատողութիւն և լաւ յիշողութիւն՝ Ծխատէր Սիմէոն քահանայ Մարգսեան։

Վկայ եմ առաջին կարգի վաճառական Կարապետեան։

Վկայ եմ Գէորգ Գէորգեանց։

ՊԱՅՄԱՆԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ա.

Հազար լիռն հարիւր տասներեք թուի Հոկտեմբերի երեքին, Ալէքսանդրապոլ։

Մենք ի ներքոյ ստորագրող Ալէքսանդրապոլ քաղաքի բնակիչ Միքայէլ Հէյդարեանցս և Ըրամ Մարկիզեանս կապիտիւնք մեր մէջ հետեւեալ պայմանը. 1) Ես Միքայէլ Հէյդարեանցս ուի քրէհով իմ սեփական տունը (կամ կրպակը), որ գտնուում է քաղաքիս առաջին մասում № 25 և բաղկացած է չորս սենեակից Ըրամ Մարկիզեանին մի տարի ժամանակով. տարեկան քրեհն է մի հարիւր քսան րուբլի (120 ր.) վերոյիշեալ թուից մինչև տարին լրանալը. 2) Տարեկան քրեհ հարիւր քսան րուբլին Մարկիզեանը պարտաւոր է վճարել հրեք քառամսեակում (արէթ), իւրաքանչիւր քառամսեակի սկզբին քառասուն րուբլի (40 րուբլի) ճշտութեամբ. 3) Մարկիզեանը պարտաւոր է տունը իր ջրջակայքով կանոնաւոր մաքրութեան մէջ պահել և սանիկանութեան արած նկատողութիւններին պատասխանատուն ինքն է. 4) Պայմանաժամը լրանալուն պէս Մարկիզեանը պարտաւոր է դուրս գալ տանից և տունը նոյնութեամբ յանձնել ինձ, ինչպէս ստացել էր. 5) Ես Հէյդարեանցս տարին չլրացած իրաւունք չունիմ Մարկիզեանին տանից դուրս հանելու, նոյնպէս Մարկիզեանը չունի իրաւունք դուրս գալու, եթէ մեր մէջ համաձայնութիւն չկայանայ. 6) Այս պայմանից գրւեց երկու օրինակ, իսկականը մնալու է կալւածատիրոջ՝ Հէյդարեանցի մօտ, իսկ նոյն ստորագրութիւններով վաւերացրած պատճէնը Մարկիզեանցի, որի վրայ պէտք է գրել վճարւած փողերի քանակութիւնը պատշաճաւոր ստորագրութեամբ. 7) Մեզանից իւրաքանչիւրն էլ պարտաւոր է մաքուր և անարատ պահել այս պայմանը. 8) Ով որ այս պայմանի որևէ կէտը խախտէ, պարտաւորը է տրւար կողմին վճարել իբրև տուգանք երկու հարիւր րուբլի։

Ես որ ստորագրում ենք Միքայէլ Հէյդարեանց, Ըրամ Մարկիզեանց։

Վկայ ենք՝ Սարգիս Ծէր Դրիգորեան, Սենեքերիմ Մարմարեանց։

Բ.

Հազար լիռն հարիւր տասներեք թուի Մայիսի 10 ին ես ի ներքոյ ստորագրող կօշկակարների համքարիս վարպետ Յովակիմ Սարգսեանցս ընդունեցի իմ կօշկակարութեան գործարանում կօշկակարութեան արհեստը սովորեցնելու համար իմ համաքաղաքացի Մանուկ Յակոբեանցի

որդուն՝ Հայկին, վերոյիշեալ թվից հինգ տարեայ ընթացքում հետևեալ պայմանով։

1) Ես պարտաւոր եմ Յակոբեանցին կանոնաւոր սովորեցնել կոշկակարութեան արհեստը, չը պահանջելով նրա հօրից՝ Մանուկ Յակոբեանից ոչ մի կոպէկ սրա համար վարձատրութիւն. 2) Ամբողջ պայմանաժամի ընթացքում պարտաւոր եմ կերակրել նրան անդադար կերակուրներով և հագցնել մաքուր ու կանոնաւոր. 3) Խիստ ծանր աշխատանքներով չեմ ծանրաբեռնեմ նրան և նրա գործած յանցանքների համար մարմնական պատիժ չեմ տալ, այլ պիտի խրատեմ խօսքերով և երբ նա այս կերպով չուղղուի, պիտի պայմանը խախտած համարել և նրան վերադարձնել իր հօրը. 4) Հինգ տարի ժամանակամիջոցը չլրացած Մանուկ Յակոբեանցը իրաւունք չունի իր որդուն գործարանից հանելու, նոյնպէս և ես չունիմ իրաւունք հետացնելու, եթէ տեղի չէ ունեցել երրորդ կէտում յիշած պատճառը. 5) Այս պայմանից գրւեց երկու օրինակ, իսկականը մնալու է Յովակիմ Սարգսեանցի մօտ, իսկ պատճէնը Մանուկ Յակոբեանցի, որը պարտաւոր ենք մաքուր և անարատ պահել Յովակիմ Սարգսեան, Մանուկ Յակոբեան։ Վկայ ենք՝ Ըստեփան Դէսոյի Սարուճեանց։

ԻՆՉ Է ԿՕՕՊԵՐԱՑԻԱՆ

Կօօպերացիա կչւում է միանալու այն ձևը, որի օգնութեամբ բանւորները ու գիւղացիք միմեանց համերաշխ ջանքերով կարող են բարեփոխել իրենց տնտեսական դրութիւնը։ Վարչ. արդէն, հենց իրենք մեր բանւորներն ու գիւղացիք փորձում են գտնել այդ միջոցը. սակայն օտար պետութիւնների մէջ՝ Ըստմատրում, այդ միջոցը վաղուց արդէն հնարւած է։ Բնական այդ միջոցը կատարելագործւած և փորձւած է հենց գործագրութեան մէջ և բերեալ հետևանքներ է տւել։ Կանանց պայմանների բարեփոխման կուռ այդ միջոցը ամեն տեղ կոչւել է կօօպերացիա, այդ անունով էլ հասատաւել է մեզանում։

Եթէ կօօպերացիա ի՞նչ բան է՝ արդ թարգմանելու լինենք հայերէն՝ հնչանակէ ուղղակցութիւն, այսինքն միացած գործունէութիւն։

Կեանքի մէջ ամեն քայլափոխում մենք պատահում ենք մարդկանց միմեանց հետ աշխատակցելիս։ Նոյն և ամէն կարիքը ինքն է ստիպում մարդկանց աշխատակցել, շատ ժամանակ

նոյն իսկ կալուած չլինելով մասնակիցների կամքից։ Սակայն կօօպերացիան կազմակերպուած, սրաշ ու առաջուց մտածուած աշխատակցութիւն է, որի նպատակն է աշխատաւոր ժողովրդի կեանքի ու աշխատանքի պայմանները բարելաւել։

Նայած նրան, թէ իրենց անհատական դրութեան որ կողմն են ուզում փոխել գիւղացիք, դրա համար էլ կազմակերպում են կօօպերատիւ կազմակերպութիւնների համապատասխան տեսակները։

Եթէ գիւղում հնարաւորութիւն չկայ բոլորովին փոխադարձութիւն, փոխ պարք վերցնել և կամ մասնաւոր մարդկանցից փոխադարձութիւն անելու պայմանները շատ ծանր են գիւղացիների համար, այդ դէպքում գիւղական հասարակութիւնը կազմակերպում է փոքրիկ կօօպերատիւներ, որոնցից և մեծապէս օգուտ է։

Եթէ գիւղացին ուզում է բարձրացնել արհեստութիւնը՝ իր համար ամենից հեշտաւ պայմաններով ծանօթ գիւղատնտեսական մթերքները և գնել գիւղատնտեսական գործիքներ,—նա դիմում է գիւղատնտեսական ընկերութիւնների ու ընկերակցութիւնների օգնութեան։

Ջատ ժամանակ գիւղացին ինքն էլ է հասկանում, որ եթէ փող լինի գործը սարքի գցելու, կարիւի կլինի կանոնաւոր կերպով պատրաստել ու վաճառել գիւղատնտեսական մթերքներ։ Այն ինչ համարեա ամենքի համար էլ պարզ է, որ կաթնային անտեսութիւնը, եթէ գործը կանոնաւոր դրւի, կարող է գիւղական ամենատրտնաւէտ տրիւքներից մէկը լինել։ Եւ երբ այդտեղ էլ միտք է ծագում մեռնալ ու մեռածին աշխատակցել, կօօպերացիան, կաթնատրծատնային արտիների ձեով, այստեղ էլ օգնութեան է գալիս։

Կօօպերացիան, տրգիանապրծական արտելների ձեով, հնշտացնում է գիւղական արհեստաւորների միացումն։

Վերջապէս երբ գիւղացին ուզում է գիւղական ընտանիքի անձնական կարիքների համար պէտք եղած կենդ անհրաժեշտ առարկաները գնել էժան ու լաւ տեսակները, այդտեղ էլ կարիքը սաիպում է նրան դիմել կօօպերացիային—սպառողական ընկերութիւնը։

Ահա թէ ինչ է կօօպերացիա կոչւածը. մի միջոց, որով վերոյիշեալ նպատակների համար միանում ու կազմում են զանազան տեսակի ընկերութիւններ և որը ուրիշ երկրներում արդէն փորձած ու ընդունած է։

ՍՊԱՌՈՂԱԿՂՆ ԿՕՕՊԵՐԱՑԻԱ

Եթէ կարելի լինէր մի կօօպերատիւ ընկերութեան միջոցով և փող պարտք տալ ձեռնտու պայմաններով, և գնել, և ծախել ամեն մի բան, սկսած գիւղատնտեսական մեքենաներից մինչև կօշկեղէնը, շորկէնն ու ծխախոտը, այն ժամանակ իհարկէ մի կօօպերատիւը մի գիւղի համար բաւական կլինէր, նա ամեն ինչ կանէր։

Բայց մինչև հիմա ոչ մի տեղ դեռ այդպիսի ընկերութիւն չկայ։ Մեր օբէնքների համաձայն, հէնց փոխի հիման վրայ էլ, այդ ձեռնարկութիւնները անում են առանձին կօօպերատիւ ընկերութիւնները, ամեն մի տեսակ կարիքի համար հիմնւում է առանձին ընկերութիւն։ Այսպէս օր մեր օբէնքի համաձայն, գիւղատնտեսական ընկերութիւնը առանց վրաժման տուրք (промысловый налогъ) վճարելու, կարող է ծախել իր անդամներին միայն այն բաները, ինչ որ նրանց պէտք են գիւղական անհատութիւնը վարելու համար։ Իսկ եթէ ուրիշ բան էլ ծախելու լինի, նա պէտք է վերցնի առևտրական վկայական (патентъ) ինչպէս բոլոր միւս վաճառականները։

Ահա այդ կարիքին էլ բաւարարութիւն է տալիս գիւղական կօօպերացիայի երրորդ տեսակ

գիւղական սպառողական ընկերութիւնը։

Գիւղական կեանքի թանգութիւնն է, որ սկսում է հիմնել սպառողական ընկերութիւններ։

Կեանքը հիմա էլ թանգ է, բայց օբէցօր աւելի դժւար է դառնում գլուխ պահելը։ Գնեատական, անհրաժեշտ առարկաները արագ ու խիստ կերպով թանգանում են։

Ինչ կուզես արա, բայց ուտել պէտք է։ Մի փութի ալիւրի համար միշտ չի լինում քաղաք գնալ և ակամայից աւելի գնով առնում ես քո «տարեան» նպարավաճառից։ Իսկ նա գիւղում— այժ է։ Գիւղում եղած աւել կոպէկը նա ձեռքից բաց չի թողնի։

Գիւղացիք իրենք էլ տեսնում են, թէ ուր է հարում, գնում իրենց փողերը գիւղում, լաւ են հասկանում, որ գրաշատը բանը ծախում են իրենց չլսւած գներով։ Ուրիշ ծծող, տզրուկներ են տնտեսում խանութպաններին, նոտում իրենց գառն օրը լաց լինում, որ միանալով միմեանց հետ նրանք կարող են խանութպանների կեղեքումներից ազատուել։

Էյդ միջոցն է ահա կօօպերատիւ սպառողական ընկերութիւնը։ Բոլոր գիւղացուց էլ հարկաւոր է ամենօրեայ սպառման, գործածման համար թարմ և արժան ապրանք։ Նրանք չեն

ուզում ոչ մի ուրիշ մի կոպէկ տալ և հաստկանում են ընդհանուրի համար գումարով գնելու օգտակարութիւնը։ Այդ նպատակների համար է, որ բացւում են գիւղական սպառողական խանութներ։

Ի՞նչ օգուտներ կարող է տալ իր անդամներին սպառողական խանութը։ Շատ մեծ և տարբեր։

Նախ և առաջ դա էժանացնում է խանութից գնողների ապրուստը։ Ընկերութիւնը գնում է մեծ գումարի ու քանակութեամբ ապրանք, և այդ պատճառով էլ կարող է ամեն ինչ ծախել չուկայի միջին գնով, այսինքն մանրավաճառների գներից շատ աւելի ցած գնով։ Ընկերութիւնը աւելորդ փող չի վճարում գիւղական դալալներին, և սպառողական խանութը դրա համար էլ կարիք չունի դրանց աւածը ապրանքից դուրս բերել և գնորդի վրայ դալ, ինչպէս որ այդ անում են խանութպաններն։

Եւ վերջապէս, որովհետև բոլոր անդամները հէնց իրենք խանութի տէրերն են, ուստի և սպառողական խանութը ոչ ոքի խարելու կարիք էլ չունի։ Նա փշացած ապրանքը չի ծախիլ և երբ գիւղացին գնայ սպառողական խանութ՝ նա համոզւած կլինի, որ ալիւրի մէջ կեր չի խառնւած, իսկ բրինձի մէջ աւազ։

Ընկերութեան օգնութեան չնորհիւ սպառողական խանութը սրագ կերպով աւժանդակում է ու առանձին խանութների առևտուրը կարում։ Վերջիններիս մնում է՝ կամ իրենց գործը ուրիշ տեղ տեղափոխել և կամ՝ փոխանակ փչած ապրանքը վերադարձ վերն կապելու, աւելի մաքուր ու պոնիւ վերաբերմունք դնել իրենց համար։

Եւ նրանք անդամները ամեն ինչ իրենց խանութից են գնում, սրագութեամբ վարկանում ու առաջ է գնում «ընկերութեան խանութը», շուտով մրնչի իսկ վաստակ էլ է մնում։ Այստեղ էլ բանից դուրս է գալիս, որ խանութը ոչ միայն էժանացրել է ապրուստը և լաւացրել ապրանքը, այլ և մի քանի ուրիշ բան էլ է արել։ Կանոնն արդէն ցոյց է տւել, որ ամեն սպառողական խանութ, նրանք գործը լաւ է տարւում, կարող է ուրոշ վաստակ տալ բոլոր գնողներին և շատ ուրիշ տեսակի օգուտներ ու ծառայութիւններ տնել։

Մանր խանութպանի չնդրկերն ուզուած են ամրողջովին – որքան կարելի է մեծ վաստակ տանելու։ Իսկ տարած վաստակը նա գործադրում է այնպէս, ինչպէս որ իր սիրտն ուզում է։

Իսկ երբ սպառողական խանութը վաստակ է տանում, դրանից օգտւում է ոչ թէ մէկը, այլ

բոլոր անգամները, այն բոլոր գեղեցիկ, ուռճ իրեց առած—գնածով պահպանել են այդ խանութը։ Տարւոյ վերջը հաշիւ է անում—ով ինչ-քան տպրանք է գնել և տարած գումարի համաձայն իւրաքանչիւրին հասնում է վաստակի համապատասխան բաժինը։

Անգամների դանկութիւնից է կախուած այդ գումարը իր մէջ բաժանելը։ Բայց առհասարակ այդպէս չի արւում սովորաբար այդ փողի մի մասն են վերցնում, իսկ միւս մասը թողնում են խանութի բարգաւաճման ու շրջանառութիւնը մեծացնելու համար։ Անգամների չնչին մասնիկներից կազմւում է բաւականին խոշոր գումար։ Այդ գումարներով խանութին կից հիմնւում են գրադարաններ, ընթերցանութիւն, դպրոցներ։ Իսկ երբ փոդը շատանում ու մեծ գումարների է հասնում, չինւում են իրենց սեփական կոօպերատիւ արհեստանոցներ, այսինքն այնպիսի արհեստանոցներ, գործարաններ և այլն, որոնց սէրը իրենք բոլորն են և ոչ թէ մէկ գործատէր—շահագործող։

ԿՕՕՊԵՐԱՏԻՒ ՔԱՂԱՔ

Ընդլիայի Լիդս քաղաքը իր բանւորական օրինակելի կազմակերպութեամբ ոչ թէ Ընդլիայում, այլ ամբողջ աշխարհում առաջին քաղաքն է։

Այս օրինակելի ընկերութեան սկիզբը դրւել է 1847 թւին և մինչև օրս հասել է իր բարգաւաճման գագաթնակէտին։ Օրինակելի են շատ նրա սպառողական հիմնարկութիւնները. ոչ մէկը չէ կարողանում մրցել նրա դէմ։

Եթէ ուզենանք թւել նրա հարստութեան և շրջանառութեան գործունէութիւնը կլցնէին շատ էջեր. բաւականանք միայն թւել այդ համակրելի ընկերութեան խանութների տեսակները և քանակութիւնը։

Մանրածախ և ուտելեղէնների խանութները 95 հատ են, մսուղի, չիթի և ուրիշ ճոթ ու կտորինի՝ 24, կօշկեղէնը՝ 18, պատրաստի հագուստեղէնները՝ 8, ձկան և բանջարեղէնները՝ 5, թարմածուխի պահեստներ՝ 16. բացի այս գլխաւորներից կան էլի շատ մանր բաժանմունքներ, որոնք բոլորը միասին կազմում են 245 խանութ, հապա են կարողանում ընկերութեան 50,000 անգամների կարիքները հոգալ։

Լիսկի կօօպերատիվ միութեան գործունէութիւնը քաղաքի մեծութեան հետ զուգընթաց է գնում, սա քաղաքի ամենաարագաշարժ, ամենահետաքրքրական հաստատութիւնն է, և ահա դրա համար էլ Լիդսը կոչւում է բառի բուն մտքով «կօօպերատիվ քաղաք»։

Գ. Բ.

ԿՕՕՊԵՐԱՏԻՒ ՅՈՒՅԱՀՈՒՆԴԸ

Լօնդոնում կօպերատիվ ընկերութեան հարաւային բաժնի նախաձեռնութեամբ 1910 թ. բացուել էր մի բաւականին հետաքրքրական ցուցահանդէս։

Այնտեղ այցելուներին բաժանում էին կօօպերատիւի գործունէութեան մասին շատ հետաքրքրական վիճակագրական տեղեկութիւններ։

Կօօպերացիայի ընկերութիւնը հիմնուել է 1864 թուին, 17,545 անդամներով. սրա առաջին տարւայ գործունէութեան շրջանառութիւնը հասել 590 հազար րուբլու. 1909 թւի յունուարի 1-ին այդ ընկերութեան անդամների թիւը եղել է 1,925,517 իսկ 1908 թւի տարեկան շրջանառութիւնը եղել է 267,620,860 ր.։

Սկզբում այս միութեան ընկերութիւնը միայն սպառող էր, իսկ հետզհետէ զարգանալով ունեցաւ իր սեփական գործարանները, որի արտադրած ապրանքները սպառում էին բացառապէս ընկերութեան անդամները։

Ներկայումս այս ընկերութիւնը ունի սապոնի, խոզանակի, շոկոլադի, քաղցրաւենիքը, կահկարասիքի և այլ գործարաններ, որոնց մէջ պատրաստած ապրանքների արժէքը 1909 թւին հասաւ 120,000,000 րուբլու։

Ճուցահանդէսում կարդացուել են մի շարք պատասխանութիւններ Անգլիայի, Եւրոպայի միւս երկրների և Ամերիկայի կօօպերացիայի գործունէութիւնների մասին. բացի դրանից, կօօպերացիայի ժողոված անդամները, կայացած համագումարում որոշեցին մի շարք գործնական հարցեր, որոնք վերաբերում էին կօօպերացիայի հաշուառտուութեանը, վարչութեանը, արկիւնների և ձախքերի վերատուման (կօնտրօլի) և էլի ուրիշ այդոնց նման շատ կարևոր հարցերի մասին։

«Н. Р.»

Ա. Ռ Ա Ջ Ա Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ամբողջ Ռուսաստանի տարածութիւնը 19,027,000 քառ. վերստ է։

Այս ընդարձակ կայսրութիւնը ունի 78 նահանգ, 18 օբլաստ, 2 վիճակ, 1 մաս, որոնց մէջ կան 769 գաւառ, 919 քաղաք և ատան և 567,577 գիւղ։

Բնակիչներ ըստ ազգութեան.

Ռուսներ	80,000,000
Թուրքեր	10,000,000
Լեհեր	8,035,000
Հրէաներ	5,00063
Գերմանացիք	2,000,000
Սուանէտներ	1,500,000
Ֆիններ	5,360,000
Լետովցիներ	3,600,000
Լիզգի, Շերքես, Չեչն	800,000
Գալմիկներ և Բուրիատներ	4,000,000
Հայեր	1,475,000
Բումիններ	100,000
Քիւրդեր և օսեթիններ	250,000
Վրացիներ բոլոր ցեղերը	1,352,000

Բնակիչներ ըստ դաւանութեան հազար հոգուն գալիս է.

Ռուսներ	800 մ.	Լիւտերական	29 մ.
Մահմեդական	111 »	Սաարովերցի	18 »
Հռոմ. կաթոլ.	91 »	Հայ լուսաւորչ.	8 »
Բուդդայական	43 »	Կռապաշտներ	8 »

Բուդդայական 4 մարդ։



Քառ. մղոն տարածութեան հազարի հաշուով 1) Մեծ-Բրիտանիա—525, 2) Ռուսաստան—394, 3) Փռանսիա—209, 4) Շինաստան—202, 5) Հիւս. Ամերիկա—177, 6) Գերմանիա—57։

Բնակիչները.—Մեծ-Բրիտանիա — 398 միլ., Ռուսաստան—155 միլ., Փռանսիա—98 միլ., Շինաստան—330 միլ., Հիւսիսային Ամերիկա—106

միլ., Գերմանիա - 75 միլիոն։

Ազգաբնակութեան խտութիւնը. — Ռուսաստանը շատ անօթ է բնակեցրած. մէջին թիւով 1 ք. վերստ տեղի վրայ գալիս է 6 - 7 մարդ. ամենանօթը բնակչութիւն Սիբիրն ունի. այնտեղ 2 քառ. վ.-ին բնկնում է 1 մարդ։ Եւրոպական Ռուսաստանում և Կովկասում 1 ք. վ. բնկնում է 22 մարդ։ Ամենից խիտ ազգաբնակութիւն ունի Լեհաստանը, 1 ք վ ին 84 մարդ։ Եւրոպական պետութիւններից աւելի խիտ ազգաբնակութիւն ունին, քան Ռուսաստանը. օր. Բելգիայում 1 քառ. վերստ վրայ ապրում է 260 մարդ, Անգլիայում — 160 մարդ, Գերմանիայում — 120 մարդ, Ֆրանսիայում — 80 մարդ։

Ազգաբնակութեան աճումը — Հազարանոց տարի հազար բնակչին ծնում է 48 հրեխայ. Ամերիկան Եւրոպայում ծնունդը աւելի շատ է լինում. օր.

Գերման.	1000	36 ն. ծ.
Իտալիայում		38 —
Անգլիայում		31 —
Ֆրանսիայում		23 —

Մահացութիւնը.

Անգլիայում	1000	— 19

Ֆրանսիայում	»	22
Գերմանիայում	»	25
Եւրոպ. Ռուսաստ.	»	84

Չնայած այն հանգամանքին, որ Ռուսաստանում մեռնողների թիւը շատ է, այնուամենայնիւ ազգաբնակութիւնը աւելի արագ է աճում։ Եւրոպական Ռուսաստանում հազարանոցի տարի ամեն 1000 բնակչին աւելանում է 14 մարդ

Անգլիայում	12	—
Գերման.	13	—
Իտալիայում	11	—
Ֆրանսիայում	1/2	—

Կեանքի միջին հասակը.

Անգլիայում տղամարդիկ մէջին թիւով 48 տ. են ապրում, իսկ կանայք 45 տարի. Գերմանիայում — տղ. 36 տ., կանայք — 38 տարի. Ռուսաստանում — տղ. 27 տ., կանայք — 29 տարի։

Ժողովրդի առողջապահական դրութիւնը. — Թոքախտից մեռնողների թիւը Ռուսաստանում անհամեմատ շատ է, քան այլ տեղերում։ Ամբողջերդամում ամեն 100,000 բնակչից մեռնում են թոքախտից 486 հոգի, Լօնդոնում և Բերլինում — 687, Միլանում - 862, Վիեննայում — 949, Պարիզում — 1055, իսկ Մոսկուայում — 1201։

Անգլիայում մի բժիշկը գալիս է 1730 բնակ-

չին, Ֆրանսիայում—2630, Գերմանիայում—2820, Իտալիայում — 3570, Աւստրիայում—3680, իսկ Ռուսաստանում—6450 բնակչին:

Ազգաբնակութիւնը pus սեռի.— Եւրոպական Ռուսաստանում 1000 տղամարդուն գալիս է 1048 կին, Լեհստանում—990, Կովկասում - 905, Սիբիրում—945, Միջին Ասիայում—810, Ֆինլանդիայում—1027, ընդհանրապէս Ռուսաստանում —1011:

Ազգաբնակութեան բաշխումը pus դասակարգի. — Ռուսաստանի ազգաբնակութիւնը առանց Ֆինլանդիայի. բաժանւում է հետեւեալ դասակարգերի. 1000 հոգուն ազնուական գալիս է 15, հոգեւորական—5, վաճառական և պատուաւոր քաղաքացի—5, քաղաքացի—106, գիւղացի 771, կոզակ—23, այլազգի—66 և այլք 9.

Ազգաբնակութեան բաշխումը pus պարապմունքի.—1897 թ. աշխարհագրութեամբ ամբողջ ազգաբնակութեան 63,702 հազար երկսեռ անձն ապրում է գիւղատնտեսութեամբ, արդիւնաբերութեամբ 12,286 հ., առեւտրով 6,750 հ., այլ պարապմունքներով 12,904 հ.: Այդ նշանակում է, որ ազգաբնակութեան ամեն մի հազարից 743 մարդ ապրում է գիւղատնտեսութեամբ, միայն երկրագործութեամբ 703 մարդ, արդիւնաբերու-

թեամբ 98, առեւտրով 56 և այլ տեսակ պարապմունքներով 104:

Երկրագործութեամբ պարապողների թիւը Ռուսաստանում անհամեմատ շատ է և մեծ մասս է կազմում, քան այլ երկրներում. 1000 աշխատանքի հասակի մարդուն ընկնում է 719 մ., Իտալիայում—594 մ. Ֆրանսիայում - 443 մ. Գերմանիայում - 375 մ. Միացեալ Նահանգներում—395 մ. Բելգիայում—211 մ. Անգլիայում—124 մ.:

Յոռեների միջին թերթը 10 տարւայ ընթացքում 1895—1901 թ. մի դեսեատինը տուել է փթի հաշւով Անգլիայում—138 փ., Գերմանիայում—121 փութ, Ֆրանսիայում—79 փ., Իտալիայում—59 փութ, Ռուսաստանում - 42 փութ:

Ազգաբնակութեան բաշխումը pus գիւղի եւ բնդաքի.—Ռուսաստանի մօտ 130 միլիոն ազգա-

բնակութիւնից քաղաքներում ապրում են 19,0480 հոգով, իսկ գիւղերում 130,228,3, այսինքն 100-ից 87,2 կազմում է գիւղի բնակչութիւնը, իսկ 12,8 քաղաքների։

Քաղաքների բնակչութիւնը համեմատած ուրիշ երկրների հետ, շատ չնչին է։

1897 թուին գիւղական ազգաբնակութիւնը ապրում էր 567,568 գիւղերում. որով ամեն մի գիւղին գալիս էր 194 մարդ։ Զանազան տեղերում գիւղերի մեծութիւնը տարբեր է։ Եւրոպական Ռուսաստանում ամեն գիւղին գալիս է 167 բն., Լիհատանում 171, Փինլանդիայում 229, Նովկոռում 671, Սիբիրում 418 և Միջին Ասիայում 885 բնակիչ։

Բոլորովին հակառակ պատկեր ունի Ըրևմտեան Եւրոպան։ Այնտեղ ուրիշ շատ բնակւում են քաղաքներում, քան գիւղերում։ Իտալիայում ամեն 100 մարդուց 26-ը ապրում են քաղաքներում, Ֆրանսիայում — 41, Գերմանիայում — 54, Անգլիայում — 77

1901 թուականին ամբողջ Ռուսաստանում 100,000 բնակիչ ունեցող հաշւում էր 35 քաղաք։ Հետեւեալ քաղաքներում բնակիչները 150,000 ից աւելի են. Պետերբուրգը — 1,439,375 բ., Մոսկուան 1,092,360 բ., Վարշաւան — 756,426 բ., Օդես-

սան — 449,673 բ., Լոդզը — 351,570 բ., Կիեր — 319,000 բ., Ռիգան — 256,197 բ., Խարկով — 197,405 բ., Բագուն — 179,133 բ., Վիլնան — 162,633 բ., Թիֆլիսը — 160,645 բ., Տաշկենտ — 156,506 բնակիչ։

Հացի եւ կաւճոմի գործածութիւնը տարեկան միջին հաշւով ամեն բնակչին գալիս է Ռուսաստանում — 22 փութ, Գերմանիայում — 28 փութ, Ֆրանսիայում — 34 փութ, Դանիայում — 57 փութ, Հիւսիսային Ամերիկայում — 62 փութ։

Ժողովրդական կրթութիւնը. — 1900 թուին Ռուսաստանում տարրական դպրոցների թիւը հասնում էր 90,000 ի, ուր սովորում էին 5,389 հազար երեխաներ, իսկ 7,300,000 երեխայ գուրս էին մնացել տեղ չլինելու պատճառով։ Բոլորովին այլ պատկեր է ներկայացնում ուրիշ երկիր-

Ներում. Ռուսաստանում ամեն 208 քառ. վերստ վրայ գալիս է մի դպրոց, իսկ Իտալիայում—4 քառ վերստին, Գերմանիայում և Անգլիայում—8 ք· վ: Ռուսաստանում 2117 մարդուն մի դպրոց է գալիս, իսկ Անգլիայում—1300 հոգուն, Բելգիայում—990 հ., Գերմանիայում—910 հ: Կիրակնօրեայ դպրոցներն ևս չատ քիչ են. 1904 թվին ամբողջ Ռուսաստանում կար ընդամենը 89 դպրոց, ուր սովորում էին հատակաւորները. մինչդեռ նոյն դպրոցներից, նոյն թուականին Անգլիայում հաշւում է 53,590, Գերմանիայում—7,712, նոյն իսկ փոքր Ֆինլանդիայում 7611.

Միջնակարգ եւ բարձր դպրոցներ.— 1897 թ. միջնակարգ դպրոցների թիւը 854 է, 188,983 ուսանողներով (բացառապէս մինիստերական և Սինոդին ենթակայ): Համալսարանների թիւը Ռուսաստանում 10. Ըրտասահմանում որանց թիւը անհամեմատ չատ է: Չիխներիայում 445 հազար մարդուն գալիս է մի բարձրագոյն դպրոց, Իտալիայում 476 հազարին, Ֆրանսիայում—802 հազարին, Գերմանիայում 2,376 հոգուն, իսկ Ռուսաստանում -10,616 հոգուն Չիխներիայում 27 հազար հոգուն ընկնում է մի միջնակարգ դպրոց, Ֆրանսիայում 25 հազարին, Բելգիայում

—37 հազարին, Գերմանիայում—49 հազարին, Ռուսաստանում—103½ հազարին:

Ժողովրդական լուսաւորութեան ծախսը իւրաքանչիւր բնակչին գալիս է.—Հիւսիսային Ամե-

րիկայում—7 ր. 10 կ., Չվէյցարիայում—5 ր 40 կ., Անգլիայում 3 ր. 80 կ., Գերմանիայում—3 ր. 50 կ., Ֆրանսիայում—2 ր. 70 կ., Չվէդիայում—2 ր. 50 կ., Ւուսթրօ Վնդրիայում—1 ր 60 կ., Իտալիայում—80 կ, Ռուսաստանում—44 կ.

Ժող. կրթ. ծախ.—1900 թուականին ժողովրդական կրթութեան համար ծախսուում էր չատ չնչին գումար, այնպէս որ ամեն մի հոգուն գալիս էր 7—8 կոպ: Հաշւած է. որ վիճակական գործի համար ծախսուած գումարը եթէ բաժան-

ւի ազգաբնակութեան վրայ, ամեն մարդուն կը գար 3 ր. 16 կ.։ Նիւկայիս տարրական կրթութեան համար ծախսը հաշւում է 31 կ., սակայն այդ թիւը շատ չնչին է, երբ համեմատւի արտաստմանում նոյն նպատակով արած ծախսի հետ։

Դանձարանը տարրական կրթութեան ծախքի $^1/_3$ է վճարում, $^1/_3$-ը վճարում է գեմստվօն։ Բացի սրանցից վճարում են նաև քաղաքային վարչութիւնները, մասնաւոր անձինք և այլն.—1908 թ. պետական ծախքի հաշւում ժողովրդական կրթութեան ծախք նշանակւած էր 53,991,818 րուբլի։

Լրագրների վեճակագրութիւն. — Իւրաքանչիւր տարի լրագիր է ուղարկւում ամեն հազար բնակչին — Զվէցարիայում — 4,470, Գերմանիայում — 3,817, Ֆրանսիայում — 1,246, Աւստրօ-Վէնգրիայում — 635, Անգլիայում — 411, Ռուսաստանում — 2։

Ազգաբնակութեան զբաղմունքները.—1897 թւի աշխարհագրի համեմատ 1000 տղամարդուն բնկնում էր 293 գրագէտ, իսկ 1000 կնոջը — 136։ Ռուսաստանում բնակւող գանազան ազգութիւններից լաւով պակաս գրագէտ են ռուսները. 1000 սուս տղամարդուն բնկնում է 296 գրագէտ, 1000 կնոջը — 9, իսկ գերմանացի 1000 ին 590 տղամարդ և 586 կին, հրէաներին 490 տղ և 282 կին, լեհերին — 350 տ. 290 կին։

Լեզուների տարածումը. Թաթարները 33, միլիոն, Փորթուգալերէնը — 13 միլ. Սպաներէնը — 43 միլ. Ֆրանսերէնը — 51, միլ. Ռուսերէնը 75 միլ. Գերմաներէնը — 75, միլ. Անգլիերէնը 111 մ։



Երկաթուղիների տարածութիւնը.—Ամեն մի 1000 քառ. կիլոմետր տարածութեանը երկաթուղու գծեր են գալիս. 1) Բելգիայում—156, 2) Անգլիայում—117, 3) Գերմանիայում—106, 4) Ֆրանսիայում—87, 5) Աւստրօ-Հունգ.—67, 6) Ռուսաստանում—12, 7) Տանկաստանում—12:

Հոգեւորականութիւն.—1902 թ. Ռուսաստանում ոչ կուսակրօն հոգեւորականներ (բացի կինոտրականն, ռազմականն և ծովային պաշտօնեաներում հոգածներից), կային հետեւեալ քանակութեամբ—տւող քահանաներ—2340, քահանաներ—44,487, սարկաւագներ—14,960 և սաղմոսերգուներ—43,552, բոլորը 105 հազարից աւելի:

Կուսակրօն հոգեւորականներ հաշւում են—վարդապետներ—8,455, կոյսեր—10,960, վանքեր—6,561, պարուհիներ—32,309, բոլորը 58 հազարից աւելի, որոնց թւում աղամարդ՝ մօտ 15

հազար, կին—երեք անգամ աւելի, մօտ—43 հազ.:

Ռուսաստանում կայ 49,703 եկեղեցի, որոնց թւում ծխական եկեղեցիներ—37,465, մայր եկեղեցիներ—724, անային գերեզմանատուն և այլն 11,514: Բացի դրանից աղօթատներ և մատուռներ—19,859, վանքեր—862, որոնցից 500 աղամարդկանց և 362 կանանց:

Ռուսաստանը բաժանւում է 66 թեմերի, (բացի այդ, մի թեմ էլ Ամերիկայում կայ): Թեմերը կառավարւում են երեք միտրօպօլիտներով, 14 արքեպիսկոպոսներով և 50 եպիսկոպոսներով: 1903 թ. մի եպիսկոպոսութիւն էլ հիմնւած է Պէկինում:

Ջօրէր.—Ռուսաստանի ամբողջ ժողովուրդը պինւոր է տալիս իր թւի համեմատական քանակութեամբ 1907 թ. 440 հազար նորակոչներից Վելիկօր մնները տւել են 302 հազար, Բիլօրօսները և Մալօրօսները 130 հազար, Լէհերը—30 հազար, Հրէաները—18 հազար, Թաթարները—8 հազար և այլն:

Ըստ դաստակարգի ամենից մեծ տոկոս պինւոր տալիս է գիւղացութիւնը (1000 բնակչին 773 գիւղացի է գալիս), նրանք 1907 թւականին աւել են 1000-ին 890 մարդ, մնչդ նները, որոնց

1000-ին ընկնում է 106 մարդ, սակայն կան 102 պինսը վաճառականները, որոնց 1000 ին 2 մարդ է գալիս, չեն սակայն և ոչ մի պինսը, պարահանները, որոնց 1000 ին գալիս է 15 մարդ, սակայն են 4 պինսը:

Զանազան տերութիւնների պինսորական ցամաքային ոյժերը.—

	Խաղ. ժամ.	Պատ. ժամ.
Ռուսաստան	1,383,000	3,615,400
Ֆրանսիա	600,965	4,372,000
Իտալիա	291,952	1,126,301
Գերմանիա	619,072	4,350,000
Մեծ Բրիտանիա	410,162	1,036,714
Աւստրօ Ունգարիա	382,616	1,827,178
Միացեալ Նահանգներ	75,250	10,845,267
Ճապոնիա	640,701	1,388,000

Իւրաքանչիւր 10 հոգուց բնակչին խաղաղ

ժամանակ պինսը է ընկնում Գերմանիայում—95 մարդ, Աւստրօ-Ունգարիայում—90 մ., Ֆրանսիայում—72 մ., Ճապոնիայում—50 մ., Անգլիայում—5 մարդ:

Զինուորական ծախսերը.— Ներկայ պետութիւնների պինսորական ծախսերը կազմում է $^1/_3$—$^1/_5$ մասը պետական բոլոր ծախսերի: Զինուորական ծախսերը հաշւում են այսպէս.—

Մեծ-Բրիտանիա	293 մ. ր. կամ	35,3%	բոլ. ծխ.
Ռուսաստան	455 »	» 34,9	» »
Ֆրանսիա	355 »	» 29,3	» »
Իտալիա	135 »	» 22,5	» »
Աւստրիա	99 »	» 19,0	» »
Պրուսիա	205 »	» 18,2	» »

Միջին հաշւով բոլոր եւրոպական պետութիւնները իւրաքանչիւր տարի ցամաքային և ծովային ոյժերի համար ծախսում են $2^1/_2$ միլիարդ բուրլի: Բոլոր այդ գործերի մօրիլիզացիայի դէպքում պետական ծախսերը հասնում են $12^1/_2$ միլիարդի կամ 35 միլիոնի օրական:

Պետական բիւդժէն 1909—10 թին պետական մուտքը հաշւում է 2,535 միլ. 810 հ. ր. և ելքը 2,510 միլ. 36 հազար ր., 1903 թ. պետական մուտքը հասնում էր 2,031,800 հազ. ր. և ելքը – 1,883 միլ. բուրլի: Վերջին 6 տարւայ ընթացքում մուտքը աւելացել է 445 միլ. բուրլի,

իսկ ելքը—589,2 միլ. րուբլի:

Մուտքեր կազմում են հետևեալ ազբիւրները.

1. Գառավարչական ձեռնարկութիւններից (օր խմիչքների վաճառումից և այլն) 826 մ. ր.

2. Պետական գոյքերից (ինչպէս երկաթուղիներից և կապիտալից)—699,3 մ. ր.

3. Ընդհանուր հարկեր—519,6 մ. ր.

4. Ուղղակի հարկեր—191,1 մ. ր.

5. Պօշլիններ—133,3 մ. ր.

6. Այլ եկամուտներ—107,7 մ. ր.

Եթէ խմիչքների պետական վաճառման գումարը ուելացնի անուղղակի հարկերի վրայ, (որ կանոնաւոր էլ կլինի, որովհետև այս եկամուտը կազմում է պլեսուրապէս բարձր ակցիզից), այն ժամանակ տոանձին պետական եկամուտի ազբիւրները այլ կերպ կդասաւորուին:

Այսպիսով պետական եկամուտի կէսը կազմում են անուղղակի հարկերը, այսինքն գործածութեան մի քանի հարկերից: 25 տարուայ ընթացքում (80 ական թուականներից մինչև 1907 թ.) ուղղակի հարկերը ուելացել են 5,4%, իսկ անուղղակի հարկերը—28,4%, այսինքն համարեա վից անգամ ուելի: Մասնաւորապէս ծխախոտի հարկը չաւացել է 281,2%, նաւթայինը—159,1%, լուցկինը—174,8%, մաքսը—149,5%, շաքարինը—2377,6%: Այս ուելացումները նրանից չեն, որ շատ են սպառում, այլ նրանից, որ մեծ ծախս է առնում: Այսպէս օր. շնորհիւ մաքսի բարձր տուրքի, ապրանաւորութիւնը ներսից տարի ուելի է վճարում քան ուարկեայ գործածքների համար—100 միլ. ր., իսկ մետաղների համար—130 միլ. րուբլի: Ամերիկայում չուգունի փութը արժէ 19—24 կ., իսկ Ռուսաստանում մի միայն մաքսային է առնում փթին—30 կ: Գամ օր. Թէչը, Ռուսաստանում ամեն բնակիչ միջին հաշուով տարեկան Թէչ է գործածում 1/8 ֆունտ, Անգլիայում մօտ 7 ֆ, մինչդեռ Ռուսաստանում մարդի տուրքը մի ֆունտ Թէչին հաշուում է 79 կ. իսկ Անգլիայում—17 կ: Եթէ տասցած տուրքը բաժանենք գործածողների Թուի վրայ, այն ժամանակ կտասնանք մօտ 5 ր, Ֆրանսիայում—3,1 րուբ, Գերմանիայում—1,1 ր. շաքարի ակցիզը մօտ 70 կ. ծխախոտինը—30 կ. լուցկինը—1 կոպէկ:

Բոլոր ուղղակի և անուղղակի հարկերը ընկնում է ամեն հոգու՝ Ռուսաստանում 9,6 ր, Գերմանիայում—15,7 ր. Իտալիայում—16,5 ր. Աւստրիայում—17,9 ր., Ֆրանսիայում—18,9 ր. Անգլիայում—30,3 ր: Ռուսաստանում բոլորից պակաս է հարկը այն պատճառով, որ ժողովուրդը

ապրատ է, այնպէս որ պրանից տեսլի անհնար է: եթէ հաշուի առնենք բոլոր կապիտալը և գոյքը, որ աիրապետում է ժողովուրդը. այն ժամանակ իւրաքանչիւր բնակչին գալիս է 600 ր. Իտալիայում—1000 ր. Գերմանիայում—1600 ր. Ֆրանսիայում—2550 ր. Անգլիայում—3300 ր.: Աշխատանքի արդիւնքն էլ Ռուսաստանում քիչ է, քան այլ տեղերում: Միջին հաշուով Անգլիայում ամեն բնակչին տարեկան գալիս է արդիւնք 380 րուբ. Ֆրանսիայում—310 ր., Գերմանիայում—250 ր., Իտալիայում—140 ր., Ռուսաստանում—40 ր.

Ելիր 1909 10 թ. հաշուած է 2,510 մ. 36 հ. ր.

1. Պետական օպերացիաներ—774 մ. ր.

2. Պետական պահպանութեան (զօրքի և այլն) - 536,4 մ. ր.

3. Փոխառութեան վճար—396,7 մ. ր.

4. Կառավարութեան ծախսեր - 386,8 միլ. րուբլի:

5 Լուսաւորութիւն—78,4 մ ր.

6. Ճանապարհներ (բացի հրկաթուղիներից) —75,5 մ. ր.

7. Գոսա, հետագիր, տելեֆոն—51,1 մ. ր.

8. Ընութիւնների—39,7 մ. ր.

9. Վաճառականութիւն և արդիւնարերութիւն—5,0 մ. ր.

10. Այլ և այլ ծախքեր—116,5 մ. ր.

Պետական օպերացիան կազմում են արքունական ձեռնարկութիւնների ծախքից (784,1 մ. րուբլուց պետական հրկաթուղիների, համիչքների մնացորդի համար դնում է 746,7 միլ. րուբ.): Կառավարութեան ծախսերն են արքունական պալատի, բարձրագոյն պետական հաստատութիւնների, կենտրոնական և տեղական ադմինիստրացիայի, հոգևորականութեան, պօլիցիայի և այլն:

Այսպիսով ամեն 100 րուբլուց, որ գնում է պետական ծախքի համար, պետական ապերացիաների—31 ր. 70 կ., պետութեան պահպանութեան համար (զօրք և նաւատորմ) 21 ր. 70 կ. փոխառութեանց վճարում—16 ր. 10 կ., չինութիւնների համար—1 ր. 60 կոպ., վաճառականութեան և արդիւնաբերութեան համար—20 կ.:

Պետական պարտքը հետևեալ պատկերն է ներկայացնում. 1861 թ. պարտքի գումարն էր—1,264 մ ր., 1876 թ.—2,949 մ. ր., 1886 թ.—4,418 մ ր., 1902 թ.—6,651 մ. ր., 1906 թ.—8,625 մ. ր., 1907 թ.—8,735 մ. ր., 1908 թ.—8,925 մ. ր.: 1903—1908 թ. Ռուսաստանի պարտ-

քը չաոաոցել է 2 միլիարդից աւելի. միայն 1906 թ. պարարքը չաոացել էր 1,275 մ. ր.: Պարարքի չաոաւելեամբ Ֆրանսիան է միայն առաջ Ռուսաստանից (11,310 մ. ր.): Հաշւած է, որ Ռուսաստանի իւրաքանչիւր բնակիչ իր տարեկան 100 բուրլի եկամուտից փոխառութեան համար վճարում է 4 ր. 80 կ. Ֆրանսիային 3 ր. 90 կ., անգլիացին —2 բուր. 20 կոպ. գերմանացիները —50 կոպ.:

ԱՇԽԱՐՀԻՍ ՈՍԿԻՆ ԻՒ ԱՐԾԱԹԸ

Ոսկու արտադրութիւնը 1909 թիւն

(Կիլոգրամը հաւասար է 2 ֆ. 42 մս. 41 պօլ)

Հարաւային Ամերիկա	257280	կիլոգրամ
Միացեալ Նահանգ. (Ամեր.)	149975	»
Աւստրալիա	106843	»
Ռուսաստան	48723	»
Մեկսիկա	35875	»
Բրիտան. Հնդկաստ.	15586	»
Կանադա	14730	»
Հիւսիսային Ամերիկա	16901	»
	683748	կիլոգրամ

Արծաթի արտադրութիւնը 1909 թիւն

Մեկսիկա	2299920	կիլոգրամ
Միացեալ Նահանգ. (Ամեր.)	1702068	»
Կանադա	867141	»
Աւստրալիա	508842	»
Օպկրու	297546	»
Գերմանիա	165876	»
Եւրոպ. մեւս երկրները	274223	»
	6569689	կիլոգրամ

ԲԱՐԱՇՈՒԽԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ 1910 Թ.

Հազար մետրի տօն (1000 մետր տօնը հաւասար է 61048 փունտի)

Միաց. Նահանգ. (Ամեր.)	441617	մետ. տօն.	
Մեծ-Բրիտ.	264505	»	»
Գերմանիա	221936	»	»
Աւստր. Հունգ.	50000	»	»
Ֆրանսիա	38570	»	»
Ռուսաստան	24572	»	»
Բելգիա	13127		»
Նապոնիա	14791	»	»
	Գումար 1,989541	մետ. տօմ.	

ԲՐԱՀՄԻՆԵՐԻ ՀՈՎԻՏԸ

ԿՐՈՒՄՄԱԽԵՐ

Հնդկաստանի ամենագեղեցիկ վայրերից մեկում, յաւերժ կապոյտ երկնքի տակ, կայ մի խաղաղ հովիտ՝ ամեն կողմից շրջապատուած լեռներով։ Այնտեղ վաղ ժամանակներից ապրում է հնդկական մի ցեղ։ Այդ մարդիկ ապրում են որպէս մի ընտանիք և երկրպագում են մի անտեսանելի Աստծու՝ Բրահմային։

Մի անգամ այդ հովիտն եկաւ հնդկական երիտասարդ տրքայորդին։

Նա ասաց, որ ուզում է տեսնել Բրահմայի խաղաղ երկրպագուների ներկայացուցչին։

Ընծանօթ երիտասարդի առաջ դուրս եկաւ բարձրահասակ ու պատկառելի մի ծերունի և ասաց.

— Համբոյր քեզ, անծանօթ երիտասարդ, դու մոլորեցրիր, թէ՛ ինչպէս ցանկացար տեսնել մեր այդ խաղաղ աննկունը։

— Ես ինքս կամեցայ տեսնել մօտ գալ,— պատասխանեց երիտասարդը.— ես եկել եմ..

Ծերունին ընդհատեց նրան.

— Մեր խաղաղ հովտում մենք միշտ ուրախութեամբ ենք ընդունում ամեն մի անծանօթ եկուորի, առանց հարցնելու թէ նա ով է և ինչի համար է եկել։ Մեր մէջ կայ մի հին սովորութիւն, որի համաձայն մենք միմիայն երրորդ օրն ենք հարցնում եկողի անունը և գալու նպատակը։ Այդպէս ուրեմն տպրիր մեզ մօտ որպէս եղբայր և հանգիստ սրտով օգտիր այն ամենից, ինչ որ մեզ մօտ կգտնես։

Երիտասարդ տրքայորդին խոնարհ գլուխ տուց և հետևեց ծերունուն դէպի սաւերախիտ արմաւիները։ Ցզամարդիկ, կանայք, երիտասարդները պարզ ու սիրալիր ընդունեցին անծանօթին։ Նրանք այնպէս ուրախալից ողջունեցին հիւրասարդին, տանս թէ վաղուց ճանաչում ու սիրում էին նրան։ Երեխաները թռչկոտում էին նրա շուրջը և նրան ծաղիկներ մատուցանում։

— Մենք միշտ միասին ենք ապրում,— ասաց ծերունին։ Մեր սրտերում բնակւում է Բրահման և մեր զգացմունքները չեն հնանում։ Մենք տեսնում ենք Բրահմային նրա բոլոր արարածների ու պարգևների մէջ. չկայ ոչ մի ցանկութիւն, որին մենք չկարողանայինք բաւարարութիւն տալ, ուստի և մենք յախտաւոր ենք։

Մի խոր հառաչ դուրս թռաւ երիտասարդի կրծքից։

— Դու ճանապարհ ես եկել ու յոգնած ես,

ասաց Ծերունին և ձեռքով նշան արաւ։

Նոյն ակնթարթում երկու պատանի ամանով ջուր բերին հիւրի ոտները լուանալու, իսկ երկու ջահել աղջիկներ մատուցին նրան հագուի ամենալաւ մրգերից։ Ըրքայտրգին չէր ուզում թոյլ տալ, որ իր ոտները լուանան, սակայն Ծերունին ասաց.

—Այդ հիւրի սրբազան իրաւունքն է մեզ խոտրութիւն չենք դնում տիրոջ ու ծառայի մէջ. ամեն մի հիւր մեզ համար հաւասարապէս մարդ է, սիրոյ Բրահմայի սրտին։

Ըրքայտրգին լուռ էր, սակայն երեսը սաստիկ կարմրել էր և ծնկները դողում էին։

—Նա իրան լաւ չէ պահում,—ասացին ջուր բերող պատանիները.—նրա ծնկները դողում են։

—Նա դեռ չէ հաշակել մեր մրգերից,—կրեկցուելեամբ ասացին աղջիկները։

Ծերունին մօտեցաւ նրան ու ձեռքը բռնեց։

—Որդեակ իմ—ասաց նա.—չորքը նեղացրել է քեզ։ Գնանք, ես քեզ կատնեմ տուն, որ հանգստանաս։ Քունը կը կազդուրէ քո ոյժերը և դու վաղը մեզ հետ միասին կաօնես մեծ ուշիր։

Ծերունին տարաւ երիտասարդին խրճիթը։ Այդտեղ անկողին էր պատրաստած հասաւէտ խոտերից, իսկ վերևից փռուած էին բարակ վերմակներ՝ ճերմակ, որպէս նոր ձիւն։

—Տեսնո՞ւմ ես,—ասաց Բրահմինը.—այստեղ դու կարող ես հանգիստ քնել։ Դու կքնես հէնց իր՝ Բրահմայի ձեռքերի վրայ, որովհետև այդ անուշարոյր խոտերը նրա պարգևներն են, իսկ սպիտակ ոտաններդ յիշեցնում են նրա մաքրութիւնը։

Մինչդեռ Ծերունին խօսում էր, նրա մատն երկու տղաներ և բերին մի գաւաթ՝ մուգ-կարմիր գինով լիքը։ Ծերունին առաւ գաւաթը և տուց որբայորդուն։

—Մենք ինքներս,—ասաց նա,—ուտում ենք մեր պաշտերի մրգերն ու խաղողը այն դրութեամբ, ինչպէս որ բնութիւնը տալիս է մեզ։ Իսկ հիւանդի կամ յոգնածի համար մենք ճմլում խաղողի հիւթը։ Այդ միակ արիւնն է, որ մենք թափում ենք,—աւելացրեց նա ժպտալով.—սակայն սա ոչ ոքի տանջանք չի պատճառում, այլ միայն թեթևացնում է տանջանքը։ Խմիր, սիրելի որդեակ, այդ քեզ կը կազդուրէ։

Երիտասարդը վերցրեց գաւաթը և մինչև նա խմում էր, սաստիկ դող բռնեց նրան։

Նա տուց գաւաթը Ծերունուն. այդ ժամանակ հիւսում լուսեցին հանդիսաւոր երգի ձայները...

—Այդ ինչ բան է—հարցրեց արքայորդին:

—Դա երեկոյան երգն է,—պատասխանեց Բրահմինը: Արևը մայր է մտնում և մենք ընդհանուր դոհութիւն ենք վեր առաքում Բրահմային այն բանի համար, որ նա մեզ տալիս է լոյս և կեանք: Մենք կարծում ենք, որ նրան հաճելի է երջանիկ ու սիրող մարդկանց աղօթքը: Մենք քեզ ևս չենք մոռանալ մեր աղօթքներում, չէ՞ որ դու էլ այժմ մեր ընտանիքի մէջն ես...

—Թող Բրահման քեզ հանդիստ ու երջանիկ դուն պարգևէ:

Այս խօսքերն ասելով՝ ծերունին գլուխ տուց արքայորդուն և դարս եկաւ խրճիթից: Սակայն արքայորդին չկարողացաւ նայել ծերունու աչքերին և պատասխանել նրա բարեմաղթութեանն: Նա վերմակով ծածկեց իր գլուխը: Երիտասարդը մնաց մենակ, սակայն աչքերին քուն չէր գալիս: Նրան թւում էր, թէ արիւնը եռում է իր երակների մէջ. նա լսում էր իր սրտի բաբախիւնը: Նա յիշում էր այդ անցկացրած օրը, որ նրան այնքան լուսաւոր ու պայծառ էր երեում, իսկ իր հոգու մէջ խաւարը աւելի ու աւելի սաստկանում էր:

Խաղաղ լուսընկայ գիշերը ծառերի քնքոյշ տերևների միջից լուսաւորում էր նրա սենեակը:

Նա անհամբեր սպասում էր լուսանալուն և միայն առաւօտեան դէմ փոքր ինչ նրանից անհանգիստ քնով, և յաճախ զարթնում էր սարսափելի երազներից:

Արևի առաջին ճառագայթների հետ նա աչքերը բաց արաւ:

Հեռուում կրկին լսւում էր քաղցր երգի ձայնը. Բրահմիններն ընտանիքը ընդհանուր աղօթքով ողջունում էր առաւօտեան գալուստը:

Արքայորդին անչափ յուզւած էր: Նա ինքն էլ ուզում էր երգել նրանց հետ, բայց չէր կարողանում:

Այդ պահին նրա դուռը կամացուկ բացւեց և ծերունին ներս նայեց դռան արանքից:

Նա կարծում էր, թէ երիտասարդը հիւանդ է և վախենում էր չլինի թէ զարթեցնի նրան, ուստի և ներս չէր մտնում:

Բայց երբ նա տեսաւ, որ արքայորդին քնած չէ, քաղցրութեամբ ողջունեց նրան և հարցրեց առողջութիւնը:

Այդ տեսակ հոգատարութիւնը խորապէս յուզեց երիտասարդին, և նա պատասխանեց.

—Ինչպիսի սիրոյ հանդիպեցի ես ձեր հոգում:

— Որդեակ իմ,— ասաց Բրահմանը, — մենք պաշտում ենք մեծ Բրահմային և հոգ ենք տանում նրա սմեն մի արարածի համար: Բայց առանձնապէս սիրում ենք մենք մարդուն, որովհետև մարդը նրա պատկերի նման է ստեղծած: Մենք աշխատում ենք սմեն մի մարդու այնքան բարութիւն անել, որքան կարող ենք: Չէ՞ որ իրա՝ Բրահմայի համար մենք ոչինչ անել չենք կարող: Այժմ գնանք ասենլու մեզ հետ մեր սիրոյ տօնը:

Դեռ ծերունին չէր վերջացրել խօսքը, երբ երիտասարդը չկարողանալով զսպել իրան՝ սկսեց հեկեկալ: Նա խնդրեց ծերունուն, որ ցոյց տայ իրան այն ճանապարհը, որով եկել էր. նա այլևս չէր ուզում մնալ հովտում: Ծերունին զարմացաւ, բայց ոչինչ չասաց և առաջնորդեց երիտասարդին դէպի այն ճանապարհը:

Այդտեղ երիտասարդը սկսեց խօսել.

— Ես խոստում եմ ձեր հովիտը ընդմիշտ, ես կարծում էի, թէ ձեր ընտանիքի մէջ հանդիստ կը գտնեմ, սակայն երբէք այնքան տանջանք չեմ զգացել, ինչպէս այստեղ ..

— Ես չեմ հասկանում քեզ— ընդհատեց նրան Բրահմինը և զարմացած նայեց նրան:

— Ձեր հովիտը,— բացականչեց երիտասարդը — խաղաղութեան ու անմեղութեան տպաստան է...

Ծերունին չարունակեց.

— Մենք ուրիշ արատներ չգիտենք, բացի երջանկութեան ու զոհութեան արցունքից: Ոչ մի կաթիլ արիւն չի թափւում մեր երկրի վրայ: Այն հողը, որի վրայ մենք մեռնում ենք գալիս, մաքուր ու անբիծ է:

— Բայց ես մաքուր չեմ,— բացականչեց արթայորդին: Ահա թէ ինչու ձեր անմեղ հովիտը ինձ համար դառնում է տանջանքի տեղիւր:

Ծերունին լուռ էր, սակայն նրա հայեացքը լի էր կարեկցութեամբ:

Նրանք կանգնած էին սահմանի վրայ:

Երիտասարդը կրկին խօսեց.

— Երեսանասը ծերուն, քո բարութիւնը կարեսում է սիրտս. ահ, միթէ այդ բարութիւնը կարողանար բժշկել իմ սիրտը... Լսիր իմ խոստովանութիւնը: Ես Մահադա թագաւորի որդին եմ: Ես ալիսի ժառանգնեմ Հնդկաստանի երկիրները: Բայց իմ ձեռքերը թաթախւած են անմեղ արիւնով.. Իմ հրամանով ես սպանեցի մի խեղճ այրի կնոջ միհուձար որդուն: Իմ կատարած գործի յիշողութիւնը ինձ հանգիստ չի տալիս:

ես հեռացայ պալատից և յայս ունէի, որ ձեր հովտում հանգիստ կը գտնեմ: Բայց այդտեղ իմ գրութիւնը աւելի ևս անտանելի դարձաւ: Միթոյ ամեն մի հայեացք, որ թափանցում էր իմ խաւար սիրտը, կաթնեա մի հրեղէն կայծակ լինէր մութ գիշերւայ մէջ: Ես գալիս էի ձեզ մօտ և ուզում եմ լինքս ինձնից հեռանալ: Ներեցէք ինձ, և նիթ կարող էք, աղօթեցէք ինձ համար:

Այս խօսքերով նա թողեց Բրահմինին և խաղաղ հովիտն ու հեռացաւ այնտեղից:

Ծերունին նայում էր նրա հետից, մինչ որ նա ծածկուեցաւ լեռան միւս կողմում: Յետոյ աչքերով բարձրացրեց ձեռները դէպի երկինք և վերադարձաւ իր քնկերների մօտ, նրանց հետ միասին կատարելու սիրոյ մեծ օրը:

Թարգմ. **Ռափ. Պելիմ-Պեգամեան**

ԿԻՆԸ

Կոպիտ ձեռքերով տանջում էին Տիրոջը և պըսակի նոր փշերով պատում նրա գունատ ճակատը: Զինուորներից մէկը կարծես ուղղակի կատաղել էր Նրա դէմ: Նա վերցրեց ամենից փշոտ ճիւղը և բոլոր ոյժով խրեց Քրիստոսի խիտ մազերի մէջ, թարմ արիւնը հոսեց առուակի նման:

Քրիստոս դժւարութեամբ բարձրացրեց կոպերը, երկար, անթարթ նայեց պատանի զինուրի աչքերին և դարձեալ ցած թողեց իր ջինջ երկնագոյն աչքերը:

Պատանին ամբողջ մարմնով դողաց ու սարսափեց, նա կռացաւ և վերցրեց փշոտ թփերից մէկը, որի վրայ դեռ մնացել էր տրեան կաթիլի նման կարմիր վարդը, և քնքշութեամբ ճիւղը փաթաթեց Քրիստոսի գլխին:

Վարդը կախուեց Տիրոջ դժգոյն ճակատին և նրա բոլոր ինչպէս շունչ տարածեց թարթիչների և ծածկուած կոպերի վրայ:

Իսկ տերևները համբոյրի նման դուրեկան էին Նրա ցաւից ուռած երակներին:

Վերջապէս Նրան դուրս բերին մայր պատաստանատնից և տարան սպիտակ փշոտ ճա-

նապարհով։ Ցետոյ նրան տին Խաչը, որի ծանրութիւնը երկաթի նման սեղմեց ուսերը։

Նա ընկաւ ծնկների վրայ, բայց խուսափողական աչքով, ծանրութեամբ բարձրացաւ և տատանուելով շարունակեց ճամբան։

Նրան թւում էր թէ խաչը ամրողջովին անտանելի բեռի նման սեղմեց նրա հոգին։ Նա լսում էր ամրոխի քայլերի ձայնը, որ վազում էր նրա յետևից փշոտ ճանապարհով և լսում հազար ու ու մէկ վիրաւորական խօսքեր։

Ընկը այրում էր։ Նա տեսնում էր միայն այն հարթ, սպիտակ ճանապարհը իր աջերի տակ, զգում էր վարգի բուրմունքը և տանջւում էր արեւի կիզիչ ճառագայթներից։

Ցանկարծ մի տաւեր որոշւեց ճանապարհի վրայ և Ցիսուս տեսաւ կնոջ զգեստի ճկուն ծալքերը։

Նա բարձրացրեց աչքերը։ Նրա առջև կանգնած էր մի հրաշալի ջահել կին։

Եւ Նա, որ երբէք չէր զգացել մարմնական սէր, զգաց Նրա շրթունքները զգլզգլոցին հակեակնքից։ Նա ազաչանքն աչքերում արտասանեց.—«Ո՜վ, թաղմացրու քունքերիս այրող վէրքերը, շփիր նրանց քնքոյշ մատներով»։

Ջահել կնոջ աչքերը, որ գիւթիչ էին և երբէք արտասուել չգիտէին, վայր նայեցին Նրա հայեացքի տակ։ Նա բարձրացրեց հայեացքը. . Եւ Ցիսուս չնորհակալութեամբ փակեց աչքերը, ողասելով նրա շփումին։

Ցանկարծ Ցիսուս զգաց, որ փշէ պսակը ցնդուեց։ Նա բացեց աչքերը։

Պինր Նրա ճակատից պոկել էր վարգը և ժպտալով ամրացնում էր իր շքեղ, սև մազերի մէջ...

Ո՞ՐՆ Է ԱՒԵԼԻ ԲԱՐՁՐ

ՀՐԵԱԿԱՆ

Ամեն անգամ երբ հասնում էր արեւադայի ազօթքի ժամը, յանկարծ անհետանում էր մեծ ոարբին։ Նրան ոչ մի տեղ չէր կարելի գտնել, ոչ սինագոգում, ոչ ազօթատնում, ոչ փողոցում և ոչ էլ նրա տանը։

Բայր հէր էր չքանում ոարբին։

Միամիտ ժողովուրդը կարծում էր թէ ոարբին ամեն առաւօտ բարձրանում է երկինք և այնտեղ բարեխօսում է Աստծուն հրէական ժողովրդի համար, ազօթում որ հրէաները լինեն բա-

բեպաշտ և բարի, առաջնորդ և եղջանիկ։

Այդպէս էր մտածում միամիտ ժողովուրդը։

Մէկ անգամ օտար քաղաքից նկատ այդտեղ մի հրէայ Զօլօմ անունով, և երբ լսեց թէ ինչ են պատմում ոարրի մասին, սկսեց ծիծաղել այդտեղի հրէաների վերայ։ Նա Սուրբ գրքից օրինակներ բերեց, որ նոյնիսկ Մովսէսը իր կենդանի ժամանակը չկարողացաւ բարձրանալ երկինք։

—Բայց ո՛ւր է գնում մեր ոարրին, հարցնում էր տարակուսած ժողովուրդը։

—Իմ ինչ գործն է այդ, պատասխանեց Զօլօմը ուսերը թափահարելով։ Բայց մտքումը դրեց իմանալ, թէ գիշերները ո՛ւր-է գնում ոարրին։

Հէնց նոյն իրիկուն, աղօթքից յետոյ Զօլօմը թաքուն նեռս մտաւ ոարրի իրեղէներ և խոտ։ նեց նրա անկողնի տակն ու սպասում է։ Նա վճռեց ամբողջ գիշերը չքնել, որպէսզի կարողանայ տեսնել, թէ առաւօտեան յետոյ չբացած ո՛ւր է գնում ոարրին, ուրիշը երևի նրա տեղը կ՚բռնէր, կամ ամենապակասը կ՚իրէր, բայց Զօլօմը այնպիսի հրէաներից չէ, գործն սկսել է, պէտք է վերջացնէ։

Ընշալոյսից առաջ լսում է Զօլօմը, որ արդէն խփեցին կոչնակը և աղօթքի են հրաւիրում։

Ոարրին վաղուց արդէն չէր քնած, Զօլօմը լսում էր նրա հառաչանքը։ Իսկ ով որ լսել էր ոարրի հառաչանքները, նա գիտէ թէ որքան խոհեմած վիշտ և ցաւ կար ամբողջ Իսրայէլի համար նրա սրտում։

Զօլօմը լսում ու կուշէ է գալիս, ոարրին վերքը մահճակալի վրայ, իսկ Զօլօմը մահճակալի տակ։ Յետոյ Զօլօմը լսում է, թէ ինչպէս մահճակալները սկսում են ճռճռալ, ինչպէս տան միւս անդամներն սկսում են վեր կենալ, կարգալ աղօթքը, լանալ ձեռքերը և գնալ իրենց գործին։ Տան մէջ նորից խաղաղ է ու մութն, լուսամուտի փեղկերի ճեղքերից հազիւ նեռս է թափանցում աղօտ լոյսը...

Յետոյ խոստովանեց Զօլօմը, որ նրան պատեց երկիւղը, երբ մենակ մնաց ոարրի հետ, մարերն սկսեցին բարձրանալ գլխի վրայ։ Հանո՛ւք բան է մենակ մնալ մեծ ոարրի հետ։

Վերջապէս ոարրին վեր կացաւ տեղից, ըսկզբում լացուց, աղօթեց, յետոյ մօտեցաւ պահարանին, վերցրեց այնտեղից մի կապոց և ըսկսեց դուրս հանել կապոցից նրա պարանոցածը։ Զօլօմը նկատեց, որ դրանք գիւղացու շորիք են, իր ամէն պիտոյքներով, քուրքի գրպանից կախ ուել էր հատ պարանի ծայրը։ Ոարրին հագաւ

գիւղացու շրթերը և դուրս գնաց տանից։ Զօլօմը համացուկ հետևից նրան։

Խոհանոցից անցնելու ժամանակ աղջիկն կանգնեց, դուրս քաշեց նստարանի տակից կացինը, անցրեց գօտու մէջ և դուրս եկաւ փողոց։ Զօլօմը տհիմ փողոցում է, տասմ տասմի խըփում, բայց էլի հետևում է նրան և երկուսով դուրս են գալիս քաղաքից։

Քաղաքից դուրս տարածւում էր անտառը։ Ռաբբին գնաց դէպի այն կողմը։ Նա գնաց քառասուն յիսուն քայլ, կանգ առաւ և սկսեց.. կարել մի ծառ։

Զօլօմը տեսնում է, թէ ինչպէս ռաբբին կարում է ծառը, ինչպէս նա ճոճւում ու հառաչում է կացնի տակ։ Ահա վերջապէս ծառը ընկաւ։ Ռաբբին սկսեց կտրատել և մանրել մանր կառներին։ Ցետոյ նա մի մեծ կապոց արեց այդ փայտերից, դրեց իր ուսին, կացինը անցկացրեց գօտու մէջ և անտառից գնաց դէպի քաղաք։

Նա կանգ առաւ մի խոր փողոցում, խարխուլ կիսաքանդ խրճիթի դռան առջև և խփեց լուսամուտը։

— Ո՛վ հո — լուեց ներսից մի վախեցած ձայն։

Զօլօմը հասկացաւ, որ կինն է ներսինը։

— Ես եմ — պատասխանեց ռաբբին չինական բարբառով։

— Դու ո՞վ հո — հարցնում էն նորից խրճիթից։

— Վասիլն եմ։

— Ո՛ր Վասիլը և ինչ հո ուզում։

— Փայտ եմ բերել — պատասխանում է ռաբբին.— շատ էժան է, համարեա ձրի եմ տալիս և չպատահով պատասխանի, նա ներս է մտնում խրճիթը։ Զօլօմը նոյնպէս համացուկ ներս է մտնում և տուտւոտանն աղջամուղջի մէջ տեսնում է խեղճ տնեցիկ։ Մահճակալի վրայ պառկած է հիւանդ կինը փաթաթւած ցնցոտիներով։ Նա հարցնում է պատատւախառն ձայնով.

— Փայտ դնե՞լ, ծրտեղից հո խեղճ այրիս փող ճարեմ։

— Երբ փող կունենաս, այն ժամանակ վճարիր, հիմա փող հարկաւոր չէ։

— Իսկ ո՞վ պիտի վառէ իմ վառարանը — հառաչում է այրին,— հս մկանգամայն այժ չունեմ վեր կենալու։

— Ես կը վառեմ քո վառարանը, — ասաց ռաբբին։

Եւ երբ վառարանը արդէն վառած էր և փայտը ուրախ ճարճատում էր ու բոցավառւում, ռաբբին տեղիցեցեալի կերպով դուրս եկաւ խրճիթից, վերադարձաւ տուն և անմիջապէս չորերը փոխեց։

Իսկ Զօլոմը այդ ամենը տեսաւ, բայց ոչ ոքի բան չասեց։ Միայն յետոյ, երբ հրէաները պատմում էին՝ թէ ռաբբին, սրհատչալի աղօթքի ժամանակ երկինք է բարձրանում, Զօլոմը տեսլացնում էր մտաբերում.

— Իսկ, թերևս տեսնի բարձր ..

Թարգմ. Մասիկ

ՊԱՐԵՐԸ

I. ՏՕԼՍՏՈՅԻ

Երկու կին եկան ծերուկի մօտ խրատ խնդրու։ Մէկն իրեն համարում էր մեծ մեղաւոր։ Նա ջանէր ժամանակ գտնելու մարդուն և անդադրում կառնչուէր։ Իսկ միւսը՝ ամբողջ կեանքը օրէնքի համեմատ ապրած, ոչ մի մեղքի մէջ չէր մեղադրում իրեն և գոհ էր իրենից։

Ծերուկը հարց ու փորձ արեց երկու կնոջն էլ նրանց կեանքի մասին։ Մէկը արտասուքով խոստովանեց նրան իր մեծ մեղքը։ Նա իր մեղքը համարում էր այնքան մեծ, որ նրան թողութիւն չէր սպասում. իսկ միւսն ասաց, թէ իրեն վրայ մի առանձին մեղք չի տեսնում։ Ծերուկն ասաց առաջինին.

— Գնա դու, ասածու ապաքին ցանկից դուրս և դիր ինձ համար մի մեծ քար, այսինքն որպիսին վերցնել կրնաս և բեր։ Իսկ դու — ասաց նա այն կնոջը, որն իր վրայ մեծ մեղքեր չէր դնում, — բեր ինձ նոյնպէս քարեր, որքան ոյժդ կպատէ, միայն բոլորը մանր։

Կանայք գնացին և կատարեցին ծերուկի հրամանը։ Մէկը բերից մի մեծ քար, իսկ միւսը մի պարկ լիքը մանր քարեր։

Ծերուկը դիտեց քարերը և ասաց.

— Հիմի այ թէ ինչ արէք, յետ տարէք քարերը և գրէք նոյն այն տեղերը, որտեղից վերցրել էք և երբ կգնէք, դարձեալ եկէք ինձ մօտ։

Եւ կանայք գնացին կատարելու ծերուկի հրամանը։ Առաջինը հեշտութեամբ գտաւ այն տեղը, որտեղից վերցրել էր քարը և դրից այն, ինչպէս որ կար, բայց միւսը ոչ մի կերպ չէր կարողանում յիշել, թէ որտեղից էր քարը վերցրել, և այնպէս, հրամանը չկատարած, նոյն պարկը քարով վերադարձաւ ծերուկի մօտ։

— Ահա այդպէս, — ասաց ծերուկը, միևնոյնն է լինում և մեղքի հետ։ Դու հեշտութեամբ գրիր մեծ ու ծանր քարը առաջուան տեղը, որովհետև յիշում էիր՝ թէ որտեղից էիր վերցրել այն։

Իսկ դու չկարողացար, որովհետև չէիր յի-

չուտ, սրտեղից էիր վերցրել մանր քարերը։

Մի՛ննոյնն են և մեղքերը։

Դու յիշում էիր քո մեղքը, դրա պատճառով տարար ծակոցները մարդկանց և քո խղճի, խոնարհացար և այդ պատճառով ազատեցիր մեղքի հետևանքներից։

Դու էլ—դարձա ծերուկը մանր քարերը հա բերող կնոջը. — մեղանչելով մանր մեղքերով, չէիր յիշում նրանց, չէիր դղջում, վարժվել հա մեղքերով լի կեանքին և պատապարհելով ուրիշների մեղքերը, աւելի ու աւելի խորն ես թաղուել քուկիններիդ մէջ։

Մենք ամենքս մեղանչական ենք—և մենք ամենքս կը կործանուենք, եթէ չդղջանք։

Թարգմ. Ե Ն. Նալբանդեան

ԲԱՐԵԲԱՐԸ

Գիշեր էր, և մենակ էր նա։

Ու տեսաւ հեռուում քաղաքի պարիսպները և դիմից այն կողմը։

Քաղաքին հարևանցած լսեց նա ոտքերի ուրախ դոփիւնը և զուարթ քրքիջը ուրախացող շուրթերի, այլև բարձրաձայն նւագը անթիւ վիճակի. Բաղմից դուռը և պահակները բացին։

Ու տեսաւ մի մարմարէ տուն չքնաղ կոթողներով զարդարուած։ Մարմարից էին այն կոթողները և ծաղկի շղթայով պատած. եղևնափայտի կերտուններ էին վառած տան ներս ու դուրս։ Ու նա մտաւ այդ տունը։

Ընդ քաղկիդեան քարմէ սրահը, անցաւ նաև յատակէ սրահը և վերչապէս մտաւ խրճոյքի երկրաձիգ դահլիճը։ Ու տեսաւ մի պատանի ծիրանավառ մահճի մէջ, մազերը բուսորապոյն վարդերով պսակած, իսկ շուրթերը գինուց ալ կարմիր կարած։

Մօտ գնաց, դրաւ ձեռքը ուսին ու ասաց.

—Ինչո՞ւ ես այդպիսի կեանք վարում դու։

Դարձաւ պատանին, ճանաչեց նրան ու պատասխան տուց.

—Մի ժամանակ բորոտ էի ես և դու բուժեցիր՝ հապա էլ ինչպէս պիտի ապրեմ։

Ու թողից այդ տունը և նորից դուրս եկաւ փողոց։

Ու մի փոքր անց տեսաւ մի կին՝ գէմքն ու հանդերձը նախշած, զարդարած, մարգարտակար կօշիկներ հագին։ Ու մի պատանի էլ երկգոյն գգեստով, որ գաղտագողի հետամտում էր սրասրդի նման։ Կնոջ երեսը նման էր հեթանոս դիցուհու գեղատես դէմքին և հեշտանքի փայլ կար պատանու աչքերում։

Ու նա շատ քայլերով դիմեց նրանց կողմը։ Հասաւ, բռնեց պառաւու ձեռքն ու ասաց.

—Ինչո՞ւ ես այդպէս նայում այս կնոջը։

Պառաւին զարձաւ, ճանաչեց Նրան ու պատասխանեց.

—Մի ժամանակ կոյր էի ես և աչքերս բացիլ՝ հապա էլ ինչի՞ն նայեմ ես։

Ու շատ առաջ անցաւ, հասաւ կնոջը, քաշեց պճնած գգեստից ու ասաց.

—Մի՛թէ էլ ուրիշ ճամփայ չկայ, բացի յանցանքի ճամփից։

Դարձաւ այն կինը, ճանաչեց Նրան և ասաց.

—Երկն Թողութիւն ես ասել մեղքերիս, իսկ այս ճամփան հաճելի է ինձ։

Ու նա դուրս եկաւ քաղաքից։ Եւ քաղաքից դուրս տեսաւ մի պատանի, որ ճամփի վրայ նրատած դառն լաց էր լինում։

Մօտ գնաց, հարց նրա երկար կանդուրները ու ասաց.

—Ինչո՞ւ ես լալիս դու։

Պատանին բարձրացրեց գլուխը, ճանաչեց Նրան ու պատասխանեց.

—Մեռած էի ես, յարութիւն ուրի՝ ինչ անիմ հապա, եթէ չարտասուեմ էլ...

Թարգմ. Կար. Միրիանեան

Օսկար Ուայլդ

ԳՐԻՍՏՈՍԻ ԱՆԴԴԱՆԱԿԻՐՔ

Պատմագիրների ասելով նշանաւոր Նկարիչ Լէօնարդ դը Վինչի ձեռքը գոյում էր, երբ Քրիստոսի պատկերը նկարել էր ուզում. Նոյն իսկ մի օր ինքը Ընթրիքի պատկերը նկարելու ժամանակ ասել է Սֆորցա դուքսին՝ թէ «Աշխարհիս վրայ չէ կարողացել գտնել մի տիպար ներկայացնելու Քրիստոսի դէմքը և իր երևակայութիւնն էլ անկարող էր յղանալ Ս. Փրկչի երկնային ու իդէալ գեղեցկութիւնը»։ Այս խօսքերից եզրակացնում ենք, որ եթէ նրա ձեռքը գոյում էր, կրօնական ջերմեռանդութիւնից դրդուած չէր այդ, այլ Քրիստոսի դէմք պատկերացնել չկարողանալու համար էր։

Իսկապէս էլ, չի կարելի մի պատկեր նկարել և ասել թէ Յիսուսի դէմքին է նմանում։ Հին փարաւոնների, հռոմայեցի կայսրների և ժամանակակից այլ անձանց պատկերը կամ քանդակները ունենք, իսկ Քրիստոսի մասին ոչ մի բան մեզ չէ հասել, ոչ իսկ նրա գիմագծերը նկարագրող մի գրութիւն մնացել։

Նախնական քրիստոնեաները, որոնց սկզբունքները հանգչում են հին գեռնափոքների մէջ, ե-

թէ այսօր յարութիւն առնէին ու թանգարանների մէջ տեսնէին Ռաֆայէլի կամ մի ուրիշ նկարչի նկարած Յիսուսի պատկերը, բնաւ չկասկածէին թէ այդ աստուածային դէմք կարող է ներկայացնել։ Իրենց համար մի ձկի պատկեր կամ նաւի խարիսխ, մի ագռաւի ձիթենու շիւղը կտուցն առած և կամ անմօրուս մի հովիւ, որ ուսին գառնուկ ունի, ահա սրանք էին փրկչական խորհրդանշանները։ Իրենց համար Քրիստոս ուրիշ պատկեր չունէր, որովհետև նա միշտ իրենց հետ ու ներկայ լինելով, մի նշան բաւական էր այն յիշեցնելու։ Քրիստոսի մեռնելուց երեք դար յետոյ միայն պատկերն ունենալու կարիքն զգացուեց և փորձեցին գծագրել այն, սակայն պարզ է, որևէ նմանութիւն չկրնան ունենար։

Եթէ Քրիստոսի պատկերը չունինք, նրա դիմագծերի նկարագրից էլ զրկուած ենք։ Ոչ Աւետարանների մէջ, որ Գործք-Առաքելոցի մէջ և ոչ էլ առաջին երկու դարերի տեղագրութեան մէջտեղի գրուած ձեռագրների մէջ կայ նրա նկարագրութիւնը։ Եւելի ուշ, թէև Քրիստոսի անձնական նկարագրութիւնները գրուած են, սակայն սրանք ուշի զգացումից գրուած են եղել, քան թէ իրականութիւնից։ Ամենից առաջ եկեղեցական հայրերը ներկայացնում էին Յիսուսին առանց

այն նկարագրին, որ մենք գեղեցկութիւն ենք կոչում։ «Առանց գեղեցկութեան երևեցաւ»—ասում է Բ. դարու մի մարտիրոս։ «Ամեն մարդկային գեղեցկութիւն ի բաց վանեց» — ուելացնում է Կլէման Ալէքսանդրացին։ Տէրտուլիէն ասում է թէ Քրիստոսի տեսքը համակրելի լինելուց հեռու էր։ Այն ժամանակւայ մի անհատ՝ Սէլզ, քրիստոնեաների երեսովն է ուել, թէ այդ տեսակ ապեղ տեսքով մէկի դաւանանքին էք յարել։ Օրիժէն պատասխանեց թէ Փրկչի գեղեցկութեանը շատ բան պակաս լինելով հանդերձ նրա տեսքը ազնիւ ու աստուածային էր։ Ժամանակ անցնելուց յետոյ կարծիքները բոլորովին փոխուեցին և Քրիստոսին վերագրեցին մի այնպիսի գեղեցիկ դէմք, մի ազու նայուածք, ներդաշնակ ձայն և ազնիւ շարժուձեւեր, որոնցով առաջին անգամ նրան տեսնողը դմայլուած կմնար։

Հակառակ այս ենթադրութիւններին, ե. դարի մէջ մի նշանաւոր աստուածաբան, որ իր ժամանակին նկարած Քրիստոսի բոլոր պատկերները տեսել էր, գրում է իր գործերի մէջ թէ «Դատարկապէս չը գիտենք Քրիստոսի դիմագծերը»։

Եւ սակայն հակառակ սրանց, կայ նախա-

տիպ մի պատկեր, որ մինչև մեր օրերը հասել է՝ ուղիղ ճակատ, արտահանունքները կոր և իրար մերացած, քիթը նուրբ ու երկար, բերանը խիստ բարեձև, երկար մազերը, որոնք մէջ տեղից բացուածք ունեն և երկու ուսերի վրայ ընկած, մօրուքը շատ կարճ և շրթունքները ցոյց տալու ասպիճան կտրուած։ Ո՞րտեղից է եկած այս նախատիպը. աւանդութիւններն առում են, թէ Ճիսուս Քրիստոս իր պատկերը դրոշմած է դինջակների վրայ։ Պատմում են թէ Սուրբ Ածնր հիւանդութիւնից ապաքինելու խնդրանքով է Քրիստոսի հրաշքները և որոշում իբրև անձնական բժիշկ իր մօտ հրաւիրելու և այդ առթիւ յատուկ պատգամաւորութիւն է ուղարկում։ Պատգամաւորներից մէկը, որ նկարիչ էր, Քրիստոսին տեսնելուն պէս ձեռնարկում է նկարել նրա պատկերը, սակայն այդ չի յաջողւում. երբ նրան նայում էր, դիմագծերը նոր յատկանիշ էին ստանում։ Մի անգամ Քրիստոս երեսը լուանալով չորացնում է ու տա՛ հրաշք, դէմքը արտապատում էր սրբիչի վրայ։ Պատգամաւորները տանն այդ դինջակը և բերին Սուրբ Ածրարին, որն անմիջապէս բժշկեցաւ։ Նոյնպէս աւանդութիւն կայ, թէ շարչարանաց ժամանակ, երբ սուրբ կանանցից մէկը՝ Վէրոնիկ, Քրիստոսի արիւնոտած դէմքն

էր սրբում, տպաւորուած դէմքը նկարուած մնաց կտաւի վրայ։ Այդ կտաւը Ս. Պետրոսի եկեղեցու մէջ ի ցոյց է դրւում հաւատացեալների համար ամէն չարթայ մէջ մի որոշ օր։

Լանտիւլոս անունով մէկի նամակը կայ գրւած, որ իբր թէ Քրիստոսի ժամանակ «Եբեսացոց մէջ ժողովրդի նախնապետն է եղել», ուղղուած առ Հռոմի ծերակոյտը, որ այս կերպով է նկարագրում Ճիսուսի դիմագծերը. – «Վերջերս մէկը եկաւ Եբեսացոց քաղաքը, զեղեցիկ և իշեն տեսնողներին միանգամայն վախ ու սէր ազդող տեսքով։ Մազերը խոպոպներով երկու ուսերի վրայ են ընկնում և մէջ տեղից ճեղքով բաժանուած են Նազովրեցիների սովորութեան համաձայն։ Ճակատը տանից փոքրիկ և հաղիւ է, երեսները կարմրոտ ու առանց այտուցի, բերանն ու քիթը անհնարին զեղեցկութիւն ունին, մօրուքը առատ է և մազերի պէս կաղնեգոյն, ոչ շատ երկար և երկուսի բաժանուած։ Աչքերը վառ և ցցուած են՝ յարափոփոխ գոյներով։ Խրատ տալ ժամանակ քաղցր ու սրտագրաւ է, նոյն իսկ զրուցելի, սակայն առանց կորցնելու ծանրախոհութիւնը։ Շատ յանգիստ լսելի է, բայց երբէք ծիծաղել չէ տեսնուած»։

Այս նախատիպարը (որ Ծ. դարի՝ մէջ չին-

ած մի նամակ է), որոշ կերպով հաստատում է Քրիստոսի կիմազծերը և բոլոր նկարիչներն էլ ընդունել են այն։

*
* *

Թուրինի մայր եկեղեցու մէջ պահուած էր քանդանէ խոստ նուրբ մի կերտուած 4 մետր և 10 հրմ. երկայնութեամբ և 1 մետր 40 հրմ. լայնութեամբ, որի համար ասում են թէ Քրիստոսի պատանքն է եղել։ Այս կտաւի վրայ երկու պատկեր կար գլուխ գլխի դրած և մի մարդու տեսք ներկայացնում, մէկը դէմքի կողմից, իսկ միսը՝ թիկունքի կողմից։ Մարդու կրծքի, ձեռքերի ու ոտքերի վրայ վէրքեր կային։ Երևում է, որ մարմինը պահեցնելով կտաւի մի ծայրի վրայ, միւս կէսը վրան է ծածկած։

Ո՞րտեղից է ճանչել այս կտաւը։ Կարելի է եղել սուտգել, որ 1353 թուին Շամպանէի եկեղեցականներից մէկի միջից է գտնուել։ Երկու դար յաւոյ ազատուելով մի հրդեհից, որ մինչև նրա արծաթէ ծածկոցը հալուել էր, ասում են Թուրինի եկեղեցին, ուր պահւում է մինչև այսօր։ Բայց 13 երկար դարերի տևողութեան ընթացքում նրա պատմութիւնը չլինելու պատճառով աննշան բան է երևացրել մեր գիտնականների աչքին։

Այստեղ երկու բառով բացատրենք, թէ ինչ է դրական ու բացասական պատկեր ասածը։ Երբ մի որևէ առարկայի լուսանկարը հանում ենք ապակու վրայ, կազմած պատկերը բացասական է ասւում, նրա մէջ սպիտակ կլինեն բոլոր այն կէտերը, որոնք սև են առարկայի վրայ, նոյնպէս առարկայի վրայ սպիտակ եղածները սև կլինեն ապակու վրայ կազմած պատկերի մէջ։ Այս ապակու վրայ լուսանկարի գործուն մի թուղթ դնենք և լոյսի ազդեցութեան տակ դնենք, ապակու վրայ մութ կէտերը արևի ճառագայթներին արգելը լինելով՝ թղթի վրայ սպիտակ են մնում, իսկ սպիտակ տեղերն էլ թղթի վրայ սևանում են։ Նշանակում է գործուն թղթի վրայ կազմած պատկերը ճշտապէս կարտատպէ նախնական առարկան։ Այս պատկերն էլ դրական է։

Որդ 1898 թուականներին կամեցան Թուրինի Ս. Պատանքի լուսանկարը վերցնել։ Կարծում էին թէ մի անճանաչելի բան պիտի լինէր ստացուած պատկերը։ Սակայն քնդհակառակն, ամենաշահեկան արդիւնքները տուեց։ Փորձին ներկայ գտնուած խմբագրներից մէկը այսպէս է պատմում. «Քանի պատկերը հաստատուում էր ապակու վրայ, մի անսպասելի արդիւնք էր երևան գալիս։ Կատարեալ ու ամբողջ էր տեսնւում Յուրը

դէմքը, ձեռքերը, ոտքերը և բոլոր մարմինը: Ո-սել է պատանքը բացատակաւն մի պատկեր է եղել»:

Այս հարցը լուծելով, նոր հարց է մէջ տեղ գալիս. Նախ թէ ինչպէս է գծուած այդ պատկերը սուրբ պատանքի վրայ: Ներկուած չէ այն, քանի որ ինչպէս արդէն ասացինք բացատակաւն պատկեր է (այսինքն կատւի վրայ մուխ է մնում) և այլ հին գործերի մէջ դրական ու բացատակաւն պատկերների ինչ լինելը չգիտէին: Նոյն իսկ եթէ ենթադրենք թէ ներկով նկարուած լինի, հաղարումէկ անգամ ծալած-ծալած է կատւը, անշուշտ մի տեղ կխաւարէը ներկը, մինչ դեռ կատւը վերին աստիճանի ճկուն ու անեղծ է մնացել: Մանաւանդ որ այդ պատկերը գծագրուելու գործ չէ. օրինակի համար միմիայն գլուխ կայ առանց ականջի, վզի, ուսերի և մնացած մասերը յայտնապէս ցոյց են տալիս, որ մարմնի վրայ ձգելով ևս են առել:

Չի կարող պատահել, որ մէկը մի տեսակ գունաւոր ներկի մէջ թաթխելով այդ կատւը վրան գցած լինէր: Պարոն Պօլ Վինեօն, պիտութեան դասատու, անդամ Պարիզի Համալսարանի գիտական ֆակուլտէտի, որ մանաւորապէս քննել է Ս. Պատանքի խնդիրը, ինքն իր անձի վրայ

փորձերը կատարելով, հաստատել է, որ առաջ դալիք պատկերը բոլորովին ձևափոխւում է:

Եթէ կատւի վրայ կազմած պատկերը ոչ նկար է և ոչ էլ խարհրայի գործ, ինչ է ուրեմն առաջ եկածը:

Պ. Վինեօն ասում է որ պատանքի տակ պահած մարմնի ապդեցութեան տակ է ձևացել արդ, ինչպէս կլինի այդ, քանի որ ոչ կատւը կարող է լուսանկարի դպչուն տպաւոր բռնել և ոչ էլ մարմինը՝ լուսաւորուած առարկայի: Պ. Վինեօն հրամանատար Պօլղոնի ընկերակցութեամբ փորձեր է կատարել և հասել է նոյն արդիւնքին: Ուսումնարանի մէջ կարդում ենք, որ Յովսէփ Սրևմաթացին Յիսուսի մարմինը թաղելուց առաջ օծել տեսակ տեսակ նիւթերով, որոնց բաղադրութեան մէջ մտնում էր և հալւէն: Պարզ է, որ հալւէի բաղակցութիւնները սևանում են ալբոլիքների չոգիի ազդեցութեան տակ: Տենդային քրտինքով ծածկուած մի մարդ, ինչպէս որ Քրիստոսինն էր, շատ շուտով ամօնեաքի չոգի է արձակում: Ուրիմն քանի որ պարզ է, թէ հալւէն սևանում է ամօնեաքի չոգիի ազդեցութեան տակ, և մեւս կողմից պիտանք նաև, որ Քրիստոսի մարմնից ամօնեաքի չոգի էր արտաբուխում և պատանքն էլ, որ օծուած էր, հալւէով

կարող ենք ընդունել, որ այդ կատի վրայ կազմած լինի մէջը պատկող մարմնի ապրելութեան տակ այն պատկերը, որ այսօր մենք տեսնում ենք:

Այստեղ կարող ենք տալ ամենից կարևոր հարցը, ո՞վ էր այդ պատանդի մէջ պատկող անձը:

Մի լաւ դիտենք այդ պատկերը. տեսնում ենք ճակատի վրայ շատ մանր վէրքեր, կուրծքը ծակած մի սուր բանով, կռնակը՝ վիտերի ու սրունքների վրայ հարուածներից առաջ եկած վէրքերի նշաններ, ոտքերի տեղը և կրունկների տակը կուտակուած արիւն: Կարծես թէ այս մարդը չարչարուած ձեռքերն ու ոտքերը ծակծկուած են, կռնակը պատռած ու կոտրն երկաթ մնացած: Տանք այս բոլոր մանրամասնութիւնները և կունենանք Ուհատարանի պատմած Քրիստոսի բոլոր չարչարանքները:

Այստեղ կանգ ենք առնում եկեղեցութիւններին աւելի հետուն չմղելով անշուշտ այդ կատը մի գաղտնիք ունի իր մէջ, որ սակայն չենք կարող պարզել ամբողջովին:

Ն. Պէրպէրեան

ԱՄՈՒՍՆԱՕՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Մարդու ծագումը այն խոշոր հարցերից մէկն է, որ երկար դարերից զբաղեցնում է գիտնական մարդկանց միտքը: Դեռ չատ տեսութիւններ այս հարցի մասին: Դրանցից որն էլ ընդունելու լինենք, այդ միևնոյն է, սակայն յայտնի է, որ աշխարհիս ստեղծագործութիւնից սկսած մարդկային բնաւորական յատկութիւնների մասին յստակ պատմութիւն գոյութիւն չունի:

Առաջին աւանդութիւնը, որ պատմագիրները կարողացել են հաւաքել, հետևում է, որ մարդկային գանազան ցեղեր ապրելիս են եղել առանց օրէնքի և բարոյականի: Քրիստոսից մի քանի դար առաջ ապրած յոյն պատմիչներ Հերոդոտի, Թէոպոմպոսի և Սօլինոսի վկայութեամբ Եփրիկայի թափառաշրջիկների մէջ ամուսնութիւնը անծանօթ էր. այր ու կին ապրում էին այնպէս, ինչպէս անասունները: Երբ որևէ տղայ արդէն չափահաս էր դառնում, ժողովուրդը նրան յանձնում էր այն մարդուն, որին նա իր խառնածոյ աւելի կամ նման, և այս նմանութիւնը բաւական էր հաստատում նրան տղայի հայրը ընդունելու: Եփրիկեան ցեղերի այս վայրենի

բարքերը գոյութիւն ունէին նոյնպէս այժմեան Սև ծովի ափերի վրայ, ինչպէս նաև Սիւրիայի ընդարձակ չոնադաշտերում: Այնտեղ կանայք և տղաները հասարակաց էին: Քսէնէֆօն և նրա ժամանակակից պատմիչները Ասիայի ժողովուրդների մասին խօսելիս նրանց միևնոյն բարքով են ներկայացնում:

Հին Եւրոպայի մէջ բարբարոսութեան այս հետքերը ճշմարիտ է, չուտով անհետացան: Դասական գրագէտների շրջանի այլ բարքերը երեւում են միայն մի կարգ փոքրաթիւ գաւառների մէջ՝ Կովկասեան լեռների ստորոտը, այժմեան Շարիականի և հարաւային Եւրոպայի ափերի վրայ, ինչպէս նաև մի քանի հեռաւոր կղզիների մէջ, այն է՝ Պալէարեան կղզիները (նկատմամբ Մաժօրկա և Մինօրկա, Բրիտանիա և Իրլանդիա: Բայց աւելի քաղաքակրթուած ազգերը — Յունաստանն ու Իտալիան իրենց աւանդութիւնների մէջ պահել են մի յիշատակ նոյնականութեան շրջանից, որ անչուշտ ամուսնական օրէնքի հաստատութիւնից առաջ անմիջապէս գոյութիւն է ունեցել: Սեթէնքի մէջ, Քրիստոսից շորս դար առաջ ապրող մի արժանահաւատ պատմիչի վկայութեամբ, սեռերի յարաբերութիւնները որոշող ոչ օրէնք և ոչ էլ կանոն է գոյութիւն ունեցել. այնպէս որ, ոչ մի տղայ չէր կարող ճանաչել իր իսկական հայրը: Նոյնը կարելի է ասել և Իտալիայի բնակիչների վերաբերմամբ: Տիբուրնեան ցեղերի մէջ ամեն մի կին հասարակաց էր նկատւում, նոյնպէս ամեն մի նորածին հասարակութեանն էր պատկանում, քանի որ ոչ մէկը չէր կարող ասել, թէ ինքը որի հայրն է: Այս մասին վկայութիւններ խիստ շատ են: Եւ բոլոր պատմիչներն էլ համամիտ են մանաւանդ այն կէտին, թէ ամուսնութիւն գոյութիւն չունէր մարդկային ընկերութեան նախապատմական շրջաններում, այլ այլ քաղաքակրթութեան արգասիքն ու նրա մեծագոյն պարգևներից մէկն է դէպի մարդկութիւնը:

Եւ առաջին մարդը, որ պատմութիւնը կարող է ցոյց տալ իբրև ազամարգու և կնոջ սեռական յարաբերութիւնները կանոնաւորող քաղաքական օրինագծի սահմանող՝ Մենէսն է, Եգիպտոսի առաջին թագաւորը, որ ապրել է Քրիստոսից երեք հազար հինգ հարիւր տարի առաջ: Այդ թւականից առաջ ամուսնական որևէ յիշատակութիւն չկայ, բացի Հին Կտակարանում յիշածներից, երբ մարդիկ իրենց կին, ինչպէս նաև հարճ առնում էին ըստ իրենց անհատական յօժարամտութեան, առանց օրինական պահան-

ջի: Երկրորդ օրէնսգէտը, որ պատմութիւնը մատնանշում է՝ մի չինացի է՝ Փիւհի, որ հաստատել է իր ժողովրդի համար ամուսնական օրէնք Քրիստոսից երկու հազար վեց հարիւր չիսուն տարի առաջ: Ցեղոյ գալիս է Մովսէսը, Իսրայէլացիների առաջնորդն ու օրէնսդիրը՝ Քրիստոսից տասնեվից դար առաջ, ապտամարգանց և կանանց յարաբերութիւնների կանոնաւորութեան համար սահմանած զանազան օրինագծերով: Գեկրոպս 1550 թ. Քրիստոսից առաջ, ամուսնական օրինագիծ է հնարել յոյների համար: Հռոմայեցիները, ազգերի պատմութեան մէջ իրենց մուտքի սկիզբներին, առումէ թէ սեռերի յարաբերութիւնները կառավարող ընկերական—բայց ոչ օրէնսդրական—խիստ կանոններ են ունեցել: Եւրոպայի հիւսիսային ազգերից չատերը Հռոմայեցիների աշխարհակալութեան ժամանակներում ունեցել են ընտանիքի կազմութեան ու պահպանութեան մասին օրէնքի չափ անրնաբարելի կանոններ:

Ամուսնական բոլոր այս օրինագծերը իրենց սկզբնաւորութեան մէջ բազմակնութիւնը բացարձակապէս արտօնած են եղել, զէթ այսպէս են ցոյց տալիս մեզ հասած բոլոր կրօնական և աշխարհիկ աւանդութիւնները: Եթէ Ադամ մի կին

ունէր միայն, պատճառն այն էր, որ հարկաւ չէր կարող աւելին ունենալ, այդպապէս ուրիշը գոյութիւն չունենալու համար: Մինչդեռ իրեն յաջորդող սերնդի պատմութեան մէջ հանդիպում ենք Ղամէկի, որ երկու կին ունէր: Եւ բազմակնութիւնը չարունակւում է մինչև Ջրհեղեղ ու յետոյ Աբրահամից սկսելով երբայական ցեղի գոյութեան տևողութեան ընթացքում, իր մէջ ընդգրկելով փարաւոնների ամբողջ շրջանը: Եւ մի քայլ անելով եգիպտոսից Յիշենք՝ ուր նախկին հելլէնների քաղաքակրթութիւնն ու ամուսնութիւնը առաջին անգամ ծնունդ առան՝ որտեղ և ամուսնական օրինագծի հետ արտօնւում է օրինական կնոջից զատ, մի քանի հատ էլ հարճ ունենալ: Ընդունելով Յունաստանից դէպի Մահմադական աշխարհը, տեսնում ենք, որ բազմակնութիւնը այնտեղ էլ գործածած է կրօնով, օրէնքով ու բարքերով և առանց ազգերով Եւրոպական բարքերի հեղհեղից, մի կամուրջ է զգալ նրանց վրայ և հասել մինչև մեր օրերը: Իսկ նոր աշխարհի մէջ մեծաւոր շրջաններում տակաւին բազմակնութիւն գոյութիւն ունի Մորմոնական կոչուած աղանդի մէջ:

Այդ նախապատմական շրջաններում, երբ բազմակնութիւնը գոյութիւն ունէր առհասարակ,

մի ժամանակ եղաւ, որ հարուստ ու մեծատուն մարդիկ, Ասիայի, Հիւսիսային Աֆրիկայի և Հարաւային Եւրոպայի մէջ աչքի ընկնող կանանց ձախու էին առնում: Եւ այսպէս իգական սեռի ջչութիւնը մի կողմից, հասարակ ժողովրդի մէջ տիրող ադքատութիւնը միւս կողմից զօրաւոր ազդակներ եղան քանդելու բազմակնութեան անպատշաճ օրէնքը և նրա տեղ հաստատելու միակնութեան օրինաւոր ու իդէալ սկզբունքը:

Ու միակնութեան այս սկզբունքի հաստատութեան առաջնութիւնը վերցրել են Հռոմի հիմնադիրները Քրիստոսից հօթը դար առաջ իրենց ստեղծած իմաստուն օրէնքով: Հռոմէական այդ նախնական օրէնքը ցուցական օրէնքների ազդեցութեան տակ բարեփոխուելով եղել են ազգերի տիրող օրէնքը, և որ աւելի վերջը ձուլուելով Քրիստոնէական օրէնքի հետ, եղել է ընդարձակ քաղաքակիրթ աշխարհի հաստարակաց օրէնքը:

Դոկտ. Ս. Զիլինկարեան

ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՔՐԻԿ ԶՐՈՅՑՆԵՐ

ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ, ԵՍ ԿԱՄԵՆՈՒՄ ԵՄ

Վ. ԵԼԼԱՄ Վ. ԱՏԻԿՍՕՆ

«Ես կարող եմ եւ ես կամենում եմ»—Թող այս խօսքերը լինեն քո հաստատ համոզմունքը, խոզ սա լինի այն միտքը, որ ամեն տեղ և միշտ կուղեկցէ քեզ: Միևնոյն ժամանակ քո մէջ կթափանցէ այնպիսի զգացմունք, իբրև թէ քո «ես» ի ամեն մի մասնիկը (ատոմը) դանւում է քեզնում չարժողութեան մէջ, քո աչքերի առաջ փայլում է յաւիտենական լոյսի շողը, դու կզգաս քո սեփական արժանիքը և կզգաս քո մէջ ոյժ և կարողութիւն բախտաւորութեան, յաջողութիւնների և անյաղթութեան հասնելու համար:

Դու կզգաս, որ կարող ես կատարել քո վերայ դրած պարտականութիւնները, որ դու ոչ մի բանից չես վախենում, երկիւղի զգացմունքը քեզ անյայտ է: Ամբողջ աշխարհը կարծես ձուլուել է քո մարքի հետ մի ներդաշնակութեան մէջ, դու կըմրունես ճշմարտութիւնը:

Իսկ եթէ քեզ կպաշարեն տարակուսանքները, եթէ թերահաւատութիւնը կմտնէ քո հոգու մէջ,

եթէ դու կրնաս հրկիզի և անվտահութեան զգացմունքով, այդ ժամանակ կննդրանացու քո բոլոր մտքերդ յիշելու այն մոմիները, որը դու հաւատում էիր ինչ քեզ և վարդագոյն յոյսերով նայում էիր ապագային: Արդէն այդ միաքը մրայն, հաւանական է, զօրիզ նեցուկ կլինի քեզ:

Մեծ վտանգի բոլէին, կեանքի և մահու կաւի ժամանակ, ասենքին մոմիներ անցկացնելիս, մենք յաճախ ապշուած ենք լինում վրատահութեան ու անդորրութեան զգացմունքով և սեփական այժի պիտակցութեամբ: Մի ինչ որ ներքին այժ առաջնորդում է մեզ և հոգ է տանում այն մասին, որ մենք լինենք գոհ և հանգիստ: Մեծ գործերում նա, այսպէս ասած, իր թեում է մեզ, իսկ անվճռականութեան և փորձութեան րոպէներին—մխիթարում և ուղղութիւն տալիս մեր մտքերին:

Ճաշ յաճախ, դանելով այս կամ այն բացատրիկ հանգամանքում, երբ մեր մարմինը յանկարծակի ուզում է անդամալուծուել, սրին մի տեսակ խլանում է, իսկ մեր կարի այժը ցանկութիւն է առնում մեզ թաղնելու, մենք պէտք է օդնութեան կանչենք հենց այդ այժին, որը պարտուում է մեր նկատում: Եւ մենք անպատասխան չենք մնալ իր մխիթարիչ ձայնով նա կասէ՝ ահա ես:

Մեր ամենամեծ ցանկութիւնն է համոզել մեր ընկերներին, թէ ինչ այժ է «ես կարող եւ ես կամենում եմ»: Մենք ուզում ենք խնամել նրան այնտեղ, ուր նա աճում է, մենք ցանկանում ենք ցանել նրան այնտեղ, որտեղ հոգը թրուում է մեզ պատարեր: Համարեա ամեն մի մարդու մէջ, չէ՞ որ թաղնուած են այժեր, որոնք պիտի պարզանան և բացուեն և հենց մեր ձեռքումն է գտնուում շատ դէպքերում այն գործիքը, որով կարելի է գաղթեցնել այդ նիրհող այժերին:

Ցանկութիւն, հաւատ և աշխատանք.—ահա յաջող հետաքրքրների հասնելու բանալիները, և մեզանից է կախուած բանալ այդ բանալիներով դռները:

Սակայն ամենից առաջ մեր մէջ պէտք է լինի ամենալուրջ ցանկութիւն հասնելու հենց այն նպատակին, որը մեզ թուում է նախանձելի, իսկ վերջնական յաջողութեանը մենք ամենևին չպէտք է կասկածենք: Եւ այդ դէպքում ամենաանձնուէր ուղեկիցը պէտք է լինի հաւատը:

Վայ ձեզ, չհաւատացողներ. վայ նրանց, ովքեր չեն ուզում հասկանալ այս տատանների ճշմարտութիւնը:

Ամբողջ աշխարհը սպասում է մի այնպիսի մարդու, որը «Կարող է տեսել այն ամենը, ինչ ուզում էք». Նրան սպասում են ինչպէս Փրկչին

Ըմմաաահան արէք ձեր սրտից վախի զգացմունքը, հալածէք ձեր մաքերից և երբէք մի արտասանէք «ես չեմ կարող», «ես վախենում եմ» խօսքերը. թող ձեր չբնութիւններից դուրս չթռչէ կասկած արտայայտող ոչ մի ձայն։

Եւ այսպիսով առաքինաբար դու կհասնես քո բարձրութեան. քո ամբողջ ուշադրութիւնդ ուղղիր դէպի քո դրած մերձաւորագոյն նպատակը, ամբողջապէս կենդրոնացիր նրա վրայ, կատարեալ հաւատով վերարերուիր դէպի մտադրուած գործի ելքը, երբէք մի ձգտիր տեղից քշել մերձաւորիդ, իմացիր, որ երկուսիդ համար էլ բաւականաչափ տեղ կգտնւի։

Թող այդ «ես կարող եմ եւ ես կամենում եմ» հնչէ քո մէջ ինչպէս մի հզօր, բարձրաձայն աղաղակ, թող նա արձագանգ տայ քո հոգու մէջ, թող նա քեզ ամբողջապէս համակէ, թող քո մարմնի բոլոր ծակոտիքներով անցնէ միայն այդ «ես կարող եմ եւ ես կամենում եմ»։

ՄՏՔԵՐԻ ՍԱՆՁԱՀԱՐՈՒՄԸ

Ներկայումս մեզնից շատերն ամենեին չեն մտածում իրենց մաքերը սանձահարելու մասին։ Նրանք ամենեին հոգ չեն տանում իրենց ոդու

մասին և երբէք չեն արտայայտում իրենց ծանրարեռնող միտքը թէ — «ես չեմ ուզում մտածել այդ մասին»։ Այդպիսի մարդկանց մաքերը առաջ են բերում մարմնական հիւանդութիւններ, իսկ նրանք ինքները չեն ունենում այնքան ոյժ, որ կարողանան ազատուել այդպիսի մաքից։ Բաւական է միայն, որ մենք հասկանանք, թէ ինչպիսի վնաս են հասցնում օրգանիզմին մտայլ մաքերը և այն ժամանակ մեր մէջ առաջ կը գայ այնքան ոյժ, որ մենք կարող ենք ոչ միայն ազատուել նրանցից, այլև այդպիսով ձեռք կբերենք մեծ եռանդ արտաքին բոլոր պայմաններին պիմադրելու համար։

«Դիմադրիր սատանային և նա կը հեռանայ քեզանից» — ասել է Քրիստոսը։

Երկրի վրայ եղած միակ սատանան, դա ոդու անխոհեմ ուղղութիւն տասցած ոյժն է, և մեր այդ թշնամին այնքան հզօր է, որ կարող է մեզ տանջել և չարաչարել, մեզ հիւանդ դարձնելու, մեզ բարեկամներից ու կարողութիւնից զրկելու համար։

Մի որևէ ձեռնարկութեան մէջ լաւ հետեւանքների հասնելու համար, կամ թէ, օրինակ արւեստի այս կամ այն ճիւղի մէջ յաջողութիւն ունենալու համար, որպէսզի առհասարակ կարե-

լի լինի յաջողեցնել մի որևէ բան, անհրաժեշտ է օրւայ մի որոշեալ ժամանակը բոլորովին հրաժարւել սովորական զբաղմունքներից և գործերից։ Միայն այդ հանգամանքում մեր հոգին կարող է հանգստանալ, միայն այդ միջոցով նա կարող է այժեր ամրարել, որքան հարկաւոր է նոր լարման համար։ Ոչ մի բան այնպէս ուժասպառ չէ անում մեր ուղեղը, ինչպէս միևնոյն մտածողութիւնը։ Ցաւիտեան խորասուզւած լինել միևնոյն պարապմունքների մէջ, միևնոյն նախագծերի և շահագիտական ձեռնարկութիւնների մէջ, դա միևնոյն է թէ վատնել բոլորովին լաւագոյն ոյժերը։

Մեզանից դուրս եկած ամեն մի անդուրեկան միաք, կրկին տպւում է մեզ վրայ բացասական կերպով։ Ինչ որ մենք ցանում ենք, այն էլ հնձում ենք և մենք կարող ենք նոյնպէս առաջ բերել մեր մերձաւորների սրտերում բարի զգացմունքներ, ինչպէս ճնշել և այն ամենը, ինչ որ չար է և անբարեացակամ։ Մեր կողմից եղած կարեկցութիւնը առաջ կրերի շրջապատողների մէջ գլխի մեզ միայն բարի վերաբերմունք։ Բոլոր հիւանդները, բոլոր պժրախտները, բոլոր սուգաւորները ու խարերանները, այդ բոլորը մարդիկ առանձնապէս կարիք ունեն մեր սիրոյն, չէ

որ նրանք ինքնները չեն կարող ստեղծել իրանց համար ուրախութեան ոչ իսկ մի վայրկեան։ Եւ ամեն քայլում միշտ կարելի է համոզւել այն բանում, որ այդ մարդկանց մասին, որոնք երբեմն վիրաւորել կամ վշտացրել են մեզ, մենք մտածում ենք զգրացած և արհամարհանքով։ Մեր մտքերն ամրողջ շաբաթներով օր օրի վրայ տանջում են մեզ, նրանք զրղուում ու գիշատում են մեր սիրտը, խաւարեցնում են և մեր հոգին և մեր մարմինը։

Այդ ամենի պատճառը կայանում է նրա մէջ, որ մենք վարակւում ենք մեզ շրջապատողների վատ մտքերով։ Մենք կարծես ձգտում ենք նրանց մտքերը դէպի մեզ, ծծում ենք նրանց մեր մէջ։ Եթէ մէկը մտածում է իմ մասին այնպէս, ինչպէս մտածում եմ ես նրա մասին, նա հետևապէս ուղղում է ինձ վրայ չար մտքերի հոսանք։ Եւ եթէ այդպիսի պատերազմը կշարունակւի ամրողջ շաբաթներ, ապա երկու հակառակորդներն էլ անշուշտ կտուժեն թէ հոգով և թէ մարմնով։

Մեզնից ամեն մէկը պէտք է աշխատէ ձեռք բերել այդպիսի զօրութիւն, այդպիսի ոյժ նրա համար, որ ունենայ առողջ մարմին և ոգի։ Եւ միայն զօրեղ հոգին կարող է հալածել մեզնից ծանր, չար մտքերին, այն ինչ թոյլը մեզ ըս-

որուկ է զարձնում ամենաարաբեացական զգացմունքները։ Բաւական է, որ մենք միայն սարսափենք մի սրեկ չժրախտութիւնից, երբ արդէն մեր մարմինը թուլանում է և հոգնած չլսաւում։ Իսկ հոգնածն և սաստիկ ցանկութիւնը կարող է զարկացնել մեր մէջ մի առանձին այժ, որը մեզ հոգուց արմատախիլ կանչ ամեն երկիւղ և մեզ համար ճանապարհ կը բանայ դէպի անվերջ յաջողութիւնները։ Համարձակ մարդիկ, անվախները կարող են հրաշքներ գործել։ Մենք չգիտ է մաածենք, թէ այդպիսի զարմանալի այժ ամենեին գոյութիւն չունի այն պատճառով, որ մինչև այժմ գուցէ ոչ ոք այդ այժը չէ ունեցել։ Եթէ ատանհհինգ տարի սրանից առաջ մեզը մեզ ասէր, որ կարելի է Պարիզում նատած խօսել Բերլինի հետ, մենք նրան կատարեալ խելագար կը համարէինք. իսկ այժմ հեռախօսը համարեա ամեն մի տան սովորական առարկաներից մէկն է։ Ցաւ կայ, որ այդ միևնոյնը կլինի և այս հրաշագործ այժի վերաբերմամբ, որի մասին այժմ խօսեցինք։

Պ. Միլճօրդ

Մտածիր կանոնաւոր և մի վախենար ոչ մի բանից։

ՄՏՔԸՐԸ—ԳՈՐԾՈՒՄ ԵՆ

Պ. Դիլսօն

«Մարդ ինչ ցանէ այն էլ կհնձէ»։

Եթէ դու կը ցանես չարութիւն, նոյնն էլ կը հնձես. իսկ եթէ կը ցանես բարութիւն, բարութիւն էլ կստանաս։ Միտքը—դա գործի մայրն է։ Ճանաչիր մեզ պատահում է լսել անմիտ վարմունքների և անմիտ գործերի մասին։ Իսկապէս անմիտ վարմունքներ չկան։ Ամեն ինչ կատարւում է մտածւած, բայց երբեմն ժամանակ չի լինում նախագծերի հաստատելու համար. մի քանի ակրմեր ածում են արագ, միւսները երկար ժամանակ չեն տալիս ծիլեր, կամ տալիս են միայն այն ժամանակ, երբ դրանց նպատակում են չըջապատող հանգամանքները։ Բերքի յաջողութիւնը կախում է մեր ձեռքում, մեզ հարկաւոր է միայն յիշել այն բանը, որ մտքերը—դրանք գործեր են։

Ըստ ձեռքով ցանկով, մենք կը հաւաքենք հարուստ բերք։ Ուրիշների վերաբերմամբ մեր գործ գրած չափը նրանք էլ գործ են դնում մեր վերաբերմամբ։ Այլ խօսքով, մեզ էլ չափում են նոյն արշինով, որով մենք ենք չափում։ Դրա

համար էլ մենք պէտք է կենդրոնացնենք մեր ամբողջ ուշադրութիւնը այն բանի վրայ, որ մեր հոգին լիքը լինէր միմիայն մաքուր, բարի և ազնիւ մտքերով։

Մեր անգիտակցութեան ամենապայծառ և արտաւորիչ տախտակի վրայ, մեր յիշողութեան հիմքում ուրուագծած է ապագայ անելիքների վերնագիրը. դա ապագայ կեանքի չինութեան մի տեսակ մեթոդ է։ Եւ մենք պէտք է ժրաջան կիրառվ գարուենք այդ մեթոդը, որ ապագայում չէնք չինենք ոչ թէ ածուխից ու մոխրից, այլ ոգեմանդնելից և ուրիշ թանկագին քարերից։

Երբ քեզ սկսում են պաշարել վատ մտքերը, դիմագրիր նրանց և կտեսնես, թէ ինչպէս նրանք կհեռանան քեզնից։ Զինուիր դիմագրութեան վճռականութեամբ և օգնութեան կանչիր մի որևէ ազնիւ տեսակի քար.—Էմերսօնի ոգեմանդը, Ձէքսպիրի մարգարիտը, Կարլէյլի ալմաստը, կամ մի ուրիշ գրողինը, կամ թէ տեղասարակ մի այնպիսի բան, որը լցնէր քո հոգին ատելածդ չերժշտութեամբ։

Թող քո հոգին ձգտէ միայն դէպի լաւ և ազնիւ մտքերը—և դու կը յաղթես։ Փակիր քո ականջները և մի լսիր ոչ բամբասանք, ոչ շահախնդրութիւն։ Զգրգացրու քո մէջ մեծահոգութիւն, սէր և եղբայրութեան զգացմունք դէպի չքնաղատեսնները։ Գիտակցիր քո հզօր ոյժը, գիտակցիր քո իրաւունքը և յոյս դիր բերքի վրայ—դու կը յաղթես։

ՁԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՀՈԳՈՒ ԵՈՐՈՒԹԻՒՆԸ

Շատերը կարծում են, որ եթէ նրանց մէջ գանուած բոլոր զգացմունքները մեռնէին, իսկ իրանք աւելի սառն ու զործնական լինէին—այդ դէպքում նրանք մի բան շահած կլինէին։ Նրանց յոյսի չէ, որ այդ դէպքում նրանը կեանքը կը պրկւէր շատ բանից, որ նրանց գոյութիւնը կլինէր մի իսկական անապատ. նա զրկւած կլինէր սգաւորութիւնից և երկայութիւնից, նա բոլորովին անգոյն կլինէր։

Ազանց զգացմունքների անհրաժեշտ են հոգեկան բնաւորութիւն կրող էսթետիկական պահանջները։ Այդ պահանջները առանձնապէս ուժգին են արտայայտւում երիտասարդ հասակում և մեզ ժամանակի ընթացքում, չնորհիւ այն բանի, որ ծանօթանում են կեանքի օգտակար ու զործնական կողմերի հետ, նրանք որոշ չափով թուլանում են։ Եւ այնուամենայնիւ, որ

քան յաճախ մենք տեսնում ենք, որ գոյութեան կռւում, օրական հացն աշխատելու ժամանակ, այն կռւում, որը կլանում է մեր բոլոր մաքերը, —նախկին մեզ ոգեսթող զգացմունքները բոլորովին մոռանում են։

Ընդնում են տարիներ և մարդիկ զուցէ մըտաբերում են այն մասին, ինչ որ երիտասարդութեան ժամանակ նրանց համար ամենաթանգն էր. նրանք ուրախ կլինէին բոլոր այժերով վերադարձնել այն, ինչ որ կորած է ամենօրեայ ունայնութեան մէջ։

Բանաստեղծի երգերի և հանճարի ստեղծագործութիւնների մէջ մենք տեսնում ենք հատատութիւն այն բանի, ինչ որ ես այժմ ասացի։ Նրանք ստեղծում են իրենց համար աշխարհ, ետ մղելով կեանքի գործնական կողմը վերջին տեղը։

Թող երբէք չցամաքէ քո մէջ այն աղբիւրը, որից կարելի է սառնալ լաւ զգացմունքներ։ Զի որ այն ամենը, ինչ որ բացակայում է քո ինքնատիրութիւնը, այդ հնամեայ ձևերին ու ներդաշնակութեան, քեզ ամէն մեծ բաւականութիւն կը պատճառէ, քան թէ արտաքին ունայն աշխարհի սովորական հրապոյրները և վաղանցուկ փայլը։

«Առողջապահ»

ՕՒՆԱՏԱԴՆԱՅՈՒԹԻՒՆԸ

Առողջարանութեան մէջ չի կարելի մոռացութեան տալ ուխտագնացութիւնը, որ բոլոր ժողովուրդների մէջ ընդունած է և գործադրւում է այս կամ այն ձևով, նայած զանազան համայնքի զարգացման աստիճանին։

Հնումը, հեթանոսութեան ժամանակ ժողովրդի մեծամասնութիւնը բժշկւում էր չաստւածների տաճարներում քուրմերի միջոցաւ, որոնք գիտէին հատատ զօրութիւնից օգտուել՝ հրաշալի բժշկութիւններ կատարելու բազմաթիւ ուխտատեղիներում։

Այդ ուխտատեղիներում գործադրւող բժշկութեան եղանակներին կարելի է ծանօթանալ ոչ միայն հելլինական հին դրականութիւնից, այլև այժմ գտնւած տապանագրերից Օրինակ՝ 1883—1885 թ. պեղումները Պելօպոնէզում, այժմեան Լիգուրիօ կոչւած գիւղում բաց արին Ասկղէպիոս չաստւծոյ տաճարի աւերակները. այստեղ գտնեցին տապանաքարեր, որոնց վերայ գրւած է այս կամ այն հիւանդի պատմութիւնը, ինչ ախտահեւոյթներով նա եկաւ տաճարը, ինչպէս բժշկւեց և որպիսի շնորհակալութիւն արեց

տաճարին։ Այս տոմսակներից երևում է, որ քուրմերը հիմնվելով ժողովրդի ջերմեռանդ հաւատի վրայ, հիւանդին որոշեալ ուղղութեամբ եռապատիկութեան ենթարկելով և հոգեկան նեղչնշումով էին բժշկում, միշտ հրաշագործ Ասկղեպիոսի անունից։ Երևում է նաև, որ քուրմերը օգտակար առողջապահական միջոցներն էլ ձեռքից բաց չէին թողնում. նոր եկող հիւանդին նախ պեաում լողացնում էին և յետոյ մարմնամարզութեան ենթարկում, մի քանի օր՝ մինչև տաճարում քննչելը՝ պատ էին պահել տալիս և այլն, այլն։ Այս էլ պէտք է ասած, որ Ասկղեպիանոսի տաճարները կառուցում էին միշտ առողջարար լեռնային օդ ունեցող, անտառոտ տեղում, գեղեցիկ դիտակների և աղբերակների մօտ։ Այս բոլոր պարագաները միացած հաւատի նեղչնշմանը՝ անշուշտ բարերար ազդեցութիւն էին գործում հիւանդի կազմածքի վրայ։

Քրիստոնեայ ժողովուրդների ուխտագնացութիւնն էլ նոյն բժշկական և առողջապահական ներքին միտումն ունի. հիմնուած սակայն ժողովրդական հաւատի վրայ այս կամ այն վանքին։ Այսպէս առաջ եկած են մեղանում, ինչպէս և ուրիշ քրիստոնեայ համայնքներում, պարբերը հռչակ վայելող ուխտատեղիներ, որոնց դիմում է ժողովուրդը ջերմ հաւատով։

Մեր նիւթից դուրս է քննել դատնարատական տեսակէտով որևէ կրօնի դերը, որոնց պատկերների կամ գերեզմանների պաշտամի հիմքը։ Մեզ զբաղեցնողն է հաւատի ազդեցութիւնը մարդուս առողջութեան վրայ։

Ո՛րքա՜ն չէ հաւատի դերը բժշկութեան մէջ.— հաւատը և դրա վրայ հիմնուած առողջանալու յոյսը ունի մեծ կազդուրիչ զօրութիւն ունին մարդուս ջղային և երակային սիստեմների վրայ, քան թէ մեր միւս նիւթական կազդուրիչ դեղերը, ուստի հիւանդութեան զէպքերում էլ աւելի փրկարար կարող են լինել, քան մեզ դեղերը։

Համբաւաւոր բժիշկների մեծ յաջողութիւնը հիւանդարուժութեան մէջ շատ դէպքերում կախում ունի այն հաւատից, որով հիւանդները գիմում են այդ տեսակ բժիշկներին, քանի որ նրանց պատւիրած դեղերը սովորարար մեկնոյնն են լինում, ինչ որ հասարակ բժշկինը։

Հաւատի ազդեցութիւնը և նշանակութիւնը այժմեան գիտութեան մէջ ընդունուած ճանաչելով, բատ ինս, պէտք է ուրեմն զգուշանանք ուխտագնացութեան դէմ միակողմանի յարձակումներ անելու։

Հասկացնել ժողովրդին անտեղի ուխտադնացութեան վնասակար հետևանքը — պարտք է. իբր օրինակ՝ ջերմուխեան հետ այս կամ այն գործարանի բորբոքում ունեցող հիւանդը, որի գլխաւոր դեղն է հանգիստ պառկելը, մեր վատ ճանապարհներով քանի քանի վերստ հեռաւորութիւնով քարշ է գալիս ուխտադնացութեան, անշուշտ վնասւում է չարաչար: Սակայն անուրանալի է և այն, որ յարատև սրատամչ ապտկացութիւնների տակ առաջ եկած հիւանդութիւնները, ինչպէս օրինակ հիստէրիա, կծկումները և դանդաղ անդամալուծութիւնները, նաև չղաձգութիւնները, որ ոչ մի տեսակ դեղ չէին կիջում, շատ անգամ յանկարծ բժշկել են մի ջերմեռանդ ուխտի ժամանակ: Ուխտատեղիներում դէթ մի քանի օր հանդստանալով իր անկան կամ չարքաշ աշխատանքից և փոխելով սովորական ապրուստի եղանակը, խեղճ ժողովուրդը որքան ուրիշ տկարութիւններից առողջանում է: Ով եղել է հասարակ ժողովրդի մէջ ուխտագնացութիւնների ժամանակ, նա կարող է հաստատել այս տեսակ բարմաթիւ փաստեր:

Քանի որ մենք չունենք, և դեռ երկար ժամանակ չենք ունենալու, մեր լեռնային գաւառներում բոլոր գիւղերի համար սրանց լիակատար

վստահութիւնը և հաւատը վայելող գիտնական բժիշկներ, քանի որ չունինք մեր գիւղացուն մատչելի կլիմա և ջրաբուժարաններ, անշուշտ ախտաճութիւն կլինի ժողովրդին զրկել գոնէ սրբազործած առողջապահութեան այդ տեսակ մի միջոցից՝ արգիլելով ուխտ երթալը և հրապարակելով ուխտատեղիները իբր անիմաստ և հակաբրիստոնէական հաստատութիւններ:

Ցանկալի է ուրեմն, որ մեր հոչակաւոր ուխտատեղիները առողջապահական բոլոր պարագաներով պայծառացուէին: Թող մեր լուսամիտ գանձականներն էլ իրթև քրիստոնեայ, այնքան շատ բարձրից չնային հեթանոս քումերի վրայ: Երանի թէ նրանք ունենային Սկիզբպիոսի պաշտօնեաների հմտութիւնը և գիտնային նրանց պէս ժողովրդի համար լիակատար բուժարաններ պարձնել մեր ուխտատեղիները:

Վերջապէս թողնենք քուրմերին. թող հետևեն մեր լուսամիտները այն քրիստոնեայ սուրբ հայրերի օրինակին, որ մի ժամանակ երևելի վանքերում հիմնում էին պարոցներ, հիւանդանոցներ, որբանոցներ, ծերանոցների ապաստարաններ: Մի քանի վանքերում խնամք էին տանում և հոգևոր կրթութիւն խղճալի կոյրերը, որոնք սովորում էին հոգևոր երգեր և սաղմոսներ

երգել ուխտաւորների առջև։ Հոգևկան հիւանդներն ևս ունէին վանքերում իրենց ապաստանները։ Նոյն իսկ ընկած կանանց համար հաստատութիւններ են եղած, ուր նրանք ապաշխարում էին և բարոյական կեանքի վերադառնում։ Այսպիսի ուխտատեղիներ պէտք կարողանային յիրաւի բաց ճակատով ժողովրդին ասելու — «ես գիտեմ քոյս է քոյոց քեզ մատուցանեմք»։

Բժշկապետ Ա. Բաբայեան

ԱԼՔՈՒԼԸ ԵՒ ԻՐ ԶՈՒԻԶՆԵՐԸ

ԼԻՒՆՆԵՆի հայտնագործութիւնները մեծ նշանակութիւն ունեցան ոչ միայն բնագիտական գիտութեան համար, այլև մարդկային կեանքի շատ կողմերի համար։ Նրանց շնորհիւ մարդիկ սկսեցին աւելի լաւ ճանաչել իրենց մարմինը, նրա կազմութիւնը, նրա գործունէութիւնը։ Նրանց շնորհիւ մարդիկ սկսեցին աւելի լաւ հասկանալ իրենց հիւանդութիւնները, նրանց պատճառները և դրանց դէմ պայքարելու միջոցները։ Նրանց շնորհիւ մարդիկ սկսեցին աւելի լաւ հասկանալ իրենց հիւանդութիւնները, նրանց պատճառները և դրանց դէմ պայքարելու միջոցները։

Ահա այդ մեծ գիտնականներից մէկի՝ ԼԻՒՆՆԵՆի հայտնագործութիւնների մասին ու նախապատմական աւանդութիւնների մի համեմատութեան է պարզակում իր մէջ։ Ըստ այդ հանճարեղ գիշերները թռուցիկները իրենց շուրջը բոլորած պատմում էին այդ աւանդութիւնները հատուցեալի ջերմեռանդութեամբ։

Պատմում է նրանց, թէ երբ Նոյ նահապետ

աւազին այդին անկեց, նրա ոզկոյզները արդիւնաբերելու համար կենդանիների արիւնով ոռոգեց նրանց. ամենից առաջ ոչխարի արիւնով, ապա աչխարի և վերջը խոպի։ Դրա համար է, որ այդ ողկոյզներից պատրաստած խմիչք խմող մարդը նախ ոչխար է դառնում, այժ ու զօրութիւն ցոյց իր երակների մէջ, մի քիչ յետոյ թուլանում է և ոչխարի նման հեզ ու երկչոտ է դառնում և ամենից վերջը խոպի է փոխւում, կռիւների մէջ թաւալ գալով և նրա պէս ագռեղութիւնների մէջ հաճոյք գտնելով։

Այս աւանդութիւնը իր պարզ բովանդակութեամբ անժխտելի ճշմարտութեան արձագանքն է և պարունակում իր մէջ հարբեցողի կենդանի պատկերը, նրան ցուցադրող հայելին ներկայացնելով։

Այո, ճշմարիտ է, որ ալքոլի առաջին բաժակները մարդու ուղեղ են զարկում զրգռելով նրա ամբողջ ջղային սիստեմը։ Սրա համար չէ մի՞թէ, որ պատերազմի ժամանակ զինուորներին ալքոլ են խմացնում։ Միայն մկանների այժը չէ, որ ալքոլը աւելացնում է, այլ նոյն իսկ մտաւոր կարողութիւններին ամենաբարձր թռիչքն է ընծայում մակայն գաղարկող բաժակների կրկնութիւնը գրգռած ջղային վիճակը հետզհետէ

թուլացնում է, ապա մտաւոր կարողութիւնները՝ պատողութիւնը. երեւակայութիւնը, միտքը, կամքն ու զգայմունքը աստիճանաբար տեղի տալով, դառնում է անբան, անզգայ մի կենդանի, յար և նման աւանդութեան մէջ ասւած խօսքին։

* * *

Փարիզի ալքոլի դէմ կռիւ մղող կամաւոր դինուորների սրտին մէջ տեսել եմ մեծ վարպետի վրձինի տակից դուրս եկած մի պատկեր, այնքան ճարտար և իմաստալիօրէն նկարւած, որն իր մէջ խտացնում էր ալքոլի կատարած չարիքների ոտղանգը։

Պատկերը ներկայացնում է մի խրճիթ, որի խարխլած տեսքը, կոշ-կարասիների աղքատութիւնը բացորոշ կերպով զգալ են տալիս դիտողին, թէ աղքատութիւնն է թագաւորում այտեղ։ Լերկ գետնին, տախտակամածի վրայ դիակի նման փռւած է մի մարդ, որի դէմքի վրայ կարդացւում է վաղահաս ծերութեան գրոշմը և որի չրթունքներից ալքոլի թունաւոր հոտը կարծես զգում էք ուռնդներիդ մէջ։ Մարմնի մերկ մասերի վրայ սպիները պատմում են քեզ նրա անցեալը ևս։ Նրա մօտ կանգնած էր մի պառաւ կին,

որի աչքերն արտայայտում էին օգնութեան տղերս և խորը վիշտ։ Այդ աբրեցողի մայրն էր։ Այս կողմը աչքերի տակ մի չհանել կին էր կանգնել, տառապանքից հալումաշ, նւաղած, ծծից մանկիկը կախ ընկած, մի ուրիշը, մի քիչ աւելի մեծը փէշերից է բռնել։ Զքաւորութիւնը բոլորի դէմքերից, շորերի ցնցոտիներից արտացոլում էր, չքաւորութիւն, որի պատճառը ընտանիքի հարբեցող հայրն էր։

Ըստ, շատ անգամներ հետացմունքով կանգնել եմ այդ պատկերի առաջ և ամեն անգամ մտքով փոխադրւել եմ դէպի այն տները, ուր ամեն օր նոյն տեսարանները կրկնւում են բոլոր մանրամասնութիւններով և ամեն անգամ էլ հոգիս վրդովւել է և տանջութեան բաւն զգացել։

* * *

Ալքոլը, գիտական տեսակէտից վերցրած, իր բոլոր ձևերով, բացի բժշկական յանձնարարութեամբ որոշ չափի գործածւելուց, տաւոր մի թոյն է, որ կամաւոր ու հաճոյքով ընդունում են մարդիկ, մի ճշմարիտ թոյն, որ անմիջական և վտանգիկ ազդեցութիւնից դուրս ժամանակի ընթացքում նախ բորբոքեցնում և յետոյ այլասե-

ռում է մարդակազմական ինչ հիւսուածքի հետ որ չփի, լինի դա ոսոմոքո, լեարդ, երիկամունք կամ շնչերակ, բայց մանաւանդ մի մոերմութիւն ունի ջղային դրութեան հետ, որի կազմութիւնը ջլաւոում է:

Ալքոլը մարմնակազմի մէջ այն աւերն է առաջացնում, ինչ որ անում է ծերութիւնը, որով շատ հեշտութեամբ կարելի է ասել, որ նա վաղահաս ծերութեան առաջնորդող խոշոր ազդակն է: Բացի դրանից գրեթէ բոլոր գործարաններն վրայ ազդելով նրանց թուլացնում է և դիմադրական ոյժը պակասեցնում, և ընդունակ դարձնում զանազան հիւանդութիւնների բացիլների ազդեցութեան: Բժիշկները արխուր փորձառութեամբ գիտեն, թէ որքան ճըշմարիտ է այն առածը, թէ «Ըրեցողութիւնը թաքսաի անկողինն է պատրաստում»:

Ալքոլը ֆիզիքական և բարոյական կեանքը միայն կողտահան դատապարտելով չի բաւականանում, նա իր ազհատուր ազդեցութիւնն է անում նաև ազգայ և ընկերական կարգերի վրայ: Վիճակագրութիւնները բացարձակ ցոյց են տալիս, թէ ընկ. մէջ ապրող, լաւ է ասել իրենց չարատանջ գոյութիւնը քաշքշող խեղանդամներ, խելագարներ և ջղային տմեն տեսակ հիւանդու-

թեան ենթակայ թշուառներ, արբեցողների զաւակներ են: Գալով ընկերական կարգերի մէջ ունեցած վատ ազդեցութեան, բաւական է յիշել, որ ոճիրներ և անձնասպանութիւններ միշտ գործել կամ գրդել է արբեցողութիւնը: Ըրբեցողութիւնը չէ պատճառը, որ հիւանդանոցների, գժանոցների և բանտերի թիւը օրըստօրէ աւելանում է:

Գիտութիւնը, մինչև այժմ գոյութիւն ունեցող միջոցները անբաւարար գտնելով՝ օրէցօր նորագոյն գիւտեր հնարելու հետամուտ է լինում պայքարելու մարդկութեան պատուհասը համարուող մի կարգ ախտերի դէմ, սակայն ոչինչ չի կարողանում անել ալքոլի դէմ մաքառելու, որը մարդկութեան երբորդ չարիքն է թոքախտից և վատախտից յետոյ:

Ըրբեցողութիւնը մի այնպիսի ախտ է, որի դէմ մաքառելու համար հատուկան հսկայ ու անխոնջ ոյժ է հարկաւոր: Դարոցը և լրագրութիւնը կուի երկու աւազ դաշտերն են հանդիսանում, որտեղից կարելի է այդ ախտերի դէմ մահացու սլաքներ արձակել:

Դոկտ. Ս. Զիլինգարեանց

ՄԱՐՄՆԻ ՄԱՔՐՈՒԹՈՒՆԸ

Վաղուց ասւած է, որ մաքրութիւնը մի առաքինութիւն է և մասամբ էլ սնունդ։

Մովսէս և Մահմէդ մարմնի լուանալը իրենց կրօնական խիստ ծիսակատարութիւնների շարքում ամենակարևոր տեղն են տւած, իսկ հռոմայեցիք հիմնել էին հասարակական բաղանիքներ իրենց լեգիօնների համար։

Հռչակաւոր բժիշկ փիլիսոփայ Բռուսէ իր մահուան ժամին ասել է. «Ես հանդիստ եմ մեռնում, քանի որ թողնում եմ իմ յետևից երեք մեծ բժիշկներ—ջուր, ժուժկալութիւն եւ մարմնամարզութիւն։

Պարզ է, որ տարիների ընթացքում հասկացել են կաշւի մաքրութեան մեծ նշանակութիւնը, քանի որ նա մի քանի կարևոր դեր է կատարում մեր կազմւածքի մէջ։ Եթէ կաշին իր գործառնութիւնների կատարման մէջ դանդաղի, մենք զգում ենք յոգնութիւն, իսկ եթէ բոլորովին դադարի գործելուց, մահը կլինի դրա անխուսափելի հետևանքը։

Մեր կաշին հազարաւոր փոքրիկ անտեսանելի խոցեր ունի. այդ խոցերի շնորհիւ, զիտնականների ասելով, օրական 1000—1500 գրամ—

մօտ 2 և կէս շիշ քրտինք է հոսւում, թողնելով մեր կաշւի վրայ իր մէջ լուծւած կարծր մասերը—աղերը և ճարպերը, որին խառնւում են օդի մէջի փոշին և մանրէները և վերջապէս վերնամաշկի բջիջների մնացորդները։

Որպէսզի հեռացնել բոլոր այդ կեղտոտութիւնները և կաշւի խոցերը բաց պահել, պէտք է մեր ամբողջ մարմինը ամեն օր լուանալ առատ ջրով և սապոնով։

Ամենօրեայ այս հոգատարութեան համար հարկաւոր է միայն սովորութիւն և բարի կամք—ջուրը, որ բնութեան նւէրն է և մի սովորական տաշտ, որ ամեն տան մէջ կգտնւի ու մի քանի րոպէ ազատ ժամանակ—ահա այն բոլորը, ինչ որ պէտք է դրա համար։

Այդ լոգանքի համար ամենայարմար ժամանակն է առաւօտը՝ անկողնից անմիջապէս վեր կենալուց։ Փորձեցէք միայն մի քանի օր և ամենաքիչ ժամանակամիջոցում այդ ամենօրեայ լոգանքները պահանջ կդառնան ձեզ համար։

Փորձեցէք և դուք չէք զղջայ։

ԱՂԻ ԿԵՐԱԿՐԻ ՎՆԱՍԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Ճաշերը կարծում են, որ աղի կերակուրը աւելի համեղ, հիւթալի և մարսողական է, բայց Գրանսիացի բժ. Բէէգոնէ այս մասին արած հետազօտութիւնները թէ բաւականին հետաքրքիր են և թէ վերը յիշած կարծիքին բոլորովին հակառակն են ասում ու միևնոյն ժամանակն էլ իրատական են:

Գիտնականը մանաւանդ ալբումինով մարսողական գործառնութեան խնդրով, ապացուցանում է, որ կերակրների որոշեալ չափով ադած գործածութիւնը անհրաժեշտ է կանոնաւոր մարսողութեան համար, իսկ չարունակարար աղի աւելորդ գործածութիւնը առաջացնում է ընդհանուր կազմուածքի թուլութիւն և անհանգստութիւն, որոնցից կարող են առաջանալ ընդհանուր առողջութեան վիրաբերմամբ շատ վատ հետևանքներ:

Եթէ կերակրի մէջ մարսողութեան պահանջից աւել աղ լինի, այդ դէպքում մարսողական բոլոր գործողութիւնները կթուլանան և կը պակասին. կերակրի ննդային նիւթերի մեծ մասը կմնայ անմարս և կը կորչի, իսկ մարսածներն էլ զգուարութեամբ կը ծծուին աղիքներից ներս և

կթափանցեն մեր կազմի բոլոր մասերի մէջ. մարսողական խողովակի միջի ջրային մասը—հեղուկը կը չատանայ, իսկ արեան հեղուկ մասը կը պակասի:

Որպէսզի մարսողութիւնը կատարւի լաւ և կանոնաւոր, պէտք է աննդարար հիւթերի լուծումը և գործարաններից ներս ծծիլը հատատարապէս կատարւին. եթէ այս երկու գործողութիւնների մէջ համաչափութիւն չլինի, կառւի տիրողջ կազմուածքը:

Սննդական նիւթերի լուծումի — իրացման ամենամեծ արգելքն է աղիքների պատերի մէջ կուտակւած ջուրը, որի անմիջական պատճառն է կերակրի միջի աղի առատութիւնը: Բացի դրանից, աղի չատութիւնից առաջանում է ծարաւի աւելանալը. այս երևոյթը բացատրւում է նրանով, որ ջրային մասերը կուտակւելով աղիքների մէջ, մեր կազմուածքի միւս մասերը և գլխաւորապէս ջղային կենդրոնները մնում են առանց ջրի:

Ճաշ անդամ մարդ սխալւում է կարծելով, թէ ծարաւը կանցնի, եթէ խմի ոգելից խմիչք ներս և սկսում է անհաշիւ խմել այն յուսով, թէ նրանով կը թեթևացնի իր ծարաւը. բայց ջրով լիքը աղիքները արգելք են լինում որ խմած հե-

դուկները, չնայած իրենց քանակին, կարողանան նեղս թափանցել։

Ըղի կերակուրը ծարաւ կտուչացնի, այդ փաստ է, և եթէ ըղի խորակը շատ օղի և գինի խմելու փորձանքի մէջ է դնում մարդուս, այդ էլ ամենը գիտեն, և մի՞թէ իրենց սովորութիւն դարձրած գինարբուները կարող են պարծենալ իրենց կանոնաւոր մարսողութեամբ և առողջ կազմուածքով։

Մի փոքր էլ լսենք բժ. Բէլզօնին. Նա հաստատած է, որ հարբեցողութեան մեծ մասը հետևանք է կերակրի մէջ շատ աղ գործածելուն և իր արած հետազօտութիւնների վրայ հիմնուած հաւատացած է, որ եթէ մի հարեխայ մանկական հասակից սովորութիւն անէ շատ աղի կերակուրներ ուտելու, նա կքուլանայ, նրա մաւսր ընդունակութիւնը կակարանայ, ապուշ կդառնայ և ուսման մէջ էլ միշտ յետամնաց կլինի։

ՇԱՔԱՐԸ ԻՐՐ ՈԻՏԵԼԻՔ

Լուսաւորեալ աշխարհի մի շարք հեղինակաւոր գիտնականներ բազմաթիւ փորձերով և հետազօտութիւններով հաստատում են, որ շաքարը և նրանից պատրաստած ուտելիքը գործադրողների մկանունքները ամրանում, կազդուրւում և առոյգանում են, օրինակ՝ բժ. Վօգհան Հաալէ հաստատում է, որ այդպիսիների մկանունքը առ հարիւր 26—33 տոկոս զօրեղանում է։

Գերմանական գինւորական բժիշկները փորձերով հաստատել են, որ շաքարը շատ ու շատ մեղմացնում է քաղցը, ծարաւը և թեթևացնում է յոգնածութիւնը ու դրա համար էլ գերմանական բանակում շաքարի գործածութիւնը անխոնայ է կատարւում, մանաւանդ պատերազմական արշաւանքների ժամանակ. շատ են օգտում նրանից նաև հեծանիւաւորները. բացի այս, ինչպէս հանրակաւոք, այնպէս և թեթև կազքերի ձիերի կրի հետ շաքար լատնելով բացի ճաշակելիքի քաղցրացնելուց, նպատակաւոր է նաև առողջապահական տեսակէտից։

Ցայսնի Հիրրերտ Սպենսէրը առանձին հաճոյքով նկատել է, որ առհասարակ երեխաները շաքար և քաղցրեղէն սիրելով, բացի քիմքը քաղցրացնելուց, անգիտակցաբար մարմնի ինքնակազդացմունք են ստանում. արդի գիտութիւնը և առողջապահութիւնը այժմ հաստատում են նրա ասածները։ Բժ. Լանսիւս գտել է, որ հինգ կտոր շաքարը (թէյի բաժակի մէջ գցուղ) երեք

անգամ աւելի սննդանիւթ և ջերմութիւն են արտադրում, քան 40 ռանտիմ արժեցող կաթլիտը։

Գիտնականները միաձայն ցաւ են յայտնում, որ այսքան առողջապահիկ և սննդարար նիւթ կազմող շաքարը իր թանկութեան պատճառով շատ չէ գործադրւում և ամենին մատչելի չէ։ Մանաւանդ նկատելի է այդ Ռուսաստանում, որը շաքարի արտադրութեան գործում առաջին տեղերից մէկն է բռնում և ուր շաքարը բոլոր երկրներից ամենաէժանն է։ Ցանկաստանի և Պարսկաստանի մէջ ռուսական շաքարը աւելի էժան է, քան թէ մեզ մօտ։

ՄԵՂՐՈՒ ՌԱՒԺԻՒՉ ՅԱՏԿՈՒԹԻՒՆԸ

Հնուից մեղրը համարւել է ոչ միայն շատ բարձր սննդարար, բուժիչ նիւթ, այլ և նրան վերագրել է մարդկանց կեանքը երկարացնելու յատկութիւն, որի մասին ցուցմունքներ կան մի նացած գրւածքներում։ Ամենաառաջին քրիստոնեաներն ևս մեղրին աւել են խորին խորհրդաւոր նշանակութիւն, որի հիմամբ նոքա ծիններին նուիրաբերում էին կով և մեղր, իբրև վերածնութեան և հոգևոր կատարելութեան սիմվոլ (խորհրդանշան)։ Մեր կրօնական կեանքում ցարդ մեղրը դեռ չի կորցրել իր սիմվոլիքական նշանակութիւնը և գործադրւում է ճրագալոյցին — քրիստոնէական այդ մեծագոյն տօնի, այն է՝ Քրիստոսի ծննդեան նախօրեակի և հոգեհացերին։

Թէ ինչպէս բարձր էին գնահատում մեղրը հին Գատակարանական աշխարհի հերոսները, այդ երևում է նրանից, որ նրանով էր կերակրւում Փրկչի Կարապետը՝ ս. Յովհաննէս Մկրտիչը, իսկ քոա աւանդութեան, որ մեզ է հասցնում օտար մամուլը, նաև Եղիա և Եղիսէ մարգարէները։

Մեղրի համար հետաքրքիր տեղեկութիւններ են թողել հին աշխարհի գրողները։ Պիւթագորոսը, օրինակ, պնդում էր թէ միմիայն ճնորհիւ մեղրի գործածութեան նա խորին ծերութեան է հասել (90 տար.), թէ չէ կվախճանւէր 50 տարեկանում, երբ հիւանդացել էր։ Արիստոտէլը, որ իր գրւածքների մէջ առանձին ուշադրութեան է արժանացնում մեղուներին, նոյնպէս տալիս է մեղրին մարդկանց կեանքը երկարացնելու յատկութիւն։

Նոյն համբաւն ունէր մեղրը և միջին դարերում, և մեր նախնիք, որ ընդարձակ չափերով մեղր էին գործադրում իրր ուտելիք և ըմպելիք, երկարակեաց և քաջառողջ էին ընորհիւ մեղրի։

Միջին դարերում մեղրից օգտւում էին նոյնպէս իբր ամենաօգտակար տեղից ընդդէմ ներքին և արտաքին հիւանդութիւնների. իսկ ժողովրդական բժշկութեան մէջ նա ցայսօր էլ մեծ գործածութիւն ունի, մինչդեռ գիտական բժշկականութեան մէջ նա այնքան էլ չի արժանանում բարեհաճ ուշադրութեան և այդ գուցէ այն պատճառով, որ գեղատներում յաճախ գործադրւում է, այսպէս կոչւող, զանազան մեղր և այդ պրեպարատը, չնայելու զանի, միեղրին յատուկ յատկութիւնները չունի և է միայն մեղրից քաշած շաքարեղէն ծծւանք։

Հնում մեղրը գործադրել են այն բոլոր դէպքերում և կարիքների ժամանակ, ինչպէս այժմ բաւականանում ենք շաքարով միայն։ Իսկ մեղրը—թէ իբր ուտելիք և թէ դեղ—անչափ գերազանց է շաքարից, այդ կասկածի չի եղել երբէք։ Մեղրը քիմիական նիւթերի տրգոսիք է և պարունակում է իր մէջ այնպիսի բաղկացուցիչ մասեր, որոնք անպայման անհրաժեշտ են մեր օրգանիզմին (մարմնակազմին), որովհետև կազմւած է մաքուր շաքարից—խաղողեղէն, եղէգնեղէն և ընդեղէն մի աննշան խառնուրդով տպիտակուցային նիւթերի, երկաթի խառնուրդով, հերքային իւղերով և մրջմային թթուտով, որ մի-

դուներն իրենք են աւելացնում դիմացկանութիւն տալու մեղրին։ Իսկ մեր սովորական շաքարը կազմւած է միմիայն մի մասից—եղէգնեղէնից և համարեա միշտ պարունակում է իր մէջ մնացորդները քիմիական այն նիւթերի, որոնք գործադրւում են նրա զտման համար, այլ և պարունակում է արիւնը վարակող այն ինգրեդիենտները (դեղի բաղկացուցիչ մասերը), որոնցով գործարանատէրերը շաքարին տալիս են հրապուրիչ տեսք։ Այդ պատճառով և արհեստական շաքարի վնասն ստամոքսին և աղիքային անցքին ակներև է։

Մեղրը վերին աստիճանի սնուցիչ է եւ դիւրամարս, որովհետեւ մարսւում է համարեա ամբողջապէս։ Իբր ուտելիք գործածելիս, նա նկատելի կերպով թարմացնում է մարմինը, որովհետև մեր արեան սպիտակ գնդակները՝ աղտ լինելով դժւարամարս մնացորդներից՝ առանց դանդաղեցնելու կլանում են նոսրացած մեղրը. սա արեանը տալիս է յայտնի եռանդ, որից ամբողջ օրգանիզմն սառնում է մկանային ամրութիւն, մարմինը—թեթեւութիւն և ճկունութիւն շարժողութիւնների մէջ, ջղերը—թարմութիւն, մարդ բարձրանում է հոգեպէս, լայնանում է մարի հոգիները և խաղաղ քուն է գալիս։

Պանրնաւոր առողջութեան ժամանակ օգտակար է մեղրի երեք անգամ դործածութիւնն օրական և ըստ կարելոյն մեծ բաժիններով. օր. մի մի հացի դդալ առաւօտներր բուլկայի կամ տաքցրած կաթի հետ. ճաշից կամ ընթրիքից յետոյ դդալով չրի կամ թէյի հետ. իսկ երբորդ անգամ քնի պահելուց մի փոքր առաջ: Ուտելուց յետոյ գործադրւած մեղրը նպաստում է արագ մարսողութեան: Հիւանդ ժամանակ, երբ օրգանիզմի ընդհանուր վերաշինութիւնը նպատում է, պէտք է օգտւել մեղրից փոքր բաժիններով, օր. կէս-կէս թէյի դդալ՝ ընդունելով եփած տաք չրի հետ, բայց յաճախ մի կամ երկու ժամից յետոյ:

Թարգմ. Արշակ Բահ. Տէր-Ոսկանեան

ԳՈՒՊՉԱՊԱՀԱՆ ՄՏՔԵՐ

— Երիտասարդութիւնը մի վարդ պտակ է, իսկ ծերութիւնը փշէ պսակ:

— Հառաչանքներով դեռ ոչ ոք չէ բուժել իր վիշտը:

— Ծակատակերութիւնը հեռացնում է շատ հիւանդութիւններ:

— Համեստ նախանձը երեկոյեան ճաշի ախորժակ է տալիս:

— Մաքրութիւնն է առողջութեան պահապանը և դղրիւրը:

— Ոչ միայն մարմինդ մաքուր պահէ, այլ և բնակարանդ:

— Լաւ է խնամել իր առողջութիւնը, քան թէ իր հիւանդութիւնը:

— Քունդ գալուն պէս պառկիր, զարթնելուդ պէս հագնւիր, անօթանալուդ պէս ճաշիր:

— Երկար ժամանակ տալրել կուգես, մածուն շատ գործածիր:

— Չգոյչ եղիր հում բան ուտելուց, բոբրկ ման գալուց և կայուն չուր խմելուց:

— Երեկոյ հացր, այսօրւայ միտր, մի ամսւայ ալիւրը և մի տարւայ գինին մարդուս առողջ են պահում:

— Վերանորդ և գլուխներդ ծածկեցիք այն ամիսների մէջ, որոնց անուններր «Ր» տառն են պարունակում իրենց մէջ:

— Գրքերը մարդկությեան ամենից դառն հիւանդություններն են։

— Չափազանց ճաշողը կղզկւի թէ ուտելու հաճոյքից և թէ մարսողության օգուտից։

— Թեթև սոսմոքսը սիրտը գործի է պահում։

— Չորս բան անզին են.— առողջությունը, գիտությունը, առաքինությունը և պատուությունը։

— Լաւ ապրողը երկար կապրի։

— Ուրախությունը մարդուս կեանքը երկարացնում է, իսկ տխրությունը՝ օրերը կարճացնում։

— Մեծ խնամքով պահիր երիտասարդության փափուկ և պայծառ ծոցիկ հասակդ մեղքի խորշակից, որ երբ հասնի կեանքիդ աշունը, չճաշակես նրա դառն պտուղը։

— Հիւանդության ժամանակ պէտք է քաջասիրտ և հանդարտ լինել, որովհետև հիւանդության շուտով բժշկելուն քաջասրտությունը և հանդարտությունը խիստ կարևոր է։

— Առողջությունն անգին գանձ է, առանց որի ամենամեծ հարստությեան մէջ էլ կեանքը զզելի է և մի ծանր բեռն. ուստի ով դուք, որոնց Աստուած այս թանկագին գանձը և հարստությունը պարգևել է, լաւ գիտցէք նրա յարգը և վայելեցէք նրան ամրողջովին։

— Չգոխությամբ կեանքը շատ շուտով է մաշւում և առողջությունը իսպառ խանգարւում։

— Առողջությունը խանգարւում է ամեն տեսակ մոլությիւններով, պէտք եղած անունը չառնելով, ուտելիքի և խմելիքի մասին որկրամոլ լինելով և ինքն իրան հոգս չառնելով։

— Առողջությունն ու ժամանակը հարստությիւնից թանկագին են։

— Հիւանդության ժամանակ պէտք է քաջասիրտ և հանդարտ լինել, որովհետև շուտով բժշկելու համար քաջասրտությունն և հանդարտությունը խիստ կարևոր են։

ԲԺՇԿԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—

—Երկու ծայրահեղութիւններից դուշայիրառաջինը՝ կերակրի միօրինակութիւնից և նուազութիւնից, իսկ երկրորդը՝ շատակերութիւնից ու կերակրի պէսպէսութիւնից, երկուսն էլ խանգարում են մարսողութիւնը։

—Շատ հիւանդութիւններ ծանր ճաշերից են առաջանում։

—Տաք և փակուած սենեակի մէջ շատ նստելը ցրտառութեան և հարբուղի պատճառ է դառնում։

—Ձայնը մի մանաւոր ազդեցութիւն ունի մարդի վրայ, հետևաբար յուսով, ուրախութեամբ ու զւարճութեամբ խօսիր, և պիտի կլաս նրա բացարձակ ազդեցութիւնը թէ մարդիդ և թէ մարմնիդ վերայ։

—Այն անձը, որ կերած կերակրից վախենում է, թէ իրեն պիտի մնասէ, շատ հաւանական է, որ այդ անտեղի երկիւղը իրականանայ։

«Բժիշկ»

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐԱԿԻՉ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Երկրի հաստատուած է, որ մի շարք հիւանդութիւններ, գլխաւորապէս տաք (արևադարձային) և ճահճային երկրներում, մարդկանց մէջ փոխադրւում են կենդանիներից։ Ծայտնի է նոյնպէս, թէ մեծ մկները (крыса), ճանճերը, մոծակները և լւերը ամեն տեսակ վարակիչ հիւանդութիւնների տարածողներ են։

Իսկ ընտանի կենդանիների՝ օրինակ կատուի և թռչնակի մասին թէև դեռ կարծիքներ կայլին. սակայն վերջերումս բժ. Կոհեն վճռակամապէս հաստատեց, որ կատուները, շները, ձիերը, եղջիւրաւոր կենդանիները և հաւերը իրենց շնչափողերի միջոցով բգացաւի (лифтерит) տարածողներ են և թէ այդ անասունների, մինչև անգամ առողջների շնչափողերի մէջ էլ այդ հիւանդութեան մանրէներն են գտնել։

Բժ. Կլիեն Սամրօն իրեն հետազօտութիւնները ուսի խորը տանելով հաստատեցին և ըստան, որ ինչպէս կատուները, ազատինները, նոյնպէս էլ միւս թռչունները վտանգաւոր են և ընդունակ են տարածելու ամեն տեսակ վարակիչ հիւանդութիւններ։ Բացի ուրիշ հիւանդութիւն-

նրբից, վաղուց հաստատած է, որ բորոտութիւնը և ժպալաւինատրդը (солитеръ) մարդկանց մէջ տարածողները ըստ մեծի մասին կատուներն են, որով խորհուրդ են տալիս զգուշանալ պահել տանը, մանաւանդ երեխայոց ընկերակցութեան մէջ՝ այդ չղոքորթը, բայց վտանգաբեր կենդանիներին։

ՍԵՌԱԿԱՆ ՓՈՓոխՈՒԹԻՒՆՆԵՐ

Գինարարանութեան մէջ յայտնի և ընդունուած իրողութիւններ են, որ եթէ կանանց կամ տղամարդկանց սեռական գեղձերը—ամորձիքը և ձուարանները արմատահանին, նրանք փոքր առ փոքր ժամանակի ընթացքում կկորցնեն իրենց սեռական առանձնայատկութիւնները—կաւսս կը դառնան։

Այս երևոյթը բացատրում էին նրանով, որ սեռական գեղձերը ունին իրենց ներքին արտադրութիւնները, որոնք խառնելով արեան հոսանքին ու նրա հետ մարմնի բոլոր մասերի մէջ տարածելով, այնտեղ որոշ միջբջիջային սննդական բնորոշ փոփոխութիւններ են առաջ բերում։

Պրագայի գերմանացի պրոֆ. Զեյներոլա հիմնուելով այդ տեսութեան վրայ, արել է հետևեալ փորձը։

Ընդամառատելով ծովային արու խոպուկների ամորձիքները, կապել է նրանց անդը էգի ձուարանի գեղձերից և նկատել է, որ արու խոպուկների վրայ սկսել են երևալ էգերի յատկանիշներ (ծծերի խոշորանալը, ճարպային հիւսուածքների զարգացում և այլն), կմախքը, գանգը և բերդը սկսած են փոխուել, ինչպէս և կենդանու հոգեբանական առանձնայատկութիւնները։

Այդ փորձը աւելի ևս հաստատում է գիտնականի ենթադրութիւնը նրանով, որ արական և իգական սեռի յատկանիշները արդիւնք են գեղձերի ներքին արտադրութիւնների։

ՍՈՒՏԻ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Սոխը նոքից սկսում է բժիշկների ուշադրութիւնը իր վրայ դարձնել. լաբդի հիւանդութեան մի դէպքում, որի հետ սկսել էր նոյնպէս և ջրդողութիւնը, նա իրրև միզամուղ միջոց, մեծ ծառայութիւն է մատուցել։

Հին դարերում եգիպտական, խորայէլացի, յոյն և հռոմայեցի բժիշկները մեծ կարևորութիւն են տալիս դրան։ Սոխրատը առաջարկում էր սոխը իրրև ուժեղացնող միջոց։ Ցուլիոս Գեսարի գինուորները Գալլիական արշաւանքների ժամանակ սոխի մեծ պաշար էին վերցնում իրենց հետ։ ԺԷ և ԺԸ դարերում նրանով բժշկում էին յօդաթուլութեան, յօդացաւի և երիկամունքների հիւանդութիւնները։

ՆԵԱՆԴԵՐԻ ԾՐԱԳՐՆԵՐ

ՉԻԱՐԹՈՒԹԻՒՆ

Ով որ զարթ հոգի է կրում, օրհնութիւն է տանում այնտեղ, ուր որ գնում է։ Իրաւունք չունինք մեր գանգատներով և տրտունջներով մարդկանց մէջ գնալու։ Մեր ընկերասիրութեան պարտքի մէկ մասն է՝ միշտ մեր լաւագոյն բաները տանել մեր ընկերներին.—զարթութիւն, սէր և խնդութիւն, փոխանակ տխրութեան, դժգոհութեան և վհատութեան։ Մեզ պատւիրած է լոյս լինել աշխարհին, այնպէս փայլեցնել մեր լոյսը մարդկանց առաջ, որ նրանք տեսնեն մեր բարի գործերը։ Դժգոհութիւնը, դանդաղ և տխրութիւնը լոյս չունին։ Եւ մեր կեանքի կշռումը երբէք չի իրագործւում, եթէ մեզ տանք, որ տխրութիւնը մեզ պատէ։

Ով որ միշտ զարթ է, պարագաններին իշխում է և յաղթում։ Ոչ մի բան չի կարող յաղթահարել նրան։ Զարթութիւնը քաջասրտութիւն է, նաև առողջ է պահում մարդուն. զարթութիւն չունեցողը հիւանդ մարդ է։

Այն, որ իրեն և ուրիշներին ասում է «հիւանդ էմ», իսկապէս էլ հիւանդ է։ Բայց այն, որ այսպէս չի ընդունում՝ թէ հիւանդ է և զարթութեամբ է շարժւում, որպէս թէ առողջ լինի, յաղթում է շատ տկարութիւնների, որոնք կարող էին ծանրանալ, եթէ տեղի տար նրան։ Զարթութիւնը առողջութեան նախնական գաղտնիքն է, մարդուն առողջ է պահում։ Ճաւխանական հիւանդութեան գաղտնիքներից մէկն է զարթութիւնը։

ԳՍՏՈՂՈՒԹԻՒՆ

Մի մարդ, որ շարունակ գործերի վատութեան վրայ է խօսում, նա բնաւ յաջող մարդ չի կարող լինել։ Երկարօրէն մի մտածիր որևէ բանի մութ կողմի վրայ։ Հրաժարիր խօսելուց առևտուրը և գործերը վատ լինելու վերաբերմամբ։ Սովորիր քաջալերիչ բաներ խօսել, և ոչ թէ յուսահատական։ Կան շատ գործի մարդիկ, որոնց հնացած ախտն է միշտ գանգատիլ և յանկանք գտնել։ Նրանց համար ամեն բան վատ է։ Կան և ուրիշներն էլ, որոնք յոռետեսութեան ճամբից չեն կարող դուրս գալ և մի որևէ բանի մէջ փայլուն կողմ կամ յաջողութիւն տեսնել։ Այս կարգի մարդկանց համար չկայ յաջողութիւն։

Ինքդ քեզ չընդհատող նիւթական ու բարոյական չարիքներից գեր ի վեր համարիր։ Ծովերի բարոյական վնասեցուցիչ ազդեցութիւններից վեր բարձրանալ։ Մի բանի փայլուն կողմին նայիր աւելի շատ, քան թէ մթին և նսեմ կողմին։ Ընչաքաղցը սիրում է յուսալից և ուրախ բնաւորութիւնները. խորշում է տրտմաթախիծ պատգամախօսներից, որոնք միայն բարոյական ձախորդութիւն և գժբախտութիւն են տեսնում ամեն տեղ։ Յուսալից և գործի մարդիկ իրենց գործերի մէջ նիւթական և բարոյական յաջողութիւն են տեսնում.—ճիշտ այդ անձերն են, որոնք ամեն տեղ փնտռում են։

Ինչպէս բնական է, որ մարդիկ սիրում են ամպերից և սուրներից փախչել և գնալ արևի լոյսի մէջ, նոյնպէս բնական է, որ խորշին անհաճոյ, անախորժ և յոռետես մարդկանցից։

ԴԱՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

—

—Քանի որ գաղտնիքս ուրիշին չեմ յայտնել, բանտարկեալ գերու նման մնում է մնում, բայց երբ ուրիշին յայտնում եմ, ես եմ դառնում նրա գերին։

—Առաջանից փող պարնելը վտանգաւոր է, բայց նաև արդի կրիտիկական ժամանակում ապագն ամենայն անգաղտնապահութեամբ հրատարակելը գոնէ խոհեմութիւն չէ։

—«Մի գաղտնիք ունիմ, բայց չեմ կարող յայտնել» ասում է գաղտնիք պահել չկարողացողը։ Եթէ հնար լսօսես, իսկոյն գաւրս է տալիս պատածը.—ճշմարիտ գաղտնապահը ոչ մի դէպքում բերանը չի բանայ։

—Ուրիշի գաղտնիքին հետամուտ մի լինիր. եթէ պատահի, որ մէկն իր գաղտնիքը քեզ յայտնէ, մի օգտակար խորհուրդ առնելու համար—խորհուրդ աւար, բայց գաղտնիքի ատենդապահութիւնն էլ հաւատարիմ եղիր։

—Ամենափոքր գաղտնիքդ իսկ մի յայտնիր ամենամտերիմ կարծած ընկերիդ. որովհետև կան մարդիկ, որոնք կատի բնաւորութիւն ունին, երբ սիրում և փայփայում ես՝ քծնելով չորս կողմդ պտոյտ գալիս, իսկ երբ պոչերը կոխես, ցասումով լցած երեսիդ են ցատկում։

—Ուրիշին գաղտնիք յայտնելը՝ մեր չեղած բանը մեր ուզածի պէս գործածել է, հաւատարմութեան և վստահութեան դէմ մեծ յանցանք է, և ուրիշի ունեցածը գաղտնալուց աւելի ծանր ո-

ճիր.—հետևապէս բացի գողութիւնից՝ մատնութիւն է միանգամայն։

—Ընդգուշաբար բերանից գաղտնիք դուրս հանելը՝ շատ անգամ յաղթութիւն կորցնել ասել է։ Ընդհակառակը՝ ժամանակից առաջ ասած մի բառ միայն բիւրաւոր մարդկանց մահուան պատճառ է եղել և մեծահռչակ զօրապետների հռչակը կորցրել։

—Առանց մեծ հարկից ստիպուած մի յայտնիր քո զգուշալի գաղտնիքը ծառայի և մանաւանդ կանանց, որոնք կարող են դիւրութեամբ օրօտացրել, լռել չեն կարող, շուտ են արդդում և միշտ բաց բերան են. ուստի վաղ թէ ուշ կը յայտնեն այն, ինչ որ պէտք է ծածուկ պահել։

—Ով որ ամենի հետ խօսում է իր գործերի վրայ, տեսնում է, որ շատ անգամ վատ վերջաւորութիւն ունենում, ամեն կողմից նրա դէմ արգելքներ են ելնում, նոյն իսկ նրանցից, որոնց վրայ աւելի վստահ էր։ Մի խորհուրդ, որ ասւում է՝ շատ անգամ նոյն է՝ թէ ձախող էր։ Ամեն տեսակ գործերի և խորհուրդների մէջ յաջողելու լաւ եղանակը նրանց ծածուկ պահելն է, և այս է քաղաքական գիտութեան մոգական հրնարքը։

ԱՄԵՐԻԿԱՑՈՒ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆԸ

1. Բարեկիրթ եղէք.—բարեկիրթ մարդը կարող է առանց հարստութեան էլ իր ճանապարհը շարունակել. բոլոր դռները բացւում են իր առաջ և ամեն տեղ կարող է մտնել առանց դժուարութեան։

2. Ամենից բարձր տաղանդը վարուղութեան և սղմտութեան տեղը չի բռնում։ Կանանց արշաւի մէջ սղմտութիւնն է միայն, որ յաջողութեան դռները բաց է անում մարդու առաջ։

3. Դուք ինքներդ ձեզ յարգեցէք, և ձեր անձի վրայ վստահութիւն ունեցէք. ուրիշներին էլ վստահութիւն ներշնչելու լաւագոյն միջոցը միայն այս է։

4 «Աշխատիլ կամ մեռիլ»—այս է բնութեան նշանարանը։ Եթէ պարտքերդ աշխատեցուց, մտաւորապէս, բարոյապէս և նիւթապէս կմեռնիք։

5. Նկարագիր ունեցէք, յաջողութիւնը նկարագրից է ծնւում։

6. Ձշտութիւնը տափանքով սիրեցէք. մի կատարեալ գործ՝ քան կիսակատար գործից աւելի լաւ է։

7. Ձեր կեանքը ինչ որ անէք, այնպէս էլ կը լինի։ Աշխարհ՝ մեր տւածը վերադարձնում է մեզ։

8. Չեր անյաջողութիւններից օգուտներ վարժուեցէք:

9. Չկայ մի բան, որ հաստատամտութեան չափ օգտակար լինի: Հանճարն իսկ երբեմն վրանում է, խուսափում է և յոգնում, բայց հաստատամտութիւնը միշտ ապահով է, որ պիտի չհոգնի:

10 Աշխատեցէք կատարելագոյն առողջ լինել և շատ ապրել: Յաջողութեան առաջին պայմանն է մի «առաջնակարգ կենդանի» լինել:

11. Գործուկ եղէք, և ինչ գործ որ ունենաք, շուտ կատարեցէք:

ՀՈԶԱԿԱՒՈՐ ՓԱՐՈՁԻԶ ԲԻՉԸՐԻ ՆԱՄԱԿԸ

Ամերիկայի համբաւաւոր և բազմարդիւն քարոզիչ Մր. Բիչըր հետևեալ նամակը գրել է իր որդուն, երբ սա իր կեանքի մէջ առաջին անգամ անկախ ձեռնարկութիւն պիտի սկսէր:

Սիրելի զաւակս Հերբէրթ.

Հիմա առաջին անգամն է, որ իրապէս կեանքի մէջ պիտի նետուս առանձին: Մեկնում ես հօրդ տանից և բաժանւում բոլոր ազգականներից, որպէսզի քո գործը դու կատարես աշխար-

հի վրայ: Յարմար ժամանակ է հիմա, որ մի նոր կեանք սկսես և մի կողմ գցես այն թերութիւնները, որոնց վնասակարութեան փորձ առել ես և տեսնում այն տեսակ սովորութիւններ, որոնց չունենալուդ վնասները տեսել ես:

1. Պարտք մի անիր. պարտքից այնպէս խոչընդոտ, ինչպէս խորշում ես ստութիւնից: Հիմնական կանոն արա քեզ համար՝ մի բանի գինը վճարել ապա թէ ոչ, երբէք մի գնիր այն:

2. Շատ խոստումներ մի անիր. կրօնական ակնածութեամբ ամեն մի խոստումդ կատարիր: Այն մարդը, որ իր խոստումները կատարելու նպատակ ունի, չի կարող շատ խոստումներ անել:

3. Քո ամեն մի խօսքիդ ճշմարտութեանը հոգածութեամբ հոգ տար: Կատարեալ պարզութեամբ և ճշտութեամբ խօսիր. կարծիքով մի խօսիր: Կամ ոչ մի բան մի ասիր, կամ ուղիղ ճշմարտութիւնն ասա:

4. Երբ ուրիշների համար ես գործում, քո անձդ մոռացիր և նրանց օգուտը որոնէ: Փորձութեամբ, հաւատարմութեամբ և ամենայն ուղղութեամբ գործիր, այնպէս որ անհրաժեշտ նկատուես գործատէրերիդ գործին: Ընձեռաբերութիւնը կործանում է մարդուն:

5. Դու քեզ համար ունեցիր վարքի բարձրագոյն գաղափարականը, քան որ ուրիշներն են ակնկալում: Ընձիցդ աւելի բան պահանջիր, քան ուրիշներից: Բարձր բոնիր գաղափարականդ: Երբէք մի աշխատիր աչքիդ առջև արդարացնել անձդ: Երբէք մի խղճար անձիդ վրայ: Խիստ եղիր անձիդ, սակայն մեղմ եղիր ուրիշների վերաբերմամբ:

6. Այժմէն քո բոլոր գործիդ նկատմամբ: Ցարատևող, հաստատամիտ և անդրգելի եղիր:

7. Հարստանալու ճամբան է «բան չը վատնել»: Այս աշխարհում ամեն մի մտացի և աշխատասէր հրեատարդ կարող է հարստանալ, եթէ փակէ այն բոլոր ծակոտիքները, որտեղից դրամը գուրս է գալիս և եթէ չի չտապում հարստանալու: Մի չտապիր, համբերող եղիր:

8. Զհաղթութիւն մի անիր և բախտախաղ մի խաղար: Գոնաս մի այնպիսի եղիր, ուր ամեն ոք յուզման մէջ է գտնւում և աշխատում է մեծ հարստութիւն դիզել քիչ ժամանակի մէջ և այն առանց մեծ ջանք թափելու: Այդ տեսակ մարդիկ օճառի պղպջակ չինողներ են: Ցարատև և համբերատար աշխատութիւնը թէ ամենից ուղիղ և թէ ամենից ապահով ճամբան է յաջողութեան: Զգոհութիւնը և անապարանքը երկու գեւր են, որոնք ամեն տարի հազարաւորների են կործանում:

9. Գալով Մ. Գ... լին, հարաւային նահանգների բնակիչներից է նա և քեզ ընդունում է իմ սիրոյս համար: Չլինի թէ զղջալ տաս նրան քեզ ընդունելու ձամար:

10 Խնդրում եմ քեզ, որ ուղղես այս թերութիւնդ — այն է խոսիլ քննադատել ուրիշների: Ինչ պարագաներում էլ որ լինի, երբէք մի չարախօսիր մարդու վրայ: Բացակայ անձերի վրայ չուտափոյթ յանցանք գտնելը և խիստ քննադատութիւն անելը պատուաւոր բաներ չեն, կարելի է, որ ճիշտ չլինեն, չեն վայելում մարդասիրութեան. այս տեսակ բաներ՝ ուրիշներին թշնամացնում են քեզ, և վերջապէս վատ սովորութիւններ են:

11. Պէտք է յիշես, թէ Մ. Գ... ի մօտ չես գնում նրա ագարակի նման ագարակ կառավարել սովորելու համար: Մի քանի հարիւր և ոչ թէ հարիւր վաթսուն հազար արտավար հող պիտի լինի քո ապագայ կալւածդ: Սակայն կարող ես սովորել արջառ ու սլշար բուծանել և ցորեն մշակել. կարող ես ուսումնասիրել կլիմայի փոփոխութիւնները, հողը, մարդկանց չարժումները

և ողորմութիւնները և ուրիշ հարիւրաւոր կարեւոր բաներ։

12. Եթէ ուղղութեամբ, աշխատասիրութեամբ և պատուոյ յաջողութեամբ արժանանաս քաղաքացիներիդ համակրութեանը, թերևս նրանք ապագայ ատրիների մէջ քեզ պատուոյ պաշտօններ տան. հետամուտ մի լինիր, մի ընդունիր դրանք, երբ դեռ փոքր ես, սպասիր։ Սակայն երբ հասատատուես մի բարձր պաշտօնի մէջ, կարող ես հօրդ անունը պատուով ճանաչեցնել Խորհրդարանի օրմերի մէջ։ Վերջապէս մի մոռանար հօրդ և մօրդ Ատուածը։ Որովհետև սրանից յետոյ պիտի վրիպես եկեղեցական շատ տառապանքներից, մեծ ոյժ պիտի ունենաս սիրտդ Ատծուն նուիրած պահելու համար, սակայն մի արհամարհիր փոքր եկեղեցիները և խոնարհ դասի քարոզիչները։ «Ամբարտաւանութիւն մի անէք, ապա խոնարհների հետ խոնարհեցէք»։— ասում է Առաքեալը։

Ճանապարհ կարդա Առակների գլուխը և Նոր Կտակարանի պատուէրներն ու պարտաւորութիւնները, հօրդ Ատուածք հետդ լինի և պաշտպանէ քեզ։

Ս. վ. Սահակեան

Ա. Ի. ԿՈՒՊՐԻՆ

ԴԵՄԻՐ-ՂԱՅԵԱ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԳԵՆԴ

ՔԱՄԻՆ զգաստել էր։ Գուցէ այսօր մենք ստիպուած լինինք գիշերելու ծովի վրայ։ Մինչև ափը 30 վերստ է։ Երկայնաձիգ նաւը ծուլարար օրօրւում է երկու կողքի վրայ։ Խոնաւ առագաստները ցած են ընկած։

Սպիտակ մառախուղը ատտիկ չէր ջարդատել էր նաւը։ Չեն երևում ոչ ատտիկ, ոչ երկինք, ոչ ծով և ոչ գիշեր։ Մենք ճրագ էլ չենք վառում։

Սէյիդ-Օղլին, նաւի այդ ծեր, կեղտոտ և բոկոտն կապիտանը մեզ, ծանր և խորունկ ձայնով պատմում է մի հին պատմութիւն, որին ես հաւատում եմ ամբողջ սրտով։ Հաւատում եմ, որովհետև գիշերը այդպէս տարօրինակ կերպով լաւ է, որովհետև մեր նեղքևում ննջում է անհանգիստ ծովը, և մենք մառախուղով պատած հանգարտ լողում ենք ոպիտակ, թանձր ամպերի մէջ։

Նրան կոչում էին Դեմիր-Ղայիա: Ձեր լեզուով այդ նշանակում է երկաթէ ժայռ: Այդպէս էին կոչում նրան, որովհետև այդ մարդը ոչ կարկտութիւն գիտէը, ոչ ամօթ և ոչ երկիւղ:

Նա իր խմբով աւազակութիւն էր անում Սամսունի շրջակայքում, և պանծալի Թեսսալիայում, և լեռնոտ Մակեդոնիայում, և բուլղարական արգաւանդ արօտներում: Ինչսուն և ինն մարդ է ընկել նրա ձեռքից, նրանց թւում կային և կանայք, և ծերունիներ և մանուկներ:

Բայց ահա մի անգամ, լեռներում նրան շրջապատեց Փադիշահի հզօր զօրքը—թող երկարացնի Ալլահը նրա օրերը: Երեք օր շարունակ յետ էր մղում Դեմիր-Ղայեան ինչպէս գայլը շների վոհմակից: Չորրորդ օրւայ առաւօտեան նա թշնամու շարքերը ճեղքելով անցաւ, բայց—մենակ: Նրա ընկերների մի մասը ընկել էր կատաղի կռւի ժամանակ, միւսներն էլ մահ էին ընդունել դահճի ձեռքից Սամսունում, կլոր հրապարակի վրայ:

Վիրաւոր, արիւնաքամ եղած Դեմիր-Ղայեան ընկած էր անմերձենալի քարայրում, խարոյկի մօտ, ուր նրան հիւրընկալել էին լեռնային վայրենի հովիւները: Եւ ահա գիշերւայ կէսին նրան երեաց լուսաւոր հրեշտակը բռնաւատած սուրը

ձեռքին: Գանչեց Դեմիր-Ղայեան մահուան համբաւաբերին, երկնքի ներսեան Ազրայիլին և ասաց.

—Թող լինի Ալլահի կամքը: Ես պատրաստ եմ:

Բայց հրեշտակն ասաց.

—Ոչ, Դեմիր Ղայիա, քո ժամը դեռ չի հասել: Հոխր Ստամբոյ կամքը: Երբ դու վեր կենաս մահուան մահճից, գնա, հանիր գետնից քո բոլոր գանձերը և ոսկի դարձրու: Ցետոյ դու կը գնաս ուղիղ դէպի արեւելք և կգնաս մինչ այն ժամանակ, մինչև կհասնես այն տեղին, ուր միանում են երեք ճանապարհները: Այնտեղ դու մի տուն կշինես, ուր լինեն հոյասուն սենեակներ, լայն ու փափուկ բազմոցներ, շատրուաններով մէջ լուացուելու համար մարդու ջուր, ուտելիք և խմելիք օտարականների համար, հոտաւէտ սուրճ և անուշարոյր նարդիլէ յոգնածների համար: Գանչիր քեզ մօտ բոլորին, ով կզայ ու կանցնի քո տան մօտով և ծառայիր նրանց—ինչպէս վերջին սարուկ: Թող քո տունը լինի նրանց տունը, քո ոսկին—նրանց ոսկին, քո աշխատանքը—նրանց հանգստութիւնը: Եւ գիտցիր, որ կը գայ ժամանակ, երբ Ալլահը կմոռանայ քո ծանր մեղքերը և կնորհի քեզ իր որդիների արիւնը:

Բայց Դեմիր-Ղայեան չարացաւ.

—Ապա ինչպիսի նշան կտայ ինձ Ստամբ,

որ իմ մեղքերը ներուած են արդէն:

Հրեշտակը պատասխանեց.

—Քեզ մօտ այրուղ խարոյկից վերցրու մի մոխրով պատած խանձող և կիր հողի մէջ: Եւ երբ մեռած փայտը կեղև կհագնի, ոսաեր կարձակի և կծաղկի, ապա գիտցիր, որ հասել է քո փրկութեան ժամը:

Անցաւ այդ օրից քսան տարի: Փոդիշահի ամրոցի երկրում—Թող Ալլահը երկարացնի նրա օրերը—Զգրից Զմիւռնիա տանող ճանապարհի վրայ գտնուղ հօթ ուղիների մօտ եղած հիւրանոցի փառքն էր պատում: Ընդհատը դուրս էր գալիս այնտեղից ճանապարհորդական պայուսակը լի ոսկեհաներով, քաղցածը—կուշտ, յոգնածը—առոյգ, վիրաւորը—առողջացած:

Քսան տարի, քսան երկար տարիներ նայում էր Դեմիր Ղայեան ամեն գիշեր փայտի հրաշալի կոճղին, որ մեխուած էր բակի մէջ, բայց նա մրնացել էր սև և մեռած: Դեմիր Ղարտալի արծաթին աչքերը լաւարձել էին, նրա հզօր մէջքը կորացել և գլխի մազերը ձիրմակել էին որպէս հրեշտակի թևեր:

Բայց ահա մի անգամ վաղ առաւօտեան, նա լսեց ձիու սմբերի դոփիւն, դուրս վազից և տեսաւ, որ մի ձիաւոր արշաւում է քարի ու քրտինքի մէջ կորած: Եաայ անցաւ Դեմիր Ղայեան, բռնեց ձիու սանձը և խնդրեց հեծեալին սպասել.

—Օ՛, եղբայր իմ, եկ ինձ մօտ, իմ տունը, թարմացրու քո երեսը ջրով, կպգուրիր քեզ ուտելիքով ու խմելիքով և քաղցրացրու քո շրթունքները նարգիլէի անուշահոտութեամբ:

Բայց ճանապարհորդը պատրաստ գոչեց.

—Թող ինձ ծերուկ, թող:

Եւ Թքեց նա Դեմիր-Ղայեայի երեսին, մարակի կոթով խփեց նրա գլխին ու առաջ անցաւ:

Դեմիր Ղայեայի մէջ բորբոքեց աւազակային հպարտ արիւնը: Բարձրացրեց գետնից ծանր քարը և ուժգնութեամբ չպրտեց վիրաւորողի ետքից ու չսխալեցաւ նրա գանգը: Ձիաւորը օդօրինակ թամբի վրայ, բռնեց գլուխը և ընկաւ ճանապարհի փոշիների մէջ: Ծարաւփշոտը վազեց դէպի նա Դեմիր-Ղայեան և ասաց վշտագին.

—Եղբայր իմ, ես սպանեցի քեզ:

Սակայն մեռնողը պատասխանեց.

—Ոչ թէ դու սպանեցիր ինձ, այլ Ալլահի ձեռքը: Լսիր: Մեր վիլայէթի փաշան դաժան, ագահ և անարդար մի մարդ է: Իմ ընկերները դաւադրութիւն կազմեցին նրա դէմ: Բայց ես հրապուրեցի դրամական հարուստ պարգևներով: Ես կամենում էի մատնել նրանց: Եւ ահա երբ ես

չառաւում էի իրագործելու իմ մտադրութիւնը, ինձ կանդնեցրեց քո արձակած քարը. Այդպէս է կամենում Աստուած։ Մնաս բարեաւ։

Ձշտարեկ Դեմիր-Ղայիան վերադարձաւ տուն։

Տարշանքի և առաքինութեան անդուլքը, որի վրայով նա այնպէս համբերութեամբ ամրողջ քսան տարի դէպի վեր էր բարձրացել, խորտակուից ու փլուց նրա տակ մի կարճ ակնթարթում։

Յուսահատութեան մէջ նա հայեացքը դարձրեց դէպի այն կողմը, ուր նա սովոր էր ամեն օր կանգ առնել — սև ածխացած լանձողի վրայ։ Եւ չանկարծ — օ՜, հրաշք. — նա տեսնում է, որ իր աչքերի առաջ մեռած ծառը ոտիր է արձակում, ծածկւում է կոկոններով, հագնւում է առաւոտեայ սպարթով և ծաղկում բնքոյշ, դեղին ծաղիկներով։

Այդ ժամանակ Դեմիր Ղայիան ծնկաչոք ընկաւ և ուրախութիւնից արտասուեց։ Որովհետև նա հասկացաւ, որ մեծ և ամենազօրմած Ալլահը իր անսահման գերիմաստութեամբ ներեց նրա յիմնաւն և ինն խորտակած կեանքը՝ մի մանկիչի մահուան համար։

Վլաֆ

Տ. Տ. ԴԻՕՐԴ Ս.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՅՈՒԲԵԼԵԱՆՆԵՐ

ՀԱՑ ԱՍՈՒՆՐԻ ԳԻՒՂԻ 1500-ԱՄԵԱԿԸ

ԸՂԳԵՐի պատմութեան մէջ գրի սկզբնաւորութիւնը սովորաբար վերագրում են աստուածներին կամ թէ այնպիսի մարդկանց, որոնք յարաբերութիւն ունէին աստուածների հետ, որովհետև այդպիսի մի հրաշալի սահմանագործութիւնը միմիայն աստուածների գործ կարող էր համարուել։ Օրինակ՝ հիպատական աւանդութիւնը գրի սկզբնաւորութիւնը վերագրում է «Տաւրոս»-ին, որ միևնոյն ժամանակ լիպի և խօսքի աստուածն էր, զարգացրեց աստղագիտութեան, երաժշտութեան արուեստները և գաւազանին։ Բարելական աւանդութիւնը գրի ստեղծագործութիւնն ընծայում է «Օաննէս»-ին, որ մի էակ էր՝ կէսը մարդ, կէսը ձուկ։ Ըստ չինական աւանդութեան՝ նրանց գիրը գաւազանից։ մեքսիկացիները իրենց գրի գիւտը վերագրում են «կեցոալկօատլ» աստծուն։ Իրանական աւանդու-

թիւնը գրի սկզբնաւորութիւնը վերագրում է «Ցահմուրաթ» արքային, որին յաջողւեց գիրը դևերի ձեռքից կորզել, սրովհետև թէև բոլոր գիներն արդէն վաղուց գիտէին գիրը, սակայն դևերի ձեռքն ընկնելով՝ անյայտ էր մնացել մինչև «Ցահմուրաթի» ժամանակը։ Ցունաց գրի գտնողն է հանդիսանում «Կադմոսը», որ Փիւնիկիայից է գալիս։ Դոթական գրի գիւտը գերմանական աւանդութիւնը վերագրում է «Ուլֆիլասին», թէև յայտնի է, որ Ուլֆիլասը ոչ թէ նոր գտաւ գոթական տառերը, այլ հին գերմանական «runեէ» կոչած նշանները կատարելագործեց՝ պակասը լրացնելով և յունական այբուբենին մօտեցնելով։

Այս աւանդութիւններից էլ երևում է, որ գրի ստեղծագործութիւնը մի անհատի գործ չէ. մարդկութիւնը շատ փորձերից յետոյ միայն մի կարողացաւ ձեռք բերել այն ինչ որ այսօր մեզ համար սովորական է դարձել։

Մանաւորելով մեր խօսքը հայ գրի մասին, պէտք է ասենք, որ միևնոյն երևոյթն է կրկնւում։ Մեր պատմութեան մէջ անթափանցելի քօղով է ծածկւած հայոց գրի զարգացման ընթացքը մեզ անյայտ է թէ՝ ե՞րբ սկսեցին հայերը սեփական գիր գործածել և ե՞րբ պատրեցին։ Միայն այն-

չափ կարելի է եզրակացնել, որ ունեցել ենք սեփական տառագիր, սակայն այս գիրը չօրըօրդ դարի վերջերին գործածութեան մէջ չլինելով՝ բոլորովին մոռացել էր։ Ըստ մեր ազգային աւանդութեան հայոց այբուբենն էլ գտնւում է հրաշքով. «ոչ քնած ժամանակ և ոչ էլ արթուն»։

Քրիստոնէութիւնը մուտ գործելով Հայաստան, իր հետ միասին ներմուծեց նաև յունական և ասորական գիրը և հալածեց տեղական գիրը, որ ամուր կապերով չղթայած էր կռապաշտութեան հետ։ Համարեա պատմական օրէնք է, որ իւրաքանչիւր նոր կրօնի հետ ազգերն էլ ընդունել են նաև նոր գիր. փիւնիկեցոց այբուբենը տարածեց Ցունաստանում Փիւնիկիայից բերած մի կրօնի հետ, իսլամութիւնը տարածեց ամեն տեղ արաբական «նեսխի» կոչած գիրը. հռովմէական գիրը տարածուեց արևմտեան եւրոպայում սր. գրքի հետ, ինչպէս նաև «դեւանագարի» և «պալի» կոչած գրերը Հնդկաստանում։

Սակայն յունաց և ասորոց գրերի տիրապետութիւնը երկար չէը կարող տևել Հայաստանում, որովհետև քրիստոնեայ եկեղեցու հռանդուն պաշտօնեաները չբաւականացով ազգային կրօնի ոչնչացմամբ՝ ձգտում էին նաև ազգային լեզուն խախտել՝ եկեղեցու պաշտամունքը յունարէն և

ասորերէն լեզուով կատարելով։ Ոգին ըմբռնեց այդ դրութեան վտանգաւոր լինելը և դրա առաջն առնելն իր կենսական խնդիրը դարձնելով՝ ամեն կերպ աշխատեց վերականգնել ազգային գիրը, լեզուն և զրականութիւնը։ Այս գաղափարով առաջնորդուած հայ սերնդի մեծ ներկայացուցիչներն էին Սահակ Պարթեւ և Մեսրոպ Մաշտոց։

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Սահակ Պարթեւ

Սուրբ Գրիգոր Լուսաւորչից սկսած ժառանգաբար կաթողիկոսութիւն էին անում նրա որդիները։ Այսպէս Լուսաւորչի վերջին շառաւիղը եղաւ Ս. Սահակը, որը Մեծն Ներսիսի որդին էր։ Սա Բիւզանդիայի մէջ ուսել էր հելլենական գրաւութիւնը։ Ջատ խելօք, առաքինի, բարեպաշտ, իր հօր նման հայրենեաց ցաւը զգացող և ուսման լոյսի տարածման համար խորհող ու աշխատող մարդ էր։ Սա զգում էր հայոց տառերի բացակայութիւնը և մտածում էր նրանց գտնելու մասին։

Էսկ Մեսրոպը Տարօն գաւառի Հացեկաց գիւղից՝ Վարդան անունով մի բարեպաշտ մարդու որդի էր, որը աշակերտել էր Մեծն Ներսիսին և իր բարի ուսուցչի պէս լաւ վարժուած էր նաև դիւանական արհեստի մէջ։ Սա չատ լաւ գիտէր Յունաց, Ասորոց և Պարսից լեզուները ու ամեն գործում չատ բնդունակ և աշխատասէր էր։ Ներսէսի կաթողիկոսութեան ժամանակ Մեսրոպը նօտար էր (գրագիր) հայրապետական գործերի, իսկ նրա մեռնելուց յետոյ՝ մաւր արքունի դիւանին առենապիր և մնաց մօտ եօթը տարի։

Երբ Սահակ Պարթև կաթողիկոս է դառնում, Մեսրոպն էլ թողնելով իր ազատ ու երջանիկ կեանքը՝ դառնում է վարդապետ։ Սա էլ Սահակի պէս մտածում է հանրէն գրեր գտնելու մասին։ Ուստի վարդապետ դառնալով թողնում է նօտակեաց կեանքը և անցնում Դուինան և Սիւնեաց գաւառները ու սկսում տառածային ուսումն ուսուցանել այն տեղերի վայրենաբարոյ

ժողովրդին։ Ս. Մեսրոպը տեսնելով, որ հայերէն տառեր չլինելու պատճառով մեծ դժուարութիւն է լինում, յայտնում է Ս. Սահակին ու այս բանին մի ճար անելու համար խորհրդակցում են ուսումնասէր Վռամշապուհ թագաւորի ու ուսումնական մարդկանց հետ, և այս մասին ժողով կազմում Վաղարշապատ մայրաքաղաքում։

Ժողովի մէջ թագաւորը ասում է, որ ինքը լսել է. թէ Դանիէլ անունով մի ասորի եպիսկոպոսի մօտ կան հայերէն նշանագրեր*), ուստի հարկ է համարում մի բանիրուն մարդ ուղարկել և խնդրել այդ նշանագրերը։ Ժողովն էլ տեսնելով, որ նպատակայարմար է, իր կողմից խնդրում է թագաւորին չուտով մարդ ուղարկել։

*) Թէ ինչ ժամանակներ, այն է՝ Քրիստոսից առաջ եղել են հայոց գրեր, հիշ է, բայց թէ ինչի հնչիւն, այդ ոչոչ չէ։ Բայց շատերն են ասում, որ Ագաթանգեղոսը, որը Տրդատի Արուեհիրում պատմեալ էր, գրել է Տրդատի եւ Գրիգոր Լուսաւորչի համառօտ պատմութիւնները.— «Ագաթանգեղոս» վերատուութեամբ հայերէն եւ յունարէն լեզուներով։ Սրանից Ս. Սահակից ու Մեսրոպից մօտաւորապէս մի դար (100 տարի) առաջ են եղել։

Վռամշապուհ, որ Ս. Սահակից ու Մեսրոպից պակաս չէր ցանկանում սեփական տառեր ունենալը, իր իմաստուն խելացի իշխաններից Վահրիճ անուն մէկին որոշում է, որը թագաւորից և եպիսկոպոսներից յանձնարարական նամակներ ստանալով՝ գնում է նախ Միջագետք ու այնտեղից էլ հարկ անուն ուսումնական քահանայի հետ միասին գնում են Դանիէլ եպիսկոպոսի մօտ։

Սա էլ հայոց այդ հին նշանագրերը, որը իր մօտ էր և թուով 33 հատ էին, տալիս է նրանց, որոնք այդտեղ հնչմունքները սովորելուց յետոյ վերադառնում են Հայաստան ու նոր կայացնում թագաւորին։

Վերջիններս տառերը, թագաւորի խորհրդով շատ մանուկներ են ժողովում և սկսում ուսուցանել բերած գրերով։

Երկու ամբողջ տարի անընդհատ աշխատելին սովորեցնելու, բայց աշխատանքները զուր անցան՝ տառերի թերութիւնների պատճառով։

Ս. Մեսրոպ փորձով տեսնելով, որ այդ չի յաջողւում, ինքը անձամբ գնաց Միջագետք Դանիէլ եպիսկոպոսի մօտ, յուսալով՝ որ պակասը կարող է գտնել կամ լրացնել։ Բայց այնտեղ էլ բուռական ժամանակ մնալով, տեսաւ որ ապաւած

օգուտը չստացաւ, իր աւագագոյն աշակերտները՝ Յովհան Եկեղեցացի և Յովսէփ Պաղնացին հետ առած ուղեւորեց եղեսիա քաղաքը՝ Պատուն ա նունով հանճարեղ մարդու մօտ:

Պատուն Մեսրոպի հետ երկար խորհրդակցելուց յետոյ տեսնելով՝ որ իր կարողութիւնից վեր է, խորհուրդ է տալիս նրան գնալ Փիւնիկէ իր վարժապետ եպիփանոսի մօտ:

Մեսրոպը յանձնարարական նամակներ բռնանալով Պատունից ու Ռաբիւլա կամ Բարիւլա անուն եպիսկոպոսից՝ գնում է Փիւնակէ և տես նում, որ եպիփանոս արդէն վախճանել է: Նա առանց յուսահատելու դիմում է Սամոսացոց քաղաքը, ուր մեծ գիտնականի հռչակ էր վայելում եպիփանոսի աշակերտ Յոյն Հռոփանոսը:

Այդ տեղն էլ անօգուտ է գտնում: Ուստի Մեսրոպ մարդկային հնարագիտութիւնից յոյսը կտրած, ապաւինում է Աստուծոյ զօրութեանը:

Մեր նախնիք պատմում են, որ Մեսրոպ առանց մի այլ բանի վրայ մտածելու՝ միշտ աղօթում էր առանձնացած ու Աստուածանից օգնութիւն խնդրում: Այդ մտածման միջոցին ոչ նրա աչքերը տեսնում և ոչ ականջները լսում էին: Նա ոչ արթուն էր և ոչ քնած, ու ահա այդ գըրութեան մէջ տեսնում է իր առաջ մի քար, որի

վրայ մի աներևոյթ մարդու թաթ գրում է եօթ ձայնաւոր տառերը:

Այսպէս Աստուծոյ ապղեցութեամբ տառերի ձևերը ապաւորւում են Ս. Մեսրոպի սրտում և անչափ ուրախացած պատմում է Հռոփանոսին պատմում, վերջինս էլ գրի առնելով գեղեցիկ ձևերի է դարձնում:

Մեսրոպ Մաշտոց

Քիչ ժամանակից Մեսրոպ տեսնելով տառերի գրելիս բոլորովին պատրաստ լինելը, թարգմանում է Ս. Գրքից առակաց գիրքը և տեսնելով, որ կատարեալ յօդուտած է, անաչման ուրախութեամբ շտապում է Հայաստան:

Երբ Ս. Սահակը և Թագաւորը լսում են տառերի գտնելը ու Մեսրոպի գալը, մեծ բազմութեամբ գնում են ընդ առաջ և Ոտն գետի ափին պատուով ընդունում և բերում Վաղարշապատ:

Այնուհետև Թագաւորը հրաման է տալիս Ս.

Սահակի միջնորդութեամբ ուսումնարաններ հիմնել, մանուկները ժողովել ու սկսել ուսուցումն զուտ հայկական ոգիով։

Մեսրոպ Թագաւորից ու հայրապետից հրաման առնելով անցնում է Մարաստան, Դուքին և Ջարիթ իշխանի ձեռնաւորութեամբ սկսում է քարոզել և ժողովրդեան։ Դուքինից էլ անցնում է Սիւնեաց աշխարհը, ուր լաւ օգնականին են հասցնում նրան Սիսակեան Վասակ և Վաղինակ իշխանները։ Քիչ ժամանակից յետոյ այդտեղից դնում է Վրաստան, ներկայանում է Վրաց Բակուր Թագաւորին և Մովսէս եպիսկոպոսին, որոնք մեծ պատուով ընդունում են և նրանց համար էլ տառեր գտնելու։

Ս. Մեսրոպ այդտեղ Վրաց համար էլ տառեր հնարելուց և նրանց համար կարգաւորելուց յետոյ վերադառնում է Հայաստան և սկսում դանադան կողմերում քարոզել և ուսուցանել։

Վերջապէս, այդ երրորդութիւնը—Թագաւորը, Ս. Սահակ հայրապետը և Մեսրոպը ձեռք ձեռքի տուած բազմաթիւ ուսումնարաններ բացին ու վերջին երկուսը գրել կարդալը սովորեցրին։ եկեղեցական գրքերը, որ մինչ այդ ժամանակ յունարէն ու ասորերէն էին, Թարգմանեցին հայերէն, սկսեցին հայ եկեղեցիներում

հայերէն երգել և հայերէն կարդալ։

Ժողովուրդը, որ մինչև այդ միջոցը եկեղեցի գնալով բան չէր հասկանում, այնուհետև հասկացաւ և շատ ուրախացաւ։

Բացի այդ աշխատութիւններից Ս. Սահակը մեր լեզուով շատ շարականներ գրեց և յօրինեց շարականների ութը ձայն՝ քաղցրանշիւն եղանակները, որոնք այսօր էլ երգւում են մեր հայ եկեղեցիներում։

Ս. Սահակը և Մեսրոպը իրենց աւելի յառաջադէմ աշակերտների հետ Թարգմանեցին բացի ս. գրքից նաև ուրիշ շատ օգտաւէտ գրքեր։

Սրանք իրենց յառաջադէմ աշակերտներին ուղարկում էին այն ժամանակւայ մեծ և լուսաւորւած քաղաքները, որպիսիք են Կ. Պոլիս, Աղէքսանդրիա, Ատտիկէ և Օթէնք, ուր հռչակաւոր պլրոցներն էին և այնտեղ մօտ եօթ տարի մնում էին, լաւ սովորում Հայաստանի ուսումնածաւալ դասակները, վերադառնում իրենց քաղցր հայրենիքը, գառնում քահանայ, վարդապետ, եպիսկոպոս և սկսում լուսաւորել ու պայծառացնել մեր աշխարհը։

Սրանք հայերէն գրերով նոր գրքեր էին գրում, Թարգմանում էին զանազան ընտիր գրուածքներ քարոզում ու սովորեցնում—լուսաւորում է-

ին ժողովրդին Սրանք բոլորը մեր հարազատ, երանելի և իմաստուն վարդապետներն են, որ եղան մեր Հայ եկեղեցու փառքը և վայելչութիւնը, հայ ազգի պարծանքի պսակը, մեր գրականութեան և լեզւի օրէնսդիրները և հարստացողները, այնպէս որ սրանցով այդ հինգերորդ դարը կոչեցաւ Հայոց գրականութեան ոսկեդէզ դար։ Սրանք երևացին ինչպէս լուսապայծառ աստղեր այնպիսի ժամանակում, երբ կառավարութեան և կրակապաշտութեան խաւարը պատել էր մեր աշխարհը Պարսից բռնակալութիւնից։ Ոչ մի ժամանակ մեր աշխարհը այնքան առաջ չէր գնացել ու լուսաւորւել, որքան այդ ժամանակ։

Ս. Սահակի մեռնելուց յետոյ ազգի հատնութեամբ կաթողիկոս եղաւ Մեսրոպ, որը միայն վեց ամիս վարեց հայրապետութիւնը։

Ս. Սահակ և Մեսրոպ կոչեցին թարգմանիչներ, Ս. Գիրքը և այլ գրքեր թարգմանելու համար։

Մեսրոպ կոչւեց նաև Մաշտոց, որովհետև նա յօրինեց ու կարգաւորեց եկեղեցական «Մաշտոց» կոչւող Ծիսարան գիրքը։

Սր. Մեսրոպ վախճանւեց Վաղարշապատում, մեհեկան ամսի 13-ին. մեհեկանը համապատասխանում է փետրուար ամսին, ուրեմն 439 թւի փետրուարին։

Սուրբ վարդապետի աշխարհային մնացորդները ամփոփելու համար վէմ է ծագում. ոմանք ուզում են նրա նշխարները թաղել իր բնագաւառ Տարօնում, ոմանք Դուինն գաւառում, ուր նա քարոզել էր առաջին անգամ, ոմանք էլ ուզում են Վաղարշապատում թաղել. բայց յաղթող է հանդիսանում հայոց աշխարհի հազարապետ Վահան Ամատունին, որ սրբի մարմինը չքիզ հանդիսաւորութեամբ առնում է իր սեփական Օշական գիւղը և այնտեղ հողին յանձնում։

Թէ որչափ առաքինի և սուրբ մարդու հրաշակ էր վայելում ս. Մեսրոպն իր ժամանակակիցների մէջ, պարզ երևում է Մովսէս Խորենացու այն վկայութիւնից՝ թէ աղօտ խաչի նշանով լոյս շողաց այն տան վրայ, ուր երանելին հոգին աւանդեց և Օշականի ճանապարհին լուսոյ այդ շողքը շարունակ գազաղի վրայ էր, մինչև զնրեղման իջեցնելը։

Օշական գիւղը, ուր ամփոփւեցաւ ս. Մեսրոպի մարմինը, գանւում է ս. Էջմիածնից դէպի հիւսիս, մօտ երկու ժամ հեռաւորութեամբ Վաղարշապատից. այժմ այդ գիւղը Մայր Աթոռի սեփական կալւածական գիւղերից մէկն է և մօտ

300 տուն բնակիչ ունի։ Ս. Մեսրոպի գերեզմանի վրայ արդէն Վահան Ամատունին մի հոյակապ եկեղեցի էր կառուցել, որ 1639 թուին Նորոզեց Փիլիպպոս կաթողիկոսը։ Իսկ այժմեան փառահեղ սրբատաշ քարից չինած տաճարը կառուցեց երջանկայիշատակ Գէորգ Դ. կաթողիկոսը՝ Ռուսաստանի հայոց նէրներով, 1879 թ։ Եկեղեցու սեղանի վէմ քարի տակ գտնուղ այրի մէջ է ամփոփուած Ս. Մեսրոպի, մեր ազգային գրի ու գրականութեան հիմնադրի խնկելի ճակիւը։

Տասն և հինգ դար շարունակ արքան արցունք է թափել այդ սուրբ հողակոյտի վրայ, արքան սիրտ յուզել, արքան ծունկ չոքել և արքան չրխնդներ են չփել այդ՝ ամրողջ հայութեան հետ անքակտելի կերպով կապուած անմոռանալի շիրմին։ Որքան տարբեր պատմութեան տարաձայնութիւններ են եղել այդ սրբ տնկողը նայելով թէ ո՞ր դարում և ինչ ժամանակ են ցօղել դրանք սրբի դամբարանը. կայ սրցունք ուրախութեան և ցնծութեան, կայ և վշտի ու թշուառութեան։

Ս. Սահակի և Մեսրոպի անուններէր հինգերորդ դարի սկզրից մինչև մեր օրերը անրաժանելի են հայ գրականութիւնից և դարձել անրաժան կմնայ, մինչև որ վերջին հայն կայերէն «ախ» ով կփչէ իր վերջին շունչը։

ՀԱՑ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
400-ԱՄԵԱԿ
(1512—1912)

ՔՐԻՍՏՈՍԻՑ չորս դար առաջ, յունական մի պօրասիա, պատերազմի սկզրում կամեցաւ ներշնչել իր զօրքերին, թէ յաղթող կողմը անպատճառ իրենք են լինելու։ Այս նպատակով նա պիտից մի խորամանկ միջոցի։ Զօրապետը հրամայեց մօրթել մի եզ. երբ արդէն կենդանու փորը պատռել էին, զօրապետը իր ձախ ձեռքը դնելով գոհի լեանդի վրայ, միւս ձեռքով բարձրացրեց լեարդը տպա ձախ ձեռքը լեարդի վրայից վեր դնելով հրամայեց զինուորներին կարդալ, թէ ինչ էր գրած լեարդի վրայ։ Ո՜հ, զարմանք, լեարդի վրայ դրոշմած էր յաղթութիւն բառը։ Ինչ ասել կուզի, որ այդ բառը տատաձաններն էին դրոշմել լեարդի վրայ, երբ դեռ կենդանին արածում էր մարգագետնում։ Չատատով ներշնչուած զօրքը յարձակուեց թշնամու վրայ և լիակատար յաղթութիւն տարաւ։

Սակայն, ընթերցող, այսպէս տատաձաններր ոչ մի գործ չունէին. խորամանկ զօրապետը նա խապսիս իր ձախ ձեռքի ներքին կողմում ներկով գրել էր յաղթութիւն բառը, միայն թէ տառերը

թաթս էր չարել. և ահա այդ գրած բառը գրօշմել էր լեարդի վրայ։ Այդ լեարդը ապագրական առաջին երկն էր ուրեմն։

Հին ազգերը ունէին արձաթեայ ու ոսկեայ դրամներ, որոշ կրօշմով ու տառերով. այդ բանը ցոյց է տալիս, որ նրանք հասկացողութիւն ունէին այն մասին, թէ ինչպէս կարելի է երեսմանց միջոցով փոխադրել նկարները ու տառերը մի կաւծր նիւթից մի ուրիշ փափուկ նիւթի վրայ։

Եւրոպական թանգարաններում շատ կան հին դարերից մնացած անագապղնձի կնիքներ։

Մօտաւորապէս 1300 թուին կերմանացիք առևտրականները իտալացիներից ու իսպանացիներից իմացան խաղաթուղթը և խաղաթուղթը անուանեցին «սատանայի մատեան»։ Խաղաթուղթը սկզբնական պատրաստում էին ձեռքով, այսինքն մի տամի նկարում էին բոլոր թղթերը։ Բայց երբ պահանջը աճեց, սկսեցին խաղաթուղթ պատրաստել տաճարէի (կաղապարի) միջոցով. մի թիթեղի վրայ կտրում էին հարկաւոր նկարը, գնում էին այդ ծակծկած թիթեղը մի կտոր մածուր թղթի վրայ և թիթեղի երեսին նիրկ էին քսում։ Երբ թիթեղը (ստաֆարէտը) վերցնում էին թղթի

վրայից, գտնում էին, որ իրենց ցանկացած նկարը սատարել էր մաքուր թղթի վրայ, այսպէս մէկիկ մէկիկ պատրաստում էին բոլոր թղթերը։ Ի հարկէ, այս ձևն էլ շատ չէ արագացնում գործը, բայց սակի հնշտ է, քան թէ իրաքանչիւրի առանձին ապագրելը։

Փորը առ փորը ըմբռնեցին, որ կարելի է խաղաթուղթի նկարը քանդակել մի կատ տախտակի վրայ և սրանից սատանայ բազմաթիւ ապատ թղթեր։

Տալու այդ ձևերից օգտւում էին և արուհատգործութեան ուրիշ ասպարէզներում։ Տանհերկրսրդ դարում, Իսպանիայում, մետաքսեղէն ու քաթանեղէն գործածքները զարդարում էին գունաւոր նկարներով յիշեալ միջոցով։ Սակի ուշ նոյն միջոցը գործադրեցին գործեր պատրաստները. գործերի վրայ կարս էին բերում գանազան տեսարաններ աստւածաշնչից վերցրած և առասպելական նիւթեր։

Մարդիկ հասկանում էին, թէ ինչպէս պէտք է տպել, բայց չէին հասկանում, թէ ինչպէս պիտի տպագրել։ Գարերի ընթացքում գոյութիւն էր ունեցել տպելու արհեստ, բայց ոչ բուն տպագրութիւնը։

Տպելու արհեստից տպագրական արւեստ ստեղծելու համար անհրաժեշտ էր մի նոր համակարգային հանճար։ Մարդու մտից ու ոսկրից կառուցած էր եւայի մարմինը, բայց որպէսզի մի կենդանի կին ստացւէր, աստւածային շունչ էր հարկաւոր։ Վերջապէս այդ հանճարը յայտնւեց, այն էլ ճիշտ այն ժամանակ, երբ ամբողջ կուլտուրական աշխարհը հոգեկան ծարաւից տառապելով որոնում ու սպասում էր նրան։ Այս էակը Յովհաննէս Գուտենբերգն էր։

Ց. Գուտենբերգ

Յով. Գուտենբերգը ծնւել է Մայնց քաղաքում 1386 թւին։ Նրա մանկութեան ու ծնողների մասին ոչինչ տեղեկութիւն չկայ։ Յովհաննէսի 20 տարին լրացել էր, երբ քաղաքում ընդհարում ծագեց պատւականների և արհեստաւորների մէջ և նրանց տեղափոխեցին Սարասբուրգ։

Իր հնարագիտական տաղանդը ցոյց տւեց Յովհաննէս ոչ տւելի վաղ, քան քառասնամեայ հասակում։ 1440 թւին նա անում էր իր առաջին փորձերը տպագրական գործի տպարւում։

Տպագրութեան համար Գուտենբերգը ընդունեց նոյն եղանակը, որ գործադրւում է գրութեան համար, այսինքն իւրաքանչիւր առանձին տառի համար շինեց փայտից մի չարժական տառ։ Այս փայտեայ տառերը միմեանց կողքի շարելով կատանանք մեր ուզած բառերը, այս բառերից կը կազմենք նախադասութիւններ, նախադասութիւններից արդէն ամբողջ երեսներ ու գրքեր։ Սակայն մի թերի տպագրելուց յետոյ, շարւածքը նորից կը ցրւենք և տառերը նորից կը շարենք այնպէս, որ բոլորովին ուրիշ բառեր ու նախադասութիւններ ստանանք։

Ահա Գուտենբերգի ամբողջ գիւտը։

Գուտենբերգի գիւտից կէս դար յետոյ տպագրական գործը մուտք է գործում և հայերի մէջ։ 1512 թ. Վենետիկում Յակոբ անունով մի մարդու ձեռքով տպագրւում է առաջին հայերէն գիրքը — «Պարզատոմար» — օրացոյցը։ 1513 թւին նոյն տառերով և նոյն տպարանական նշանով

տպագրում են չորս գիրք, որոնցից մէկի յիշատակարանում ասւած է, որ գործը կատարւել է «Մեղաւոր Յակոբի» ձեռքով: Սա եղած բոլոր այն տեղեկութիւնները, որոնք վերաբերում են հայոց անդրանիկ տպագրչին: Սրանից յետոյ հրատարակում հայերէն գիրք չի երեւում մինչև 1565 թ.: Այս թւականին Աբգար Դպիրի ձեռքով, դարձեալ Վենետիկում տպւում է «Սաղմոսը»: Աբգար Դպրի մասին մեզ պատմութիւնը սրոշ մանրամասնութիւններ է հաղորդում: Միքայէլ կաթողիկոսը այլևս անկարող լինելով դիմանալ պարսկական բռնութիւններին և հարատահարութիւններին, Էջմիածնից հեռանում է Սեբաստիա: Այստեղ տղապետների ժողով է գումարում խորհելու Էջմիածնի վիճակի մասին: Ժողովը որոշում է Աբ-

Աբգար Դպիր

գար Դպիրին Աղէքսանդր քահանայի հետ միասին ուղարկել Հռոմ Պապի մօտ, որպէսզի վերջինս հայերին ազատէ պարսիկների հալածանքներից: Աբգարի հետ գնում է և իր որդի Սուլթանշահը: Աբգար իր հետ տանում է միւռոն, սակի խաչ, օրհնեալ մատանի և Թէոդորոս վկայի նշխարները պատրի ընծայելու: երկու տարուայ ճանապարհորդութիւնից յետոյ հասնում է Հռոմ և մատուցանում պապին ազերսագրի հետ և տարած ընծաները:

Սուլթանշահ

Պապը սիրալիր ընդունելութիւն է ցոյց տալիս պատւիրակներին և հայոց ս. Լուսաւորիչի եկեղեցին շնորհում է իբրև հիւրանոց: Խոստանում է օգնել հայերին, և թէ հայ եկեղեցին ննջարկի պաշտպան գերիշխանութեան:

Արգար յարմար առիթից օգտւելով, մտածում է վաղուց իր կազմած ծրագիրն իրագործել, այն է՝ տպագրել հայերէն գիրք և 1565 թ. տպագրում է «Խառնափնթուր» անունով տոմարը և մի «Սաղմոս»:

1568-ին Արգար իր տպարանական բոլոր պարագաներով գնում է Պոլիս: Գլխէլի թաղում, Ս. Նիկողոս եկեղեցում կազմակերպում է իր տպարանը և տպագրում է Տօնացոյց, Տաղարան, Ժամագիրք, Պատարագամատոյց և Մաշտոց:

Դրամներում
Իրգուր Դալի տպա-

1569 թ. Արգարը Պոլսից անցնում է Էջմիածին Միքայէլ կաթողիկոսի մօտ: Անա եղած բոլոր տեղեկութիւնները Արգարի մասին: Ծակրից յետոյ Արգար համարւում է երկրորդ հայ տպագրիչը, որն ունէր իր առանձին տպարանական նշանագրոշմը:

1584 թւականին յիշւում է Յովհաննէս Տէրվենցի, Ամիր կամ Տիգրանակերտ քաղաքից իր որդի Խաչատուրի հետ:

Յովհաննէս Տէրվենցին յիշեալ թւականին գալով Հռոմ, յանձնաժողով է Արգարի որդի Սուլթանշահի հետ և նրա ընկերակցութեամբ 1854 թւականին տպագրում է Դրիգորեան Տոմարը:

Ցսվ. Տէրվենցի եւ իր որդի Խաչատուր
Երրորդ տպագրիչ

Յովհաննէս Տէրվենցին համարւում է երրորդ տպագրիչը: Մինուհետև երկար ժամանակ, մինչև 17-րդ դարը հայոց տպագրական գործը գրեթէ անշարժ գրութեան մէջ է գտնւում: 1640 թ. Ջուղայի Մինասփերկիչ վանքի առաջնորդ Խաչատուր վ. Կեսարացին նոյն վանքում հիմնում է տպարան և տպագրում է «Հարանց վարք» անունով գիրքը: Տպարանական գործը ուսումնասիրելու համար մի վարդապետ է ուղարկում Իտալիա: Վերջինս խիստ դժւարութիւնների է հանդիպում կաթոլիկների կողմից: Սակայն չը

Նայած այդ արգելքներին, կարողանում է տառերը պատրաստել և ուղարկել Ջուղա, որտեղ բաւական երկար ժամանակ տպարանը պահպանւում է և շարունակում իր հրատարակութիւնները։

1655 թ. Էջմիածնի Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսը կամենալով հայերէն տպագրական գործը զարգացնել, Մատթէոս Ծորեցի դպրին ուղարկում է եւրոպա տպարանական գործը ուսումնասիրելու համար։ Սա գնում է Իտալիա և նոյն արգելքներին հանդիպում կաթոլիկ հոգեւորականների կողմից։ Ծորեցին տեսնելով, որ Իտալիայում յարմարութիւններ չկան, մտածում է այլ տեղ տրանել հայ տպագրութեան համար նպատակաւոր ընտրելով։ Նա գնում է Հոլանդիայի Ամստերդամ քաղաքը, որտեղ նոյնպէս զարգացած էր հայ վաճառականութիւնը։ Այստեղ հիմնում է տպարան և գրքեր տպագրում։ Ծորեցու մահուանից յետոյ գործը անցնում է Ջուղայեցի Ստեփո անունով վաճառականի ձեռքը։ Վերջինս հրատիրում է իր եղբօրը, Ոսկան վարդապետին, որը մեծ աշխատութեամբ առաջ է տանում տպագրական գործը. առաջին անգամ տպագրում է Աստուածաշունչը։

Ոսկան վարդապետը իր տպարանը տեղափոխում է Իտալիայի Լիվոռնու քաղաքը, այնտեղից

էլ Փրանսիայի Մարսէլ, սակայն 1685 թուականին փակւում է։

Նորից տպագրական գործը կենդրոնանում է Ամստերդամում, ուր լինում են բուսական հրատարակութիւններ։ Այսպէս 17-րդ դարի երկրորդ կէսում թէ Ամստերդամում, թէ Վենետիկում և թէ Հռոմում միաժամանակ հայերէն գրքեր են հրատարակւում և տպտ այտտեղերից տարածւում հայերի մէջ։

Մխիթար Սեբաստացի

18-դ դարում, 1717 թ. սկսած տպարանական գործը առանձին թափով առաջ է գնում Իտալիայում, ուր Ս. Ղազարի կրդում հաստատւում է Մխիթարեան Միաբանութիւնը Մխիթար Սեբաստացու նախաձեռնութեամբ։ Այստեղ հիմնւում են իրենց սեփական տպարանը, որտեղից դուրս են գալիս աշքի ընկնող հայկական հրատարակութիւններ։

1774 թ. կրօնական վէճերի պատճառով նոյն միաբանութեան մի մասը բաժանւում և հաստատւում է Աւստրիայի Տրեստ քաղաքում. նրանց հովանաւորում էր կայսրուհի Մարիա Թերեզա: Տրիեստում Մխիթարեանները հիմնեցին իրենց տպարանը:

1715—1741 թուականը տպագրական գործը դարգանում է նաև Պօլսում: 1719 թ. Յովհաննէս Կոլոտ՝ Ղրիմայակերի հետ Պօլսի Գրիգոր պարի տպարանից լոյս է ընծայում Ձեներ Գլակի առաջին տպագրութիւնը:

Ե. Ք. Շահաբեան

1770 թ. Հուղայից գաղթած հայ վաճառականներից Յակոբ Շահամիրեան Մադրաս քաղաքում բաց է անում տպարան և հրատարակում է իր ինքնուրոյն աշխատութիւնները: 1789 թ. յիշեալ տպարանը փակելուց յետոյ Յարութիւն քահ. Շմաւոնեան հիմնում է նոր տպարան և հրատարակում հայերէն գրքեր: 1794 թ. նա իր սեփական տպարանում հրատարակում է հայերէն առաջին լրագիրը՝ «Ազդարար»:

1763 թ. Սիմէօն Երեանցի կաթողիկոսը առաջին անգամ հիմնից Էջմիածնում տպարան և թղթի գործարան, որի համար երուսաղէմից վարպետներ բերել ուեց: Թղթի գործարանը յաջողութիւն չունեցաւ, իսկ տպարանը շարունակեց:

1770 թ. Յովսէփ արքեպիսկոպոս Ջրպետեանի ջանքերով Գրիգոր Խալդարեան Պետերբուրգում բաց է անում տպարան:

Ե. արք. Աղաթեան

1780 թ. նոյն տպարանը Յովսէփ արքեպիսկոպոս գնում է և տեղափոխում Նոր Նախիջեան իր հիմնած ս. Խաչ վանքը, ուր բացւեց նաև դպրոց: Այս տպարանը գործեց մինչև 1794 թուականը: Այնուհետև փոխադրուեց Աստրախան, որ-

տեղ եղաւ և անդրանիկ տպարանը:

Հայ տպագրութեան իսկական արդպացումը սկսում է XIX դարից: Զարգանում է կեանքը և տպագրական մամուլը գործում է տեմպային ևոանդով: Այս շրջանում գարձեալ առաջին տեղը բռնում է Վենետիկը, ուր տպարգական գործը փայլուն յառաջդիմութիւն է առնում, հրատարակւում են մի շարք նշանաւոր գրքեր: 1843 թւից սկսում է հրատարակել «Բագդասէդ» տպագիրը: Նշանաւոր տեղ է բռնում և Վիէննայի տպարանը, որ 1811 թ. Տրիեստից փոխադրւեց այստեղ: Նշանաւոր կէնդրոն է հանդիսանում նաև Պարիզը, ուր 1850 թւին սկսում է գրական շարժուձ: Այստեղ հիմնում է Սամուէլ Մուրադ Մուրադեանի նուիրարերութեամբ նրա անուան պարոցը: Փարիզում

Սամուէլ Մուրադ

ձանիկ Աբամեան պատրաստել է տալիս նոր ձևի գեղեցիկ տառեր և այդ տառերով է լինում տպագրութիւնը: Աբամեան իր տպարանը նախ տեղափոխեց Մարսէլ, ապա Պոլիս, ուր մնաց մինչև մահը – 1871 թուականը: Պոլսում տպարանական գործը ասպիճանաբար զարգացու որտեղից պարբերաբար հրատարակւեցին պանազան լրագրներ:

Խրիմեան Հայրիկ

Կ. Պոլսից դուրս նշանաւոր կէնդրոն է հանդիսանում Զմիւռնիան: Այստեղ 1830 թ. վերջերում բողոքական մի անձնաերներ բաց են անում տպարան և հրատարակում են «Զահեմարան Պիտանի Գիտելեաց» հանդէսը: Այստեղ է հրատարակում Ղուկաս Պալատադեանի գեկավարութեամբ — «Ընշալոյս Աբարատեան Թերթը»:

1855 թւին Խրիմեան (վարդապետ) Հայրիկը Պօղոս Օտեանի աջակցութեամբ Կ. Պոլսում

հիմնում է տպարան և տպագրում է «Ուրծի Վասպուրական» թերթը: 1858 թվին դարձեալ նոյն Օշականի աջակցութեամբ տպարանը տեղափոխում է Վանի Վարագայ վանքը, որով Դուտաեներբերգի գիւտից յետոյ առաջին անգամ բացւում է Հայաստանում տպարան, նաև պիշերոթիկ վարժարան: Ուրծի Վասպուրականի պատմիչուց յետոյ որոշ ժամանակ Վանում գործում էր տպարանը:

Ս. Ուրծի Վասպուրական

Դուտաեանում, բացի Ամերիայի տպարանից, XIX դարի կէսերում Պետերբուրգում գոյութիւն ունէր և տպագործ Յովհաննիսեանի տպարանը: Այս տպարանը ապա գնում է Լազարեան ճեմարանը և տեղափոխում Մոսկուա: Այնուհետև Պետերբուրգում ամենաշատ հայերէն գրքերի հրատարակութիւնները շատանում են: Ռափայէլ Պատկանեան ևս հիմնում է սեփական տպարան և

60-ական թուականների սկզբներում մի շարք հրատարակութիւններ է անում, որոնց թւում և «Հիւսիս» շաբաթաթերթը: Այնուհետև այստեղ աստիճանաբար զարգանում է տպարանական գործը: Ուելի լայն չափեր է ընդունում տպագրական գործը Մոսկւայում. բացի Լազարեան ճեմարանի տպարանից ուրիշ տպարաններ ևս տպագրում էին հայերէն գրքեր: Այժմ Մոսկւայում յայտնի են Բարխուդարեանի և Աւետիքեանի հայ տպարանները:

Ց. Խալիպեան

Խալիպեան դպր. հիմն.

Թէոդոսիան և Բօսաովը նոյնպէս տպարանական գործում որոշ դեր են ունեցել ժամանակում: Գաբրիել վ. Այվազեանի օրով բացւեց Թէոդոսիայում Խալիպեան դպրոցը, այստեղ էր հրատարակւում «Մասեաց Աղաւնի» թերթը: Բօսաովում գործում էր Տէր Ըրբահամեանի տպարանը: Թիֆլիսում տպարանական գործի սկիզբը գնում է Գէորգ Ուրծրունեին, Գրիգոր Ուրծրունու որդը. նա Ամատերդա-

մում հայերէն տառերի մայրեր է դնում և նիւթում ներսիսեան դպրոցին. Ներսէս Աշտարակեցու օրով բացւում է առաջին տպարանը: Ապա տասիճանարար զարգանալով տպարանները բազմանում են և այսօր պատկառելի դիմաբոլ է հանդիսանում նրանց թիւը: Այստեղ է կենդրոնացած մեր մատուռ կեանքը, այստեղ են հրատարակւում ըստ մեծի մասին մեր պարբերական հրատարակութիւնները և գրքերը:

Նշանաւոր տեղ է գրաւում նաև էջմիածնի տպարանը: Ապա գաւառական քաղաքներն ևս տասիճանարար բաց են անում իրենց տպարանները, որոնց մէջ այսօր աչքի ընկնող տեղ են բռնում Ալէքսանդրապօլը, Երևանը, Շուշին և այլն:

1512—1912 թուականը ներկայանում է հայ մտքի զարգացման մեծ գարնէշրջանը. 400 տարի է հայ տառերով. հայ տպարաններում լոյս աշխարհ են հանւում հայ մտքի արտադրութիւնները, և ահա այս 400 տարւայ յաղթանակն է, որ հայը տօնում է:

Ընդունված գրականութիւն.—«Ցիշատակարան» Ը. և Բ. գիրք Ս. Զաւդարեանի «Պատմական գրոյցներ» Տէր-Միքելեանի. «Հայոց տառերի գիւտը» Ն. Յարութիւնեանի. «Հայ գրքի տօնը» Էօթ:

ՀԱՏԸՆՏԻՐ ՄՏՔԵՐ

—Աշխարհի հիմնական չարիքը այն է, որ Աստուած քիչ փող է ստեղծել:

—Ամենախորին ճշմարտութիւնը բղխում է ամենախորին սիրուց:

—Մարդիկ առանց սրտի յիմար են: Որովհետև մաքերը չէ թէ գլխից են բղխում, այլ սրտից:

—Ո՛վ աստուածներ, ես չեմ խնդրում ձեզ թողնել ինձ երիտասարդութիւնը, բայց թողէք ինձ նրա առաքինութիւնները. անշահ և անկեղծ ցաւումը, անշահ և անկեղծ արցունքը:

—Կեանքը խառնում է մեզ որպէս խաղաթղթեր և միայն պատահարար,—այն էլ ոչ երկար ժամանակով, մենք ընկնում ենք մեր տեղը:

—Կեանքի իմաստը գեղեցկութեան և նպատակներին ձգտելու ուժի մէջ է, և պէտք է որ կեանքի իւրաքանչիւր մի վայրկեան ունենայ իր վսեմ դիտաւորութիւնը:

—Կեանքը շատ պարզ է դրած, կամ մանրին կռծիր, կամ տղմի մէջ ընկիր:

—Պէտք է դիտենալ, թէ ինչպէս վատ են պրսում մարդիկ և ինչպէս լաւ կարող էին ապ-

րել նրանք, եթէ որ աւելի խելօք լինէին և աւելի յարգէին մէկ մէկու իրաւունքները։

—Մարդիկ չեն ապրում, այլ չափում—կշռում են և գրա վրայ հիմնում իրենց ամբողջ կեանքը։

—Լաւը նոյնպէս քիչ է, ինչպէս գեղեցիկը սակաւ է։

—Կենդանի մարդը չպէտք է ամենևին յիշէ այն մասին, թէ կայ մահ, որ սպասում է իրեն։

—Պատահում է, որ և կեղտի մէջ մարդ ապրում է, և այն էլ աւելի մաքուր, քան նա, որ ապրեշումի մէջ պճնւած է։

—Ով ուրիշի գրութեան է նայում, գոհ չէ իր գրութիւնից։

—Դժբախտութիւնը այնքան կարևորութիւն ունի, որքան տանք նրան։

—Ծմարդի (միլիէննէթի) կամուրջից մի անցնի, թող հեղեղը քիչ տանի, աղէտի հովանոց մի մանի, թող առւծը քիչ պատառէ։

—Պատառուրը մի լաւսող օրէնք է. իսկ օրէնքը համր պատառուր։

—Մարդիկ իրար համար են ստեղծւած. ուրեմն ուղիր նրանց և կամ համբերի նրանց։

———

Սէրը

—Սէրը ամենաքաղցր և լաւագոյն բարոյագէտն է։ Պղատոն

—Սէրը աւելի պատնութիւն ունի, քան քաղցրութիւն։ Օվիդոս

—Սէրը յափող կրակ է, որքան չուտ վառւի և չուտ այրի, այնքան չուտ կմարի։ Ա. Բիբար

—Սէրը կրակի կնմանի, որքան ծածկւի, այնքան կպիմանայ։ Դիւպիւի

—Սիրեցէք, կեանքի մէջ լաւ բան այս կայ միայն։ Ժ. Սանճ

—Սէր! անծին ցանկութիւն! հոգի բնութեան! գոյութեան անսպառ սկիզբ! գերագոյն զօրութիւն, որ ամեն բան կարող է անել։ Իւլճոն

—Սիրահարւած լինելու համար մէկին ցանկիմանալը նոյնն է, թէ հիւանդանալու համար մէկին ցանկիմանալ։ Դիւրլո

—Սէրը ամուսնութիւնից աւելի հաճելի է այն պատճառով, որ վէպերը պատմութիւնից աւելի գործալի են։ Շամֆոր

—Չը կայ նոյնքան չար մէկը, որին սէր առաքինութեան տասծու չը փոխէ։ Պղատոն

———

Ծղրիտական աչք

— Դան առիթներ՝ որոնց մէջ իր հօր դէմ ան-պատկառ դանուող որդուն մի կերպով կարելի է Ներել, բայց եթէ որևէ առիթի մէջ տղան իր պարտաւորած յարգանքը մոռանալու չափ կը տմարդանայ իր մօրը առջև, որը նրան իր արգանդի մէջ է կրել, իր կաթով սնուցել՝ և տարիներ ինքն իրեն մոռացել է նրանով զբաղելու համար, այդ տղան տալերու անարժան է հրէշի նման:

Ժ. Ժ. Ռուսսօ

— Մարդը ամենից աւելի իր տարփուհուն է սիրում, և ամենից լաւ իր կնոջը: Թէև տարփուհին ամենից աւելի և կինը ամենից լաւ՝ սակայն մայրը միշտ է սիրւում:

Ժ. Պրեֆւսէճ

Մայրական աչք

— Բարի մայրը զարմանում է իր զաւակները զարմացնելու համար, ինչպէս որ տղային իր տամոքսի մէջ փոփկացնում է զարմի հատիկը, որով իր ձագերին սնուցանել է ուզում:

Ժ. Ժ. Ռուսսօ

— Բնութիւնը՝ բոլոր էակների պահպանութիւնը մայրական սիրուն է յանձնել և մայրերի վարձա-

տրութիւնը տպահովելու համար նրան նոյն իսկ այս անուշ զգացումի հաճոյքների և վշտերի մէջ է դրել:

Շանֆօր

— Մայրական աչերը միակ երանութիւնն է, որ յաւետ ամեն խոստումներից չատ բարձր է:

Տիկին դը Ֆրսնօ

— Այս աշխարհի մէջ մայրն է միակ ստուածը՝ որ ուրացող չունի:

Է. Լրկուվէ

— Ըարերչագործութեան բոլոր կենդանիների մէջ, շնից սկսած մինչև կինը, մայրական սիրտը միշտ վսեմ մի բան է:

Ա. Դիւմա

Հայրական աչք

— Մարդս ամեն տեսակ մոլութիւններ ունի, և ամենից տրիւնուչտ մոլորութիւնները ցոյց է տալիս իր նմաններին, բայց իր զաւակների համար գրեթէ երբէք մոլորութիւն չունի, որովհետև մարդկային սեռի պահպանութիւնը ապահովել ուզելով նախատեսող բնութիւնը հայրական սէրը նրա սրտի մէջ խորունկ տրմատացրել է և այս զգացումը ոչ թէ մի առաքինութիւն է՝ այլ անդիմադրելի մի բնազդում է ասել:

Տիեր

Սիրտ

— Կնոջ սիրտը մի անգունդ է, որի յատակը ոչ ոք չէ տեսել։ Տիկ. Ռիկոպոնի

— Սիրոյ անզգայ եղող սիրտը առաջին անասունը եղած է։ Մէրսիէ

— Կնոջ սիրտը երկնքի մէկ մասն է, բայց երկնքի նման էլ գիշեր ցերեկ փոխուում է։ Բայրոն

— Կնոջ սիրտը նման է այն տեսակ ծառերին, որոնք իրենց սպեղանին միայն այն ժամանակ դուրս են տալիս, երբ երկաթով խոցած են։ Շատոբրիան

Դէղեցկութիւն

— Դէղեցկութիւնը ուրիշի համար պատրաստուած մի հարստութիւն է։ Պիրոն

— Իր գէղեցկութիւնը մեծ արժանիքի տեղ դնող կինը յայտնում է, թէ աւելի մեծ արժանիք չունի։ Օր. Լեսբիւս

— Դէղեցկութիւնը այն հոտերին է նման, որոնց ներգործութիւնը կարճատև է, սովորելուն պէս հոտը չես առնի։ Տիկ. Լամբեր

— Դէղեցիկ կինը աչքերի արբայութիւն է, հագու գժոխքը և քսակի քաւարանն է։ Պոպ

ԿՂՈՋ ՊԱՏԻԺԸ

Երբ Ասւած պապան երկնքէն յոգնած,
Դրախտի շուրջը այցի էր ելած,
Տեսաւ նախամարդն, որ ծառի մը տակ,
Դիտութեան ծառի հեչատնքին գիտակ,
Գլուխը գրած՝ գերկը եւայի,
Կողի պէս, աւաղ, շուրջը կը նայի։

Ցանկարծ բարկացաւ և ձայնով կերկեր,
Դուշեց Ադամին.—«Ասկից ետքը կեր
Ձակտիդ քրտինքով՝ քու հացըդ չոփ չոր,
Քրտինքովդ թրջէ կարծրութիւնն անոր,
Տանջուէ ու լաց, և միշտ թափառէ,
Մահուան քրտինքով քու հացըդ ճաքէ»։

Եւ խօսքը ուղղելով Ադամին կնկան,
Ըսաւ ահարկու ձայնով մը զուժկան.
—«Պէտք է որ դուն ալ չարչարուես նոյնպէս,
Ու պահէ մը ետք գոռաց վերջապէս.
—«Որպէսզի դուն ալ տառապես, եւա,
Քօրսէն գործածէ, ու յաւէտ հեռա»...

Սրաչեայ

ԳՐԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Գրալուծութիւն կոչուում է այն նոր գիտութիւնը, որով կարելի է մէկին ճանաչել իր գրից։

Գրերը կարելի է բաժանել երկու կարգի։

1. Անկիւնաւոր տառեր։ 2. Կլորաձեւ կամ բոլորաձեւ տառեր։

Անկիւնաւոր այն տառերն են, որոնք իրենց ձևերի մէջ անկիւն են կազմում, իսկ կլորաձեւ նրանք են, որոնք իրենց այլևայլ ձևերով անկիւն չեն կազմում։

Անկիւնաւոր տառեր, որոնք տասջ են ծրուած, աշխուժութեան, արագաշարժութեան նշան են։

Կոր տառերը նշանակում են համոյսխօսութիւն և անդորր, չը յոգնեցնող կեանք սիրտ։

Առաջ ծռուած տառերը—գլխաւորապէս փափաղներից և յոյզերից կառավարուած։

Անկիւնաւոր տառերը, որոնք կոր տառի հետքեր ունին—համոյսխօսութիւն։

Կոկիկ, միօրինակ գիր—մեթոտաւոր, պատշ, ճաշակի տէր, վեհանձն։

Ուղիղ գծեր — յարատևութիւն, նկարագրի տոկունութիւն, կամքի ոյժ։

Սւերաւոր տառեր—յոյսառ և ազգու, բնական գործադրական կարողութիւն, պերճանքի սէր և լաւ ապրելու փափագ։

Խառնակ գիր — խնայողութեան պակասութիւն և անկարգապահ։

Լաւ չտեպաւորուած տառեր — փոփոխամիտ, հեհակայոտ, տեսանող, գործնական կեանքի մէջ մէթոտների պակաս, կենդրոնացնելու կարողութեան պակաս։

Անկիւնաւոր եւ կոր տառերով գրուածք—գործունեայ, արագաշարժ, ներքին ոյժ, դիւրակցողութեան սէր։

Նուրբ գրեր—հանդարտ և համեստ ճաշակ, ազնուութիւն։

Շեղակ եւ անուռոց տառեր—աշխոյժ, անհամբեր, կենսալից, ինքնատիպ։

Տողեր, որոնք դէպի ներքեւ են ծռուում—իր ծրագրների և նպատակների մէջ յաւահատուելու թուլութիւն։

Տողեր, որոնք դէպի վեր են ծռուում—փառասէր և յուսալից։

Մանր գիր—կրթուած, ընդունակ, խոհուն, անձնավստահ, հանդարտ բնաւորութիւն։

Դանդաղ գրուածք—յամառ, նախայաթակ, նիւթական հաճոյքների սէր։

Մխիթար Թէրխանեան

ԶԻԱՐԺԱԼԻՔ

1.

Մի մարդ ձի պիտի գնէր վաճառողը առաջարկեց, որ ձիու պայտերի վրայ քանի մեխ որ կայ, նախ նրանց առաջինի համար միայն մի կոպէկ վճարէ, երկրորդ մեխի համար վճարէ նախորդ մեխի համար վճարածի կրկնակին և այսպէս շարունակ ու միշտ նախորդ մեխի համար վճարածի կրկնակին։

— Այս ինչ լաւ բան է, ասաց գնողը և ուրախութեամբ ընդունեց վաճառողի առաջարկը։

Ձիու պայտերի վրայ 32 մեխ կար. քանի րուբլի վճարեց գնողը։

2.

Ես ծնուել եմ սեպտեմբերի 6-ին, իսկ այս տարի ես տօնեցի իմ ծնունդը օգոստոսի 6-ին, բայց ի նկատի ունեցէք, որ ես տօնում եմ ոչ թէ իմ ծննդեան տարելիցը, այլ հակառակ օրեակը։ Ես քանի տարեկան եմ։

3.

Քոյր ու եղբայր թուղթ էին խաղում. քոյրը տարաւ 15 կոպ., որով իր փողերը կրկնակի ա-

ւելացաւ եղբօր փողերից։ Խաղից յետոյ վերջնական հաշուից երևաց, որ եղբայրը տարել է քրոջից 15 կ, այն ժամանակ նրա փողերը 3 անգամ աւելի էր, քան քրոջ փողերը։ Ի՞նչքան փող ունէին երեքաքանչիւրը խաղի սկզբին։

4.

16 պրնձէ 5 կոպէկանոց ունէր կարգ այնպէս դարսել, որ ամեն կարգում լինի չորս հատ 5 կոպէկանոց։

5.

Հինգ տատ է, դրանցից սկզբի երկուսը ամեն մշեցու պատասխանն է, այդ պատասխանի վերջին մի տատ աւելացրած. ամեն մարդու, մանաւանդ երեխաների սիրելի զբաղմունքն է. բակերից մի տատ պակասեցրած՝ ամեն մարդու համար անհրաժեշտ գործածելիք է, գերջին երկուսից ամեն մարդ ունի, իսկ ամբողջը ամենքի սիրած պտուղն է։

ՎԻՃԱԿԱԽԱՂ

8	3	7
1	9	5
6	4	2

ՀԱՐՑԵՐ

Ա. Ե՞րբ կհաւանիմ նպատակիս:
Բ. Սիրե՞մ է նա ինձ:
Գ. Սկսի՞մ մտածած գործը:
Դ. Անձնուիրութիւնս երբ կվերջանայ:
Ե. Ապահո՞վ պատասխանի:
Զ. Ամուսնանա՞մ թէ ոչ:
Է. Գնարժանի՞մ երբևէ:
Ը. Խօսք առի՞մ թէ ոչ:
Թ. Ո՞ւմմէ ինձ վնաս կհասնի:

ԹԱՆԱԼԻ

Ընտրեցէք հարցերէն որը կամենաք և մըտքերդ պահեցէք նրա ձախ կողմում գտնւած տառը: Քառակուսիների մէջ մատով նշանակեցէք որևէ թւանշան (աւելի լաւ է աչքերդ խփած), ապա պատասխանների մէջ գտէք մաքում պահած տառի համապատասխան սիւնակը և այնտեղ կարդացէք ձեր նշանակած թւանշանի դէմ գրւած պատասխանը:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա.

1. Ձեռ չտուով:
2. Ծերաթեանդ ժամանակ, որ այլևս պէտք չէ:
3. Հոգու արիւթիւն չունիս. չես հաւանի:
4. Երբէք:
5. Այս տարի:
6. Երբ խմիչքին մնաս բարև տանս:
7. Երբ ամուսնացած ես, եթէ ամուսնացած ես, երբ 7 որդի ունենաս:
8. Ձեռ հետու ես. սակայն աշխատիր և մի վհատիր:
9. Կհաւանիս, եթէ քեզ գոպել կարողանաս:

Ռ.

1. Ոչ, քեզ խաբում է։
2. Մեր ուժից ես պահանջում։
3. Այս, անկեղծ սիրով։
4. Քեզ պաշտում է։
5. Առաջինը չես, վերջինն էլ չես լինելու։
6. Քեզ նման այլանդակին սիրել կարելի է։
7. Սիրում է խելագարելու չափ։
8. Վտանգաւոր անձն է, մի հաւատա՛։
9. Մինչև քեզ սիրանալը։

Պ.

1. Ոչ, քո այժերից և խելքից բարձր է։
2. Սկսելը գործի կէսն է, սկսիր։
3. Անվախ սկսիր։
4. Ծաերից վախեցողը ցորեն չպիտի ցանէ. սկսիր։
5. Լաւ կանես հեռու մնաս. քո բանը չէ։
6. Եթէ գժւարութիւններին պիտանալու ես, բռնկսիր։
7. Անպայման, մեծ աջողութիւն է խոստանում։
8. Դու գործի մարդ չես. լաւ կանես սուս մնաս։
9. Սկսիր, շատ մեծ յաջողութիւն է խոստանում։

Ռ.

1. Շատ չուտով, էլի պիտացիր։
2. «Որ ձախէ, տար ծախէ» առածի իմաստը լաւ ըմբռնիր։

3. Կեանքիդ հետ։
4. Փոխիր գործիդ ձևը և հալալ եղիր։
5. Դիմացիր, պիտի յաղթես։
6. Պատճառը քո մէջն է, քեզնից է կախուած։
7. Վատնելուն բան կդիմանա՞յ։
8. Այս տարի, միամիտ գործիդ հետևիր։
9. Շատ չուտով, բայց փոփոխական կլինի

Ե.

1. Ոչ, մերժուած է խնդիրդ։
2. Սպասէ և պիտի փաշմանես։
3. Այս. պատուաւոր անձի հետ գործ ունիս։
4. Անպայման, զրական է պատասխանը։
5. Պարապ ժամանակ մի կորցնէ, կուբ է։
6. Ընհամարեր մի լինի սպասէ։
7. Բոլորովին կուբ է. մի սպասիր։
8. Համբերութիւնը կեանք է. սպասիր։
9. Ո՛չ, ո՛չ, ո՛չ։

Զ

1. Կեանքի պահանջն այդ է, այո՛։
2. Ոչ, կմնասես։
3. Այո, միայն առանց հարստութեան ակնկալութեան։
4. Թան չէ, այմեն մարդու բան չէ։
5. Կաշւած ես, այո՛, և բախտաւոր կլինես։

6. Թույլ ես, կեանքի կուին չես դիմանայ։
7. Այո՛, ուշացնես, կփոշմանես։
8. Ընհատատարմութեամբ կվարձատրես։
9. Ամուսնութիւնը պատուհան չիրիմն է։

Է.

1. Այո՛, անուանի հարուստ կը դառնաս։
2. Հարստութիւնը փողի մէջ մի որոնիր, այլ ազնուութեան։
3. 12 որդով հարուստ կլինես։
4. Ունեցածդ էլ կը կորցնես, եթէ այդ մասին շատ մտածես։
5. Հարուստները երանի են տալիս քեզ
6. Այո՛, եթէ վիճակախաղի տոմս ունենաս։
7. Ստուած քեզ հոգևոր չը կորցնէ, մարմնաւորը նոյայ կերթայ։
8 Մեր ջրաղացը ապա ով պիտի ապա։
9. Անպատճառ և շատ շուտով։

Ը.

1. Վա՜յ քեզ, կորած ես։
2. Տուր, չես փոշմանի։
3. Հեռո՛ւ, ոչ առաջինն ես, ոչ վերջինը։
4. Ինչքան ուզում ես խօսք տուր, նա որ առնողը չէ։

5. Եթէ ուզում ես դժբախտանալ, տուր։
6. Խօսք տուր և բախտաւոր կլինես։
7. Ազգաւութեան մի նայիր, ապագայ լաւ կը լինի։
8. Դեռ քիչ էլ սպասէ, գուցէ դու ինքդ հրաժարուես։
9. Մի ուշացնի, բաւատ է սպասում քեզ։

Թ.

1. Քեզանից։
2. Քո մեծամտութիւնից։
3. Քո «ես»-ից։
4. Քո ամբարտաւանութիւնից։
5. Ոչ ոքից։
6. Քո ամենամօտիկ բարեկամից։
7. Որին դու շատ լաւութիւն ես արել։
8. Քո բարկութիւնից։
9. Քո ամենամօտիկ ընկերից։

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԸ

ԲԹՈՒՄԻՑ — ԹԻՓԼԻՍ — ԲԱԳՈՒ

Կայարանները	Երկարությունը վերստ	Տոմսակների գները II կարգ Ր.	Կ.	III կարգ Ր.	Կ.	10 ֆն. բազաժի կին Ր.	Կ.
Բաթում							
Չաքվա	13	0	27	0	20	0	75
Կօբուլետ	22	0	48	0	33	1	27
Նօվծաների	37	0	80	0	56	2	13
Սուփսա	51	1	23	0	77	2	94
Ջումաթի	59	1	48	0	90	3	45
Լանչխութի	70	1	53	0	70	4	09
Նիգոթիի	76	2	65	1	16	4	43
Մաջախօ .	90	2	95	1	35	5	18
Սամտրեաի	98	2	45	1	49	5	70
Կապիտանաթի	110	2	40	1	65	6	33
Մուխրան	118	3	40	1	77	6	79
Բիօն	127	3	76	1	92	7	36
Ագամեթի	134	3	91	2	01	7	71
Սվիրի	143	3	78	2	16	8	28
Կվիրիլի	155	4	36	2	34	8	97
Ջորապան	159	4	45	2	39	9	15
Չերուլի	168	4	57	2	48	9	66
Ռեկօգոլի	177	4	69	2	57	10	18
Մարելիսի	186	4	—	2	66	10	70

Մալիտա	192	3	90	2	73	11	70
Սիպա	199	4	90	2	80	11	50
Վարվարինօ	207	4	30	2	87	11	91
Միխայլ·վօ	214	4	20	2	95	12	37
Գօմի	225	4	34	3	05	12	94
Կարելի	239	4	53	3	19	13	75
Սկրա	248	4	76	3	29	14	32
Գօրի	256	4	76	3	36	14	82
Գրակալի	269	4	94	3	50	15	53
Դասալի	281	5	34	3	62	16	22
Քսանակա	296	5	28	3	76	17	02
Մցխետա	307	5	80	4	05	17	25
Ուռաղա	317	5	70	4	05	17	25
ԹԻՓԼԻՍ	327	5	60	4	30	18	75
Նաւթուղուղ	333			4	30	18	75
Եղ-Թաղա	347	6	00	4	30	18	75
Գարա Թափա	352	6	00	4	55	20	25
Կարաեազ	363	6	50	4	55	20	25
Բէյուկ-Քեասիք	374	6	00	4	55	20	25
Սօղիտա Բիւլ·	384	6	60	4	80	21	75
Սալօգլի	392	6	75	4	80	21	75
Պօյլի	401	6	90	5	00	23	25
Ձաքարլի	409	6	75	5	00	23	25
Ագսթափա	415	6	90	5	00	23	25
Թաթլու	424	7	10	5	00	23	25
Թօուղ	434	7	20	5	20	24	75
Գօվլեար	446	7	10	5	20	24	75
Չեղամ	459	7	50	5	40	26	25
Գօլլար	472	7	50	5	40	26	25
Ջամքօր	481	7	80	5	60	27	75
Ալարաշլի	491	7	80	5	60	27	75
Գանձակ	503	8	10	5	80	29	25

Զազալի	512	8	10	5	80	29	25
Դալ-Մամեալի	519	8	10	5	80	29	25
Կօբուկ-Չայ	532	8	40	6	00	30	75
Գեբան	542	8	40	6	00	30	75
Մինգեչաուէր	554	8	50	6	00	30	75
Եվլախ	566	8	85	6	20	32	25
Մալահ	579	8	85	6	20	32	25
Լեաքի	589	8	80	6	20	32	25
Ալիքենդ	600	8	20	6	40	33	75
Ուչաքի	608	9	00	6	40	33	75
Բագուչետ	620	9	20	6	40	33	75
Մուսուլի	633	9	30	6	60	35	25
Կարաքուչախ	642	9	55	6	60	35	25
Քիւրդամիր	652	9	60	6	80	36	75
Քեփրաք	663	9	60	6	80	36	75
Սաղիրի	675	9	60	6	80	36	75
Փադար	686	9	60	7	00	38	25
Ղարասու	698	9	90	7	00	38	25
Մուղան	711	10	20	7	20	39	75
Հաջիկաբուլ	722	10	20	7	20	39	75
Պիբսօղաա	731	10	20	7	20	39	75
Նաւագի	740	10	20	7	20	39	75
Ղրաուլաղ	750	10	50	7	40	41	25
Եյաթ	763	10	50	7	40	41	25
Դուվանի	776	10	80	7	40	41	25
Մանդաչալ	785	10	80	7	60	42	75
Խվալինսկի	789	10	80	7	60	42	75
Փուլթա	809	10	80	7	60	42	75
Էյրաթ	817	11	10	7	80	44	25
Բալաֆարի	828	11	10	7	80	44	25
Քիչլի	835	11	10	7	80	44	25
ԲԱԳՈՒ	841	11	10	7	80	44	25

ՄԻԽԱՅԼՈՎԻՑ — ԲՕՐԾՕՄ — ԲԱԿՈՒՐԻՆՆ

	ժ.	ր.	կ.	ր.	կ.	կոպ.
ՄԻԽԱՅԼՕՎՕ						
Սուխարաով	12	0	32	0	18	0 69
ԲՕՐԾՕՄ	27	0	74	0	42	1 61
Գաբա	10	0	27	0	15	0 58
Ցագվիրի	14	0	41	0	23	0 87
Ցոմի	17	0	48	0	27	1 04
Նիկոլաեվ	24	0	63	0	26	1 38
Սակռչավի	17	0	76	0	44	1 67
ԲԱԿՈՒՐԻՆՆԻ	26	0	98	0	56	2 13

ԹԻՓԼԻՍԻՑ — ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ — ԵՐԵՒԱՆ

ԹԻՓԼԻՍ							
Նաւթուղուղ	6	0	27	0	9	0	35
Ծօղանլուղ	12	0	77	0	20	0	75
Ջանդար	34	1	35	0	51	1	96
Աշադա Սեբալ	47	1	86	0	71	2	71
Սադախլօ	61	2	25	0	93	3	57
Ղզլթալա	85	2	25	1	29	4	95
Սանահին	103	2	57	1	55	5	93
Կալագերան	119	2	75	1	79	6	85
Ձահալի	126	2	73	1	91	7	31
Ղարաքիլիսա	141	3	47	2	12	8	11
Համամլի	159	3	78	2	40	9	20
Նալբանդլի	169	3	84	2	49	9	72
Ղալթախչի	178	3	84	2	58	10	24
Ջաֆուռ	187	4	01	2	67	10	76
ԱԼԷՔՍԱՆԴՐՊՕԼ	206	4	01	2	86	11	85
Ազին	230	4	54	3	10	13	23
ԵՆԻ	248	4	94	3	29	15	32

	վ.	ր.	կ.	ր.	կ.	կոպ.
Ըլագեազ	266	5	30	3	46	15 30
Պարարուբուն	282	5	66	3	63	16 28
Ըրաքս	295	5	96	3	76	17 02
Սարդարապատ	305	6	17	4	05	17 25
Էջմիածին	324	6	61	4	05	17 25
Ալավանյու	338	6	86	4	30	18 75
ԵՐԵՒԱՆ	351	7	13	4	55	30 25

ԱԼԻՔՈՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ — ԿԱՐՍ

ԱԼԻՔՈՍԱՆ-ԴՐԱՊՕԼ						
Կարաքալ	21	0	27	0	53	1 27
Բաշ-Քեադիք.	51	0	68	0	42	2 36
Մադրա	58	1	08	0	98	3 0
ԿԱՐՍ	71	1	56	1	08	4 14

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Ամեն մի գնացքի համար վաճառում են տոմսակները, որոնց վերայ նշանակած են՝ թէ քանի օր այժ ունեն. օրը հաշւում է կէս գիշերից մինչև հետեւեալ կէս գիշերը:

2. Ճանապարհին որևէ կայարանում իջնելու դէպքում պէտք է տոմսակը ներկայացնել նոյն կայարանի նաչալնիկին, որ կնիք խփէ. դուրս գալուց առաջ ևս նոյն տեղում պէտք է կնիք խփել տալ:

3. Ամեն մի ճանապարհորդ առանց վարձի 1 փութ բագաժ տալու իրաւունք ունի, իսկ երեխաները 20 ֆունտ: Եթէ բագաժը պակասել է կամ վնասուել, իսկոյն բագաժն առանալիս պիտի իմաց տալ կայարանի վարչութեանը, իսկ եթէ կորել է, պէտք է կորուսաը պահանջել գրաւոր յայտարարութիւն տալով մի ամսւայ ընթացքում, հաշւած ուղարկած օրից:

4. Մինչև 5 տարեկան երեխաներից երկաթուղու տոմսակ չի պահանջւում. 5—10 տարեկաններից պահանջւում է տոմսի $^1/_4$ գինը: 10 ից աւելի հասակաւորների համար պահանջւում է լրիւ տոմսակ:

ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Սեւ ծով։ *Տոմսակների արժէքը «Русское Общество»-ի նաւերի համար։*

Բաժանումից մինչև	Առանց ուտելիքի				Ֆ. 1 բաժ.
	Պատ-մար-դատար նաւերի վրայ		Ընդարձակ-մարդատար նաւ		
	II կ.	III կ.	II կ.	III կ.	
	ր. կ.	ր. կ.	ր. կ.	ր. կ.	կ.
Օդեսա	19 85	9 80	15 90	5 50	60
Եւպատորիա	14 80	7 20	11 85	4 50	55
Սեւաստոպոլ	14 —	7 20	11 20	3 90	55
Եալթա	14 —	7 10	11 20	3 60	50
Ալուշթա	13 75	7 —	11 —	3 40	50
Սուդակ	13 75	7 —	11 —	3 40	50
Թէոդոսիա	13 —	6 40	10 40	3 40	50
Կերչ	11 —	5 20	8 80	3 —	40
Նովոռոս.	8 70	4 —	7 —	3 25	25
Անապա	11 —	5 20	8 80	3 —	40
Գուրզի	8 70	4 —	7 —	2 25	25
Տուապսէ	6 —	3 20	4 80	2 —	25
Սոչի	6 —	3 20	4 80	2 —	25
Ադլէր	6 —	3 20	4 80	2 —	25
Գուդաուտա	5 60	2 40	4 50	2 —	15
Նոր-Աֆոն	5 10	2 —	4 10	1 30	25
Սուխում	3 25	1 20	2 60	1 —	20
Օչեմչիր	2 35	— 20	1 90	1 —	20
Փոթի	1 50	— 80	1 20	— 50	20

ՍԵՒ ԾՈՎ

«Россійское Общество»-ի նաւերը բաժումից հնուանում են՝ երեքշաբթի և ուրբաթ օրերը երեկոյեան ժամի 5 ին։

Բաժանումից մինչև	II կարգ		III կարգ		1 փ. բաց.
	Ընդհ.	Կեռաս	Ընդհ.	Կեռաս	Դ.
Փոթի	1	40	—	50	10
Օչեմչիր	2	40	—	75	13
Սուխում	2	60	1	—	14
Նոր-Աֆոն	3	40	1	30	15
Գուդաուտա	3	60	1	40	18
Սոչի	3	—	1	60	20
Տուապսէ	4	50	2	—	20
Նովոռոս.	5	—	2	25	23
Անապա	6	—	2	75	25
Կերչ	6	50	3	—	25
Թէոդոսիա	7	50	3	40	30
Սուդակ	7	50	3	40	30
Եալթա	8	—	3	60	35
Սեւաստոպոլ	8	50	3	90	35
Օդեսա	12	—	5	50	45

ԱՄՊԻՑ ԾՈՎ

«Кавказъ и Меркурій» ընկերութեան նաւերը պատրաստ են անում Բագուից Դերբենդ, Պետրովսկ, Աստրախան: Ընկերութիւնն ընդունում է ապրանքներ՝ մինչև Վոլգա, Կասպից ծովի նաւահանգիստները՝ Ընդրկասպեան երկիրը և Մոսկուա, Վարշաւա, Լոձ և Բօստով հասցնելու համար

Ընկերութեան գրասենեակը Թիֆլիսում:

ԴԼՊԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ֆրանսիական «Мессажери Маритимъ» ընկերութեան չոգենաւերը կանոնաւոր կերպով երթևեկում են Լօնդոնի, Մարսելի և Բաթումի միջև: Լօնդոն գնացող նաւերը մտնում են նաև Գ. Պօլիս, Մարսել և Հաւր: Նոյն ընկերութեան նաւերով կարելի է գնալ և Եաֆֆա, Ալէքսանդրիա, Հնդկաստան, Չինաստան, Եաւոնիա, Մադագասկար, Եաւա, Ցէյլոն, Աւստրալիա, Զանգիբար, Նոր-Գալեդոնիա և այլն:

Գործակալութիւնը Թիֆլիսում:

Ֆրանսիական «Н. Паке и К-о» ընկերութեան չոգենաւերը կանոնաւոր երթևեկում են ուղղակի Բաթումից—Մարսել և հակառակը Մարսելից Բաթում: Նաւերը մեկնում են իւրաքանչիւր երկու շաբաթը մի անգամ Բաթումից չորեքշաբթի օրը ժամը 4-ին, ճանապարհին մտնում են Տրապիզոն, Սամսոն և Գ. Պօլիս:

Նման տեսակ տեղեկութիւններ ստանալ կարելի է Թիֆլիսում — Արմանեանկի բակար, Գաւառինների փոր Մանթաշեանի №№ 119, 120 գործակալ Ս. Կիլիկեկեանից:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI- 1922
ԵՐԵՎԱՆ, Աբեղյանի
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Պաստային ճանապարհներ Կովկասում

Ախալցխայից — Բօրժօմ	. .	50¼ վերստ
Ախալցխայից — Ախալքալակ	.	66¼ »
Ախալքալակից — Ալէքսանդրապօլ		89½ »
Ծրդահանից — Օլթի	. . .	124¾ »
Ախալցխայից — Ծրդահան	. .	72 »
Ախալցխայից — Բաթում	. .	147 »
Ալէքսանդրապօլից — Ջաբիչաո	.	52½ »
Բաշնորաշէնից — Նախիջևան	.	62½ »
Բաթումից — Ծրդահան	. .	150 »
Դաւձակից — Հաջիքանդ	. .	27¼ »
Դիլիջանից — Երևան	. .	62¾ »
Դիլիջանից — Ղարաքիլիսա	.	19½ »
Երևանից — Բաշնորաշէն	. .	89¾ »
Երևանից — Էջմիածին	. .	18½ »
Թիֆլիսից — Ջալալ Օղլի	. .	135 »
Հաջիկաբուլից — Մալեան	. .	101½ »
Ղարաքիլիսից — Ջալալ-Օղլի	.	51½ »
Կարսից — Մարիղամիշ	. .	58¾ »
Կարսից — Կաղզուան	. . .	781⅓ »
Կարսից — Օլթի	. . .	102 »
Նախիջևանից — Օրդուբադ	.	74½ »
Ջուլֆայից — Խանկենդ	. . .	11 »
Մարիղամիշից — Ղարազուրդան	.	37¾ »

Մալիանից — Լէնքօրան	. .	118 »
Ելինսկից — Նոր-Բայազէտ	. .	33 »
Էջմիածնից — Աշտարակ	. .	20 »
Նուխայից — Ջամախի	. . .	158½ »
Նուխայից — Գօգաշէն	. .	97 »
Եւլախից — Ջուլֆի	. . .	104½ »
Թիֆլիսից — Մանգլիս	. .	76¾ »

Պաստային ճանապ. վճարը

Թիֆլիսից Վլադիկավկազ տանող (ռազմավրացական) ճանապարհին պէտք է վճարել մէկ ձիու և մէկ վերստի համար 4 կոպէկ։

Թիֆլիսի, Գանձակի, Բագուի, Փոթիայի և Երևանի նահանգներում, Դաղստանի և Գաբսի շրջաններում և Զաքաթալայի վիճակում (օկրուգ) մէկ ձիու եւ մէկ վերստի համար պէտք է վճարել 3 կոպէկ։

Բայց այս վճարից ամեն մի ճանապարհորդ վճարելու է իրեն պետական տուրք՝ իւրաքանչիւր ձիու պրոգոնի համար 10 կոպէկ։

1913 ԹՒԻ ԽԱՒԱՐՈՒՄՆԵՐԸ

Մարտի 9-ին Լուսնի լրիւ խաւարումն, սկիզբը 1 ժ. 23 ր. ցերեկւայ, տեսանելի Ամերիկայում Խաղաղ օվկիանոսում և Ասիայում։

Մարտի 24-ին Արեւի մասնակի խաւարում սկիզբը 6 ժ. 25 ր. երեկոյեան, տեսանելի Հիւս. Ամերիկայում, Ատլանդեան օվկ. հիւս. մասում Գամշատկայից հիւսիս, Սառուցեալ օվկ.։

Օգոստոսի 18—19 Արեւի մասնակի խաւարում սկիզբը 10 ժ. 32 ր. երեկոյեան. տեսանելի Դրենլանդիայում և Հիւս. Ամերիկայում։

Սեպտեմբերի 2-ին Լուսնի լրիւ խաւարումն, սկիզբը 1 ժ 33 ր. ցերեկւայ, տեսանելի Ամերիկայում, Խաղաղ օվկ. և Ասիայում։

Սեպտեմբերի 17-ին Արեւի մասնակի խաւարում, սկիզբը 5 ժ. 26 ր. գիշերւայ, տեսանելի Հար. Ամերիկայում և Ատլանդեան օվկ. հարաւային մասում։

«Ճիրակ» 1913 թ. ծոցի օրացոյցը խմբագրելիս, ի միջի այլոց օգտուել ենք ինչպէս ռուսական, նոյնպէս և արտասահմանեան հայ պանդան նոյնանուն հրատարակութիւններից և այլ աղբիւրներից։

գիտնականները, Սեռական փոփոխութիւն Ամսի օգտակարութիւնը։

9 Գաղտնական. — Քրիստոսի պատկերի նշ պագիրը։

10. Բանասիրական. — Գառաւ է մեր հո գունդը Ե. Պալեանի, Նոր կեանք Բալտուրվի երգահմինների հովիտը Կրումմախերի, Կինը, Ո աւելի բարձր, հրէական լեգենդ, Քարե Տօլստոյի, Բարիքարը, Օսկար Ուալդի, Դեմ — Դայա, Կուպրինի։

11. Գեանքի ծրագրներ — Զարթօնութիւն, Ե ղութիւն, Գաղտնապահութիւն, Ամերիկայ հաւատամքը, Հոչակաւոր քարոզիչ Բեչըի նե մակը։

12. Հաւընակիր մարքեր. — Սէրը, Որդիակա Հայրական, Հայրական սէր, Սիրտ, Գեղեցկ թիւն, Կնոջ պատիժը։

13. Զարճալիք — Գիճակախաղ, Հանելուկնե

14. Երկաթուղիք, Նաւեր և փոստային կա քեր։

15. Արեւի և Լուսնի խաւարումները։

16. **Առաճախ յատկութ.** — Հայ տառե 1500 և Հայ տպագրութեան 400 ամ յոբելեանը գործիչների պատկերներով։

ՎԱՃԱՌՈՒՄ Է

1913 թ.

„ՇՐԱՆ“

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ

ԳՈՐԾԻՉՆԵՐԻ 250 ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻ ՋԼՋ տպագրված են բազմաթիւ նոր առակներ, առածներ, ժողովրդական և ազգային հրզներ, բժշկական և առողջապահական գիտելիքներ, գիտական նորութիւններ, մաքեր, աֆօրիզմներ, պատմական դէպքեր, հետաքրքրական թւեր ու տեղեկութիւններ և այլն։

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Դիմել՝ Александропол

Գումարով գնողների

Զգիմել Ըէքսանդրապօլում

059
Q-97

6654

2002

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0032815